Կարող եք առանց նախնական հաստատման այցելել Ցանցից դուրս գործող Medi-Cal մատակարարների որոշակի Ձգայուն խնամքի համար: Ձգայուն խնամքի մասին մանրամասների համար կարդացեք Գլուխ 3-ի («Ինչպես խնամք ստանալ») «Ձգայուն խնամք» վերնագիրը:

Ձեզ նախնական հաստատում հարկավոր չէ Շտապ օգնության խնամքի համար, նույնիսկ եթե այցելում եք Ցանցից դուրս գործող Medi-Cal մատակարարների: Եթե ԱՄՆ-ից դուրս եք, Կանադայից կամ Մեքսիկայից բացի այլ երկրներում, և Շտապ օգնության խնամքի կարիք ունեք, Kaiser Permanente-ն չի ապահովագրի Ձեր խնամքը:

Երբ Միացյալ Նահանգներում եք, մենք կապահովագրենք Հրատապ խնամքի ծառայությունները: Եթե Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքում եք, Ցանցից դուրս գործող Հրատապ խնամքի մատակարարի այցելելու համար Ձեզ նախնական հաստատում է հարկավոր: Ձեզ նախնական հաստատում հարկավոր չէ Հրատապ խնամքի համար, եթե Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքից դուրս եք: Եթե Միացյալ Նահանգներից դուրս եք, Հրատապ խնամքի ծառայությունները **չեն** ապահովագրվում, և պետք է ինքներդ վճարեք Ձեր խնամքի համար: Ձեր Բնակության տարածքը կամ Kaiser Permanente Հյուսիսային Կալիֆորնիայի տարածքն է, կամ Kaiser Permanente Հարավային Կալիֆորնիայի տարածքը: Ձեր Kaiser Permanente ID քարտի վրա նշված է Ձեր Բնակության տարածքը:



Ձանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Ձանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Երկարաժամկետ խնամք և Ծախսերի համամասնական բաժին ունեցող Անդամներ

Հնարավոր է, որ պետք է ամեն ամիս վճարեք ծախսերի համամասնական բաժին Ձեր երկարատև խնամքի ծառայությունների համար: Ձեր ծախսերի համամասնական բաժնի չափը կախված է Ձեր եկամտից և ռեսուրսներից: Ամեն ամիս Դուք ինքներդ եք վճարելու Ձեր առողջապահական խնամքի հաշիվների համար, ներառյալ, սակայն չսահմանափակվելով՝ Երկարաժամկետ օժանդակության ծառայություններով (Long-term Support Services, «LTSS»), մինչև Ձեր վճարված գումարը հավասարվի Ձեր ծախսերի համամասնական բաժնին: Դրանից հետո մենք կապահովագրենք Ձեր երկարաժամկետ խնամքն այդ ամսվա համար: Դուք չեք ապահովագրվի Առողջապահական ծրագրի կողմից, մինչև չվճարեք երկարաժամկետ խնամքի Ձեր ամբողջ ծախսաբաժինն այդ ամսվա համար:

Ինչպես է վճարվում մատակարարը

Kaiser Permanente-ն մատակարարներին վճարում է հետևյալ կերպ՝

- Մարդաքանակով վճարում
 - Մենք վճարվում ենք որոշ մատակարարներին ֆիքսված գումար յուրաքանչյուր ամիս յուրաքանչյուր Անդամի համար: Սա կոչվում է մարդաքանակով վճարում: Մենք համագործակցում ենք մատակարարների հետ՝ որոշելու վճարման գումարը
- FFS վճարումներ
 - Որոշ մատակարարներ խնամք են տրամադրում Medi-Cal-ի Անդամներին, որից հետո հաշիվ են ուղարկում մեզ մատուցված ծառայությունների համար: Սա կոչվում է FFS վճարում: Մենք համագործակցում ենք մատակարարների հետ՝ որոշելու, թե ինչքան վճարել յուրաքանչյուր ծառայության դիմաց

Որպեսզի իմանաք, թե ինչպես ենք վճարում մատակարարներին, այցելեք մեր **kp.org** կայքը կամ զանգահարեք **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով:

Եթե Դուք հաշիվ եք ստանում առողջապահական խնամքի մատակարարից

Ապահովագրված ծառայություններն այն ծառայություններն են, որոնց համար մենք պենք է վճարենք: Եթե հաշիվ ստանաք Ապահովագրված ծառայության համար, մի վճարեք այն: Անմիջապես զանգահարեք մեր Անդամների ծառայությունների բաժին՝ **1-855-839-7613 (TTY 711)**:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Եթե դեղատնից հաշիվ եք ստանում դեղատոմսային դեղի, պարագաների կամ հավելումների համար, գանգահարեք Medi-Cal Rx Հաճախորդների սպասարկում՝ **1-800-977-2273** հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY օգտագործողները կարող են գանգահարել **711**, երկուշաբթիից ուրբաթ, 8 a.m.-ից 5 p.m.: Դուք կարող եք այցելել Medi-Cal Rx կայք՝ <https://medi-calrx.dhcs.ca.gov/home/> (անգլերեն):

Մեզանից ծախսերի փոխհատուցում խնդրել

Եթե դուք վճարել եք այն ծառայությունների համար, որոնք արդեն իսկ ստացել եք, ապա հետևյալ **քոչոք** պահանջների բավարարման դեպքում կարող եք փոխհատուցման (վճարման) իրավունք ունենալ.

- Ձեր կողմից ստացված ծառայությունն Ապահովագրված ծառայություն է, որի վճարման համար պատասխանատվությունը մենք ենք կրում: Մենք Ձեզ չենք փոխհատուցի այն ծառայության համար, որը մենք չենք ապահովագրում:
- Դուք ստացել եք Ապահովագրված ծառայությունը, երբ դարձել եք Medi-Cal-ի իրավասու Անդամ:
- Դուք խնդրում եք հետ վճարվել Ապահովագրված ծառայությունը ստանալու օրվանից մեկ տարվա ընթացքում:
- Դուք ցույց եք տալիս ապացույց, որ վճարել եք Ապահովագրված ծառայության համար, օրինակ՝ մանրամասն անդորրագիր մատակարարից:
- Դուք ստացել եք Ապահովագրված ծառայությունը մեր Medi-Cal մատակարարների ցանցում գրանցված Medi-Cal-ի մատակարարի կողմից: Դուք կարող եք չբավարարել այս պայմանին, եթե ստացել եք Շտապ օգնություն, ընտանիքի պլանավորման ծառայություններ կամ մեկ այլ ծառայություն, որը Medi-Cal-ը թույլ է տալիս ցանցից դուրս մատակարարներին կատարել առանց նախնական հաստատման (նախօրոք լիազորման):
- Եթե Ապահովագրված ծառայությունը սովորաբար պահանջում է նախնական հաստատում (նախօրոք լիազորում), Դուք պետք է ապացույց ներկայացնեք մատակարարից, որը ցույց է տալիս ապահովագրված ծառայության բժշկական կարիքը:

Եթե Դուք չեք բավարարում վերը նշված պայմաններից որևէ մեկը, մենք Ձեզ հետ չենք վճարի: Մենք Ձեզ հետ չենք վճարի, եթե.

- Դուք խնդրել և ստացել եք ծառայություններ, որոնք չեն ապահովագրվում Medi-Cal-ի կողմից, ինչպիսիք են՝ կոսմետիկ ծառայությունները



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

- Ծառայությունը մեզ համար Ապահովագրված ծառայությունն չէ
- Դուք ունեք չբավարարված Medi-Cal Ծախսաբաժին
- Դուք դիմել եք այնպիսի բժշկի, ով չի ընդունում Medi-Cal, և ստորագրել եք մի ձև, որտեղ ասվում էր, որ այնուամենայնիվ ցանկանում եք շարունակել այցը և ինքներդ եք վճարելու ծառայությունների համար
- Դուք ունեք Medicare Մաս D համավճարների Medicare ծրագրի կողմից ապահովագրվող դեղատոմսերի համար

Մենք Ձեզ նամակով կտեղեկացնենք, եթե փոխհատուցելու ենք Ձեզ: Փոխհատուցմը կտրամադրվի հայցը ստանալուց հետո 45 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե մենք որոշենք, որ Դուք չեք որակավորվում փոխհատուցման համար, մենք Ձեզ նամակ կուղարկենք, որը կոչվում է Գործողության ծանուցում (Notice of Action, «NOA»), որը կպարունակի բողոքարկման Ձեր իրավունքների մասին տեղեկություններ:

Ինչպես հայց ներկայացնել

Եթե վճարել եք Ձեր ստացված ծառայությունների համար, կարող եք հայց ներկայացնել: Օգտագործեք պահանջագրի ձևը և գրավոր տեղեկացրեք մեզ, թե ինչու եք ստիպված եղել վճարել: Զանգահարեք **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով և խնդրեք հայցի ձևը: Մենք կուսուժասիրենք Ձեր պահանջագիրը և կորոշենք, թե արդյոք կարող եք հետ ստանալ Ձեր գումարը:

Դուք կարող եք հայց ներկայացնել (վճարման/փոխհատուցման խնդրանք)`

- Այցելելով **kp.org** կայքը (անգլերեն), լրացնելով էլեկտրոնային ձևը և ներբեռնելով սատարող փաստաթղթերը,
- Փոստով ուղարկելով թղթե ձևը, որը կարող եք գտնել **kp.org** կայքում (անգլերեն) կամ զանգահարելով Անդամների ծառայություններ, կամ
- Եթե չեք կարող գտնել էլեկտրոնային ձևը (կամ թղթե ձևը), փոստով ուղարկելով նվազագույն տեղեկատվությունը, որը մեզ հարկավոր է հայցը մշակելու համար`
 - Անդամի/հիվանդի անունը և Բժշկական/առողջական արձանագրության համարը
 - Ծառայությունները ստանալու ամսաթիվը
 - Որտեղ եք ստացել Ծառայությունները
 - Ով է մատուցել Ծառայությունները
 - Ինչու եք կարծում, որ մենք պետք է վճարենք Ծառայությունների համար



2 | Ձեր առողջապահական ծրագրի վերաբերյալ

- Հաշվի պատճենը, բժշկական արձանագրությունն այս Ծառայությունների համար և անդորրագիրը, եթե վճարել եք Ծառայությունների համար:

Փոստային հասցեն հայցն ուղարկելու համար Kaiser Permanente Հյուսիսային Կալիֆորնիայում՝

Kaiser Permanente
Claims Administration - NCAL
P.O. Box 12923
Oakland, CA 94604-2923

Փոստային հասցեն հայցն ուղարկելու համար Kaiser Permanente Հարավային Կալիֆորնիայում՝

Kaiser Permanente
Claims Administration - SCAL
P.O. Box 7004
Downey, CA 90242-7004



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613**
(TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ,
շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

3. Ինչպես խնամք ստանալ

Ինչպես առողջապահական խնամքի ծառայություններ ստանալ

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՐԴԱԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐՊԵՍՁԻ ԻՄԱՆԱՔ,
ԹԵ ՈՒՄԻՑ ԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ՈՐ ԽՄԲԻՑ ԿԱՐԵԼԻ Է ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ԽՆԱՄՔ ՍՏԱՆԱԼ

Ապահովագրության տեղեկությունն այս Անդամի ձեռնարկում կիրառելի է այն դեպքում, երբ առողջապահական խնամքի ծառայություններ եք ստանում Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքում: Ձեր Բնակության տարածքը Kaiser Permanente տարածքն է, որտեղ որ Դուք անդամագրված եք: Դա կամ մեր Հյուսիսային Կալիֆորնիայի տարածքն է, կամ Հարավային Կալիֆորնիայի տարածքը: Ձեր Kaiser Permanente ինքնության (Identification, ID) քարտի վրա նշված է Ձեր Բնակության տարածքը: Եթե այցելում եք Կալիֆորնիայի մեկ այլ տարածք, Դուք ապահովագրված եք միայն Շտապ օգնության խնամքի, Հրատապ խնամքի և ընտանիքի պլանավորման ծառայությունների համար, եթե մենք նախապես հաստատենք ծառայությունները Ձեզ համար: Եթե այցելում եք Kaiser Permanente տարածաշրջան Կալիֆորնիայից դուրս, ապա Ձեզ համար կապահովագրվի միայն Շտապ օգնության խնամք կամ Հրատապ խնամք, եթե իհարկե մենք այլ ծառայություններ չհաստատենք Ձեզ համար: Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքում Medi-Cal Ցանցի մատակարարներ գտնելու համար տեսեք մեր մատակարարների ցուցակները kp.org/finddoctors կայքում (անգլերեն) կամ զանգահարեք մեր Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**) հեռախոսահամարով:

Մենք մեր Անդամներին ծառայություններ ենք տրամադրում մեր Medi-Cal Ցանցի մատակարարների միջոցով: Համատեղ ուժերով՝ նրանք Ձեզ բարձրակարգ խնամք են տրամադրում: Երբ Դուք ընտրում եք Kaiser Foundation Health Plan, Inc. որպես Ձեր



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ kp.org (անգլերեն)

կառավարվող խնամքի ծրագիր, Դուք որոշում եք Ձեր խնամքը ստանալ բժշկական խնամքի մեր ծրագրի միջոցով: Պարզելու համար, թե որտեղ են գտնվում մեր Medi-Cal Ցանցի մատակարարները, այցելեք մեր կայքը՝ **kp.org/finddoctors** (անգլերեն): Մանրամասների համար զանգահարեք Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**) հեռախոսահամարով:

Կարող եք սկսել առողջական խնամքի ծառայություններ ստանալ մեր Medi-Cal ծրագրին անդամագրվելու ուժի մեջ մտնելու ամսաթվից: Միշտ Ձեզ մոտ ունեցեք Kaiser Permanente-ի ID քարտը, Medi-Cal-ի Նպաստների նույնականացման քարտը (Benefit Identification Card, «BIC») և որևէ այլ առողջապահական ապահովագրության քարտեր: Երբեք թույլ մի տվեք, որպեսզի մեկ ուրիշն օգտվի Ձեր BIC կամ Kaiser Permanente ID քարտից:

Medi-Cal ապահովագրմամբ նոր Անդամները պետք է առաջնային խնամքի մատակարար (primary care provider, «PCP») ընտրեն, որն աշխատում է մեր Medi-Cal մատակարար ցանցում: Նոր անդամները, որոնք ունեն և Medi-Cal, և մեկ այլ առողջական ապահովագրություն, պարտավոր չեն PCP ընտրել: Սակայն մենք քաջալերում ենք բոլոր Անդամների PCP ընտրել:

Kaiser Permanente Medi-Cal մատակարարների ցանցը բժիշկների, հիվանդանոցների և այլ մատակարարների խումբն է, որն աշխատում է մեզ հետ՝ մեր Անդամներին Ապահովագրված ծառայություններ տրամադրելու համար: Դուք պետք է PCP ընտրեք մեր Անդամը դառնալու օրվանից 30 օրվա ընթացքում: Եթե Դուք PCP չընտրեք, մենք Ձեր փոխարեն կկատարենք ընտրությունը:

Դուք կարող եք Kaiser Permanente-ին կցված Ձեր ընտանիքի բոլոր անդամների համար ընտրել նույն PCP-ին կամ ընտրել տարբեր PCP-ներ, եթե PCP մատչելի է:

Եթե բժիշկ ունեք, որին ցանկանում եք պահպանել, կամ եթե ցանկանում եք նոր PCP ընտրել, Դուք կարող եք փնտրել Ձեր Kaiser Permanente Medi-Cal Մատակարարների հասցեագրքում Medi-Cal մատակարարների ցանցի բոլոր PCP-ի ցուցակը: Medi-Cal Մատակարարների հասցեագրքում կան այլ տեղեկություններ, որոնք կօգնեն Ձեզ ընտրություն կատարել: Եթե Medi-Cal Մատակարարների հասցեագրքի հետ կապված օգնության կարիք ունեք, զանգահարեք **1-855-839-7613** (TTY **711**): Դուք կարող եք գտնել մեր մատակարարների որոնելի հասցեագիրքը **kp.org/finddoctors** կայքում (անգլերեն): Կարող եք ներբեռնել Medi-Cal Մատակարարների հասցեագիրքը մեր կայքից՝ **kp.org/Medi-Cal/documents** (անգլերեն): Մանրամասների համար զանգահարեք Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**):



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

- Հյուսիսային Կալիֆոռնիայում եթե Դուք չեք կարող Ձեզ անհրաժեշտ խնամքը ստանալ Kaiser Permanente-ի Ցանցի մատակարարից, Ձեր PCP-ն պետք է The Permanente Medical Group-ից համաձայնություն խնդրի՝ Ձեզ Ցանցից դուրս գործող Medi-Cal մատակարարի մոտ ուղարկելու համար: Սա կոչվում է Ցանցից դուրս ուղեգիր: Ձեզ հաստատում անհրաժեշտ չէ Ցանցից դուրս գործող Medi-Cal մատակարարի այցելելու համար, որպեսզի ստանաք Ձգայուն խնամք, որը նկարագրված է ստորև այս գլխում՝ «Ձգայուն խնամք» վերնագրի ներքո:
- Հարավային Կալիֆոռնիայում եթե Դուք չեք կարող Ձեզ անհրաժեշտ խնամքը ստանալ Kaiser Permanente-ի Ցանցի մատակարարից, Ձեր PCP-ն պետք է Southern California Permanente Medical Group-ից համաձայնություն խնդրի՝ Ձեզ Ցանցից դուրս գործող Medi-Cal մատակարարի մոտ ուղարկելու համար: Սա կոչվում է Ցանցից դուրս ուղեգիր: Ձեզ հաստատում անհրաժեշտ չէ Ցանցից դուրս գործող Medi-Cal մատակարարի այցելելու համար, որպեսզի ստանաք Ձգայուն խնամք, որը նկարագրված է ստորև այս գլխում՝ «Ձգայուն խնամք» վերնագրի ներքո:

Կարդացեք այս գլուխը մինչև վերջ՝ PCP-ների, Medi-Cal Մատակարարների հասցեագրքի և Medi-Cal մատակարարների ցանցի մասին ավելին իմանալու համար:

Medi-Cal Rx ծրագիրը տրամադրում է ամբուլատոր դեղատոմսային դեղերի ապահովագրում: Մանրամասների համար կարդացեք Գլուխ 4-ի «Այլ Medi-Cal ծրագրեր և ծառայություններ հասվածը»:

Առաջնային խնամքի մատակարար («PCP»)

Ձեր առաջնային խնամքի մատակարարն (PCP) արտոնագրված մատակարար է, որը Ձեզ ծառայություններ է մատուցում Ձեր առողջապահական խնամքի մեծ մասի համար: Ձեր PCP-ն օգնում է Ձեզ ստանալ այլ տեսակի խնամք, եթե դրա կարիքն ունեք: Դուք պետք է PCP ընտրեք մեր Medi-Cal ծրագրին Ձեզ կցելուց հետո 30 օրվա ընթացքում:

Ձեզ հարմար բժիշկ ընտրելու հարցում Ձեզ օգնելու համար Դուք կարող եք ուսումնասիրել մեր բժիշկների առցանց պրոֆիլները kp.org/finddoctors կայքում (անգլերեն): Կարող եք պարզել, թե որ բժիշկներն են նոր հիվանդներ ընդունում, և ընտրել Ձեզ հարմար մեկին:

Չափահասները կարող են PCP ընտրել հետևյալից՝

- Չափահասների բժշկություն/Ներքին հիվանդությունների բժշկություն



Չանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY 711): Չանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ kp.org (անգլերեն)

3 | Ինչպես խնամք ստանալ

- Ընտանեկան բժշկություն
- Մանկաբարձ-գինեկոլոգ մասնագետներ, ում The Permanente Medical Group-ը կամ Southern California Permanente Medical Group-ը նշանակում է որպես PCP-ներ

Մինչև 18 տարեկան երեխաների համար կարող եք Մանկաբուժության/Պատանիների բժշկության կամ Ընտանեկան բժշկության բժիշկ ընտրել որպես Ձեր երեխայի PCP: Ընտանիքի յուրաքանչյուր անդամ կարող է ընտրել իր սեփական անձնական բժշկին: Կախված մատակարարի տեսակից՝ Դուք կկարողանաք ընտրել մեկ PCP Ձեր ամբողջ ընտանիքի համար, ովքեր հանդիսանում են Kaiser Permanente-ի Անդամներ: Եթե ն՛ Medicare-ում, կ՛ Medi-Cal-ում եք, կամ ունեք այլ համապարփակ առողջապահական խնամքի ապահովագրություն, Ձեզ պետք չէ PCP ընտրել: Մակայն մենք քաջալերում ենք Ձեզ անել դա:

Դուք կարող եք նաև որոշել Ձեր առաջնային առողջապահական խնամքը ստանալ Դաշնային որակավորված առողջապահական կենտրոնում (Federally Qualified Health Center, «FQHC»), Հնդկացիների առողջապահական խնամքի մատակարարից (Indian Health Care Provider, «IHCP») կամ Գյուղական առողջապահական կլինիկայում (Rural Health Clinic, «RHC») մեր ցանցում: Կախված մատակարարի տեսակից՝ Դուք կկարողանաք ընտրել մեկ PCP Ձեր ամբողջ ընտանիքի համար, ովքեր հանդիսանում են Kaiser Permanente-ի Անդամներ, եթե PCP-ն մատչելի է:

Նշում. ամերիկացի հնդկացիները կարող են IHCP ընտրել որպես իրենց PCP, նույնիսկ եթե IHCP-ն մեր մատակարար ցանցում չէ:

Եթե Դուք անդամագրվելուց հետո 30 օրվա ընթացքում PCP չընտրեք, մենք ինքներս Ձեզ համար PCP կընտրենք:

Կարող եք ցանկացած պահի և ցանկացած պատճառով տեղափոխվել մեր Medi-Cal մատակարարների ցանցի մեկ այլ մատչելի բժշկի մոտ: Կարող եք ցանկացած պահի փոխել Ձեր բժշկին առցանց՝ **kp.org** կայքում (անգլերեն), կամ կարող եք զանգահարել մեր Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**) հեռախոսահամարով: Եթե ընտրում եք Ձեր PCP-ին The Permanente Medical Group-ից կամ Southern California Permanente Medical group-ից, Ձեր ընտրածը անմիջապես կդառնա Ձեր PCP: Եթե PCP ընտրեք մեկ այլ վայրից, օրինակ FQHC, Ձեր ընտրածն ուժի մեջ կմտնի հաջորդ ամսվա առաջին օրվանից:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Ձեր PCP-ն կանի հետևյալը՝

- Կճանոթանա Ձեր առողջության պատմության և կարիքների հետ
- Կպահի Ձեր առողջությանը վերաբերող գրառումները
- Կտրամադրի անհրաժեշտ կանխարգելիչ և սովորական խնամք
- Անհրաժեշտության դեպքում ուղեգիր կտա (կուղարկի) մասնագետի մոտ
- Անհրաժեշտության դեպքում կկազմակերպի հիվանդանոցային խնամք: Որոշ դեպքերում մասնագետը կարող է հիվանդանոցային խնամք կազմակերպել, եթե դրա կարիքն ունեք

Դուք կարող եք Kaiser Permanente-ի Medi-Cal Մատակարարների ցանցի PCP գտնել Medi-Cal Մատակարարների հասցեագրքից: Medi-Cal Մատակարարների հասցեագիրքը պարունակում է մատակարարների ցանկ, որոնք աշխատում են Kaiser Permanente-ի հետ՝ Ապահովագրված ծառայություններ տրամադրելու համա, ներառյալ՝ IHCP, FQHC և RHC:

Դուք կարող եք գտնել մեր Kaiser Permanente Medi-Cal Մատակարարների որոնելի հասցեագիրքը kp.org/finddoctors կայքում (անգլերեն): Կարող եք նաև խնդրել, որպեսզի Medi-Cal Մատակարարների հասցեագիրքը Ձեզ փոստով ուղարկվի: Զանգահարեք **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով: Կարող եք նաև զանգահարել և պարզել, եթե PCP-ն ցանկանում է Ձեզ՝ որպես նոր անդամ ընդունել:

Բժիշկների և այլ մատակարարների ընտրություն

Լավ կլինի, եթե ընտրեք Ձեր PCP-ին:

Լավ է Վսալ մեկ PCP-ի հետ, որպեսզի նա կարողանա ծանոթանալ Ձեր առողջապահական խնամքի կարիքներին: Եթե ցանկանում եք նոր PCP ընտրել, Դուք կարող եք դա անել որևէ պահի: Դուք կարող եք PCP ընտրել, ով Kaiser Permanente-ի Medi-Cal մատակարարների ցանցում է և նոր հիվանդներ է ընդունում:

Եթե ընտրում եք Ձեր PCP-ին The Permanente Medical Group-ից կամ Southern California Permanente Medical group-ից, Ձեր ընտրածը անմիջապես կդառնա Ձեր PCP: Եթե PCP ընտրեք մեկ այլ վայրից, օրինակ FQHC, Ձեր ընտրածն ուժի մեջ կմտնի հաջորդ ամսվա առաջին օրվանից: PCP ընտրելու կամ փոխելու համար մանրամասների համար զանգահարեք Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ kp.org (անգլերեն)

Մենք կարող ենք փոխել Ձեր PCP-ին, եթե PCP-ն նոր հիվանդներ չի ընդունում, հեռացել է Medi-Cal ցանցից, Ձեր տարիքի հիվանդների չի սպասարկում, կամ եթե այդ PCP-ի հետ կապված որակի չլուծված մտահոգություններ կան: Մենք կամ Ձեր PCP-ն կարող ենք խնդրել Ձեզ նոր PCP գտնել, եթե համաձայն չեք Ձեր PCP-ի հետ, կամ եթե բաց եք թողնում կամ ուշանում ժամադրությունների: Եթե մենք պետք է փոխենք Ձեր PCP-ին, մենք Ձեզ գրավոր կտեղեկացնենք:

Ահա մի քանի բան, որոնց շուրջ պետք է մտացել PCP ընտրելիս.

- PCP-ին բուժո՞ւմ է երեխաների:
- PCP-ին աշխատո՞ւմ է Ծրագրի հաստատության հետ, որը ցանկանում եմ հաճախել:
- PCP-ի գրասենյակը մո՞տ է գտնվում իմ տանը, աշխատավայրին կամ երեխաներիս դպրոցին:
- Բժիշկը խոսո՞ւմ է իմ լեզվով:
- PCP-ի գրասենյակի աշխատանքային ժամերը հարմա՞ր են ինձ համար:

Առողջության սկզբնական ժամադրություն(«IHA»)

Medi-Cal Անդամների համար, որոնք նոր են միանում Kaiser Permanente-ին

Մենք խորհուրդ ենք տալիս, որպեսզի Դուք՝ որպես նոր Medi-Cal Անդամ, այցելեք Ձեր PCP-ին առաջիկա 120 օրվա ընթացքում առողջության սկզբնական ժամադրության (initial health appointment, «IHA») համար: IHA-ի նպատակն է օգնել Ձեր PCP-ին իմանալ Ձեր առողջապահական խնամքի պատմության և կարիքների մասին: Ձեր PCP-ն կարող է Ձեզ հարցեր տալ Ձեր առողջության պատմության մասին կամ խնդրել Ձեզ հարցաշար լրացնել: Ձեր PCP-ն Ձեզ կտեղեկացնի նաև առողջապահական կրթության խորհրդատվության և դասընթացների մասին, որոնք կարող են օգնել Ձեզ:

Եթե Ձեր PCP-ն մի հաստատությունում է, որը The Permanente Medical Group-ի կամ Southern California Permanente Medical Group-ի մաս չէ.

- Երբ Դուք զանգահարեք IHA ժամադրություն նշանակելու համար, տեղեկացրեք հեռախոսին պատասխանող անձին, որ Դուք Kaiser Permanente Medi-Cal Անդամ եք: Տվեք նրանց Ձեր Kaiser Permanente ID համարը:

Ժամադրությանը Ձեզ հետ վերցրեք Ձեր Kaiser Permanente-ի ID քարտը և Ձեր ֆոտո ID-ն: Լավ կլինի, որ Ձեզ հետ վերցնեք Ձեր դեղերի ցանկը և ունեցած հարցերը: Պատրաստ եղեք



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Ձեր PCP-ի հետ քննարկելու Ձեր առողջապահական խնամքի կարիքներն ու մտահոգությունները:

Անպայման զանգահարեք Ձեր PCP-ի գրասենյակ, եթե ժամադրությունից ուշանում եք կամ չեք կարող գնալ ժամադրության:

Medi-Cal Անդամների համար, որոնք նախկինում Kaiser Permanente ապահովագրում են ունեցել

Եթե նոր եք Medi-Cal-ում և Ձեր նախորդ առողջական ապահովագրումը եղել է Kaiser Permanente-ի միջոցով, խնդրում ենք դիմել Ձեր PCP-ին և պարզել, եթե Ձեզ առողջության սկզբնական ժամադրություն («IHA») է հարկավոր: Եթե Ձեր բժշկական արձանագրությունը թարմ է, կարող եք սպասել մինչև Ձեր հաջորդ նշանակված Սովորական խնամքի այցը, որպեսզի լրացուցիչ թարմացումներ անեք Ձեր բժշկական արձանագրությանը:

Հյուսիսային Կալիֆորնիայի անդամներ

Եթե հարցեր ունեք IHA-ի մասին, զանգահարեք խնամքի համակարգողին ներքոնշյալ հեռախոսահամարով Ձեր բնակության վարչաշրջանի համար՝

Հյուսիսային Կալիֆորնիայի վարչաշրջան, որտեղ ապրում եք	Խնամքի համակարգողի հեռախոսահամար, որտեղ պետք է զանգահարեք
Amador, El Dorado, Placer, Sacramento, San Joaquin	Զանգահարեք 1-833-721-6012, երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8:30 a.m.-ից 1 p.m.-ը և 2 p.m.-ից 5 p.m.-ը
Alameda, Contra Costa, Fresno, Kings, Madera, Marin, Mariposa, Napa, San Francisco, San Mateo, Santa Clara, Santa Cruz, Solano, Sonoma, Stanislaus, Sutter, Tulare, Yolo, Yuba	Զանգահարեք 1-833-952-1916, երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8:30 a.m.-ից 1 p.m.-ը և 2 p.m.-ից 5 p.m.-ը

Հարավային Կալիֆորնիայի անդամներ

Եթե հարցեր ունեք IHA-ի մասին, զանգահարեք Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** հեռախոսահամարով:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Սովորական խնամք

Սովորական խնամքը պարբերաբար ստացվող առողջապահական խնամքն է: Այն ներառում է կանխարգելիչ խնամք, որը կոչվում է նաև բարեկեցության խնամք: Այն օգնում է Ձեզ առողջ մնալ և խուսափել հիվանդանալուց: Կանխարգելիչ խնամքը ներառում է ստուգումներ, առողջապահական կրթություն և խորհրդատվություն:

Մենք խորհուրդ ենք տալիս, որ մասնավորապես երեխաները ստանան կանոնավոր սովորական և կանխարգելիչ խնամք: Kaiser Permanente անդամները կարող են ստանալ բոլոր կանխարգելիչ ծառայությունները, որոնք խորհուրդ են տրվում Ամերիկյան Մանկաբուժության ակադեմիայի և Medicare և Medicaid ծառայությունների կենտրոնների կողմից: Այս զննումները ներառում են լսողության և տեսողության զննումներ, որոնք կարող են օգնել երաշխավորել առողջ զարգացում և ուսուցանում: Մանկաբույժների կողմից խորհուրդ տրվող ծառայությունների ցուցակի մասին կարդացեք Մանկաբուժության ամերիկյան ակադեմիայի «Bright Futures» խորհուրդները

https://downloads.aap.org/AAP/PDF/periodicity_schedule.pdf կայքում (անգլերեն):

Սովորական խնամքը նաև ներառում է խնամք, երբ հիվանդ եք: Մենք ապահովագրում ենք Սովորական խնամք Ձեր Medi-Cal Ցանցի մատակարարներից:

Ձեր PCP-ն կանի հետևյալը՝

- Կտրամադրի Սովորական խնամքի մեծ մասը, ներառյալ՝ կանոնավոր ստուգումները, պատվաստումները, բուժումները, դեղատոմսերը և բժշկական խորհուրդները
- Կպահի Ձեր առողջությանը վերաբերող գրառումները
- Անհրաժեշտության դեպքում ուղեգիր կտա (կուղարկի) մասնագետների մոտ
- Կպատվիրի ռենտգեն, մամոգրաֆիա կամ լաբորատոր թեստեր, եթե դրանց կարիքն ունեք



Բնակության տարածք	Ժամադրություն հեռախոսահամար	նշանակելու
Հյուսիսային Կալիֆորնիա	1-866-454-8855 (TTY 711) կամ այցելեք kp.org (անգլերեն)	
Հարավային Կալիֆորնիա	1-833-574-2273 (TTY 711) կամ այցելեք kp.org (անգլերեն)	

Շտապ օգնություն պահանջող դեպքերում զանգահարեք **911** կամ գնացեք մոտակա հիվանդանոց:

Բոլոր Medi-Cal Ցանցի մատակարարները կարող են օգտվել օժանդակ սարքերից և ծառայություններից հաշմանդամություն ունեցող անձանց հետ հաղորդակցվելու համար: Նրանք կարող են նաև հաղորդակցվել Ձեզ հետ այլ լեզվով կամ ձևաչափով: Տեղեկացրեք Ձեր մատակարարին կամ զանգահարեք մեզ և ասեք՝ ինչի կարիքն ունեք:

Մեր կողմից ապահովագրվող և չապահովագրվող առողջապահական խնամքի և ծառայությունների մասին ավելին իմանալու համար ընթերցեք այս Անդամի ձեռնարկի Գլուխ 4-ը («Նպաստներ և ծառայություններ») և Գլուխ 5-ը («Երեխաների և երիտասարդների բարեկեցության խնամք»):

Medi-Cal մատակարարների ցանց

Kaiser Permanente Medi-Cal մատակարարների ցանցը բժիշկների, հիվանդանոցների և այլ մատակարարների խումբն է, որն աշխատում է Kaiser Permanente-ի հետ՝ մեր Անդամների Ապահովագրված ծառայություններ տրամադրելու համար:

Kaiser Foundation Health Plan, Inc.-ը կառավարվող խնամքի առողջապահական ծրագիր է: Երբ Դուք ընտրում եք մեր Medi-Cal ծրագիրը, Դուք որոշում եք Ձեր խնամքը ստանալ բժշկական խնամքի մեր ծրագրի միջոցով: Դուք պետք է ծառայությունների մեծ մասը ստանաք մեր Medi-Cal Ցանցի մատակարարներից: Դուք պետք է Ապահովագրված ծառայությունների մեծ մասը ստանաք մեր Medi-Cal Ցանցի մատակարարներից: Կարող եք գնալ Ցանցից դուրս գործող



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

մատակարարի մոտ առանց ուղեգրի կամ նախնական հաստատման Շտապ օգնության խնամքի համար: Կարող եք նաև գնալ Medi-Cal Ցանցից դուրս գործող մատակարարի մոտ առանց ուղեգրի կամ նախնական հաստատման ընտանիքի պլանավորման ծառայությունների համար: Կարող եք նաև գնալ Ցանցից դուրս գործող մատակարարի մոտ ցանցից դուրս Հրատապ խնամքի համար, երբ Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքից դուրս եք: Բացի այս դեպքերից, Դուք պետք է ուղեգիր կամ նախնական հաստատում ունենաք մյուս բոլոր ոչ ցանցային ծառայությունների համար՝ հակառակ դեպքում դրանք չեն փոխհատուցվի:

Նշում. ամերիկացի հնդկացիները կարող են Հնդկացիների առողջապահական խնամքի մատակարար («IHCP») ընտրել որպես իրենց PCP, նույնիսկ եթե IHCP-ն մեր Medi-Cal մատակարարների ցանցում չէ:

Եթե Ձեր PCP-ն, հիվանդանոցը կամ այլ մատակարարը, բարոյական առարկություն ունի Ձեզ ապահովագրված ծառայություն տրամադրելու հարցում, ինչպես օրինակ՝ ընտանիքի պլանավորում կամ հղիության արհեստական ընդհատում, նրանք կարող են օգնել Ձեզ մեկ այլ Medi-Cal Ցանցի մատակարար գտնել, որը կտարամորթի այս ծառայությունները: Կարող եք նաև զանգահարել Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)** և խնդրել գտնել մեկ այլ Medi-Cal Ցանցի մատակարար: Բարոյական առարկության մասին մանրամասների համար կարդացեք «Բարոյական առարկություն» հատվածն ավելի ուշ այս գլխում:

Medi-Cal Ցանցի մատակարարներ

Ձեր առողջապահական խնամքի կարիքների մեծամասնության համար Դուք կօգտվեք Kaiser Permanente-ի Medi-Cal մատակարարների ցանցից: Դուք կստանաք Սովորական խնամք, ներառյալ կանխարգելիչ խնամք, մեր Medi-Cal Ցանցի մատակարարներից: Դուք կօգտվեք նաև Kaiser Permanente Medi-Cal մատակարարների ցանցից մասնագետների, հիվանդանոցների և այլ մատակարարների ծառայությունների համար:

Medi-Cal Մատակարարների հասցեագրքի պատճենը ստանալու համար զանգահարեք Անդամների ծառայություններ **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով: Դուք կարող եք նաև որոնել Kaiser Permanente Medi-Cal ցանցի մատակարարներին և վայրերը առցանց՝ **kp.org/finddoctors** կայքում (անգլերեն): Կարող եք նաև ներբեռնել Մատակարարների հասցեագրքի պատճենը մեր կայքից՝ **kp.org/Medi-Cal/documents** (անգլերեն):

Medi-Cal Rx Պայմանագրային դեղերի ցանկի պատճենը ստանալու համար զանգահարեք Medi-Cal Rx Հաճախորդների սպասարկում՝ **1-800-977-2273** հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY-ից օգտվողները կարող են զանգահարել **1-800-977-2273** և սեղմել 5, կամ զանգահարել **711**, երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը 8 ա.մ.-ից 5 ք.մ.-ը: Կարող եք նաև այցելել Medi-Cal Rx կայքը՝ **https://medi-calrx.dhcs.ca.gov/home/** (անգլերեն):



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Դուք պետք է մեզանից նախնական հաստատում (նախօրոք լիազորում) ստանաք՝ նախքան Kaiser Permanente Medi-Cal մատակարարների ցանցից դուրս գործող որևէ մատակարարի այցելելը, նույնիսկ եթե նա գտնվում է Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքում, բացառությամբ հետևյալ դեպքերի՝

- Եթե Ձեզ անհրաժեշտ է Շտապ խնամք, զանգահարեք **911** կամ գնացեք մոտակա հիվանդանոց
- Եթե Դուք Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքից դուրս եք և Հրատապ խնամքի կարիք ունեք, այցելեք Հրատապ խնամքի ցանկացած հաստատություն
- Եթե Ձեզ անհրաժեշտ են ընտանիքի պլանավորման ծառայություններ, այցելեք Medi-Cal-ի ցանկացած մատակարարի՝ առանց նախնական հաստատման (նախօրոք լիազորման)
- Եթե ձեզ անհրաժեշտ են հոգեկան առողջության ծառայություններ, կարող եք գնալ Medi-Cal Ցանցի մատակարարի մոտ կամ վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրի մատակարարի մոտ՝ առանց նախնական հաստատման (նախօրոք լիազորման)

Եթե վերոնշյալ դեքերից մեկը Ձեզ կիրառելի չէ, և Դուք նախնական հաստատում (նախօրոք լիազորում) չեք ստանում նախքան Ցանցից դուրս մատակարարից խնամք ստանալը, հնարավոր է, որ պարտավոր լինեք վճարել Ցանցից դուրս մատակարարից ստացված խնամքի համար: Kaiser Permanente-ի մատակարարները, որոնք Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքից դուրս են, համարվում են Ցանցից դուրս գործող մատակարարներ:

Ցանցից դուրս մատակարարներ Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքում

Ցանցից դուրս գործող մատակարարներն այն առողջապահական խնամքի մատակարարներն են, որոնք պայմանագիր չունեն Kaiser Permanente-ի հետ աշխատելու համար:

Մենք պետք է հաստատում տանք Ձեզ, նախքան կայցելեք Ցանցից դուրս գործող մատակարարի Բնակության տարածքի Սպասարկման տարածքում, բացառությամբ հետևյալի՝

- Շտապ օգնության խնամք
- Զգայուն խնամք, ինչպես նկարագրված է այս գլխի «Զգայուն խնամք» վերնագրի տակ



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Բնակության տարածքի Սպասարկման տարածքում Հրատապ խնամքի համար Դուք պետք է այցելեք Kaiser Permanente Medi-Cal Ցանցի մատակարարի: Ձեզ նախնական հաստատում հարկավոր չէ մեր Medi-Cal Ցանցի մատակարարից ստացված Հրատապ խնամքի համար:

Բնակության տարածքի Սպասարկման տարածքում Ցանցից դուրս գործող Medi-Cal մատակարարից ստացված Հրատապ խնամքի համար Ձեզ հաստատում է հարկավոր: Եթե նախնական հաստատում չստանաք, ապա պետք է վճարեք Բնակության տարածքի Սպասարկման տարածքում Ցանցից դուրս գործող Medi-Cal մատակարարից ստացված Հրատապ խնամքի համար: Կարող եք ավելին կարդալ այս գլխում Շտապ օգնության, Հրատապ խնամքի և Զգայուն խնամքի մասին:

Նշում. Եթե ամերիկացի հնդկացի եք կարող եք խնամք ստանալ IHCP-ից մեր մատակարար ցանցից դուրս և առանց ուղեգրի:

Եթե Ձեզ Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ Ապահովագրված ծառայություններ են հարկավոր, որոնք մատչելի չեն Kaiser Permanente Medi-Cal ցանցում, մենք կհաստատենք և ուղեգիր կտրամադրենք Ցանցից դուրս գործող Medi-Cal մատակարարին այցելելու համար, որպեսզի ստանաք այդ ծառայությունները: Եթե մենք Ձեզ ուղեգիր ենք տալիս Ցանցից դուրս գործող Medi-Cal մատակարարի մոտ, մենք կվճարենք Ձեր խնամքի համար:

Ձեր Հրատապ խնամքի մատակարարը կարող է Ձեզ դեղորայք դուրս գրել՝ որպես Հրատապ խնամքի այցի մի մաս: Եթե դեղորայք ստանաք, մենք կապահովագրենք այն՝ որպես Ձեր ապահովագրված Հրատապ խնամք: Եթե Ձեր Հրատապ խնամքի մատակարարը Ձեզ դեղատոմս է տալիս, որ դեղատոմս տանեք այն, ապա այդ նշանակված դեղորայքը կապահովագրվի Medi-Cal Rx-ով: Medi-Cal Rx-ի մասին մանրամասների համար տեսեք «Medi-Cal Rx» վերնագիրը «Այլ Medi-Cal ծրագրեր և ծառայություններ, որոնք ապահովագրված չեն Kaiser Permanente-ի կողմից» հատվածում՝ Գլուխ 4-ում:

Նշում. Եթե ամերիկացի հնդկացի եք կարող եք խնամք ստանալ IHCP-ից մեր մատակարար ցանցից դուրս և առանց ուղեգրի: Ցանցից դուրս IHCP-ը նույնպես կարող է ուղեգրել ամերիկացի հնդկացի անդամներին ցանցի մատակարարի մոտ առանց ուղեգրի ցանցի PCP-ից:

Եթե Ցանցից դուրս ստացվող ծառայությունների հետ կապված օգնության կարիք ունեք, քննարկեք Ձեր PCP-ի հետ կամ զանգահարեք մեր Անդամների ծառայություններ **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով:



Մատակարարներ Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքից դուրս

Սովորական խնամքի հիմնական մասը, ներառյալ կանխարգելիչ խնամքն, ապահովագրված չէ Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքից դուրս: Ընտանիքի պլանավորման ծառայություններն ապահովագրվում են Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքից դուրս, եթե ստանում եք դրանք որակավորված Medi-Cal մատակարարից Կալիֆորնիայում: Ընտանիքի պլանավորման ծառայությունների մասին մանրամասների համար կարդացեք Գլուխ 4-ի «Զգայուն խնամք» վերնագիրն այս Անդամի ձեռնարկում:

Եթե Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքից դուրս եք և խնամքի կարիք ունեք, որը Շտապ օգնություն կամ Հրատապ խնամք չէ, զանգահարեք Kaiser Permanente ID քարտի հետևում նշված հեռախոսահամարով և զրուցեք վկայագրված առողջապահական խնամքի մասնագետի հետ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Ձեր Հրատապ խնամքի մատակարարը կարող է Ձեզ դեղորայք դուրս գրել՝ որպես Հրատապ խնամքի այցի մի մաս: Եթե դեղորայք ստանաք, մենք կապահովագրենք այն՝ որպես Ձեր ապահովագրված Հրատապ խնամք: Եթե Ձեր Հրատապ խնամքի մատակարարը Ձեզ դեղատոմս է տալիս, որ դեղատոմս տանեք այն, ապա այդ նշանակված դեղորայքը կապահովագրվի Medi-Cal Rx-ով: Medi-Cal Rx-ի մասին մանրամասների համար տեսեք «Medi-Cal Rx» վերնագիրը «Այլ Medi-Cal ծրագրեր և ծառայություններ, որոնք ապահովագրված չեն Kaiser Permanente-ի կողմից» հատվածում՝ Գլուխ 4-ում:

Եթե Ձեզ հարկավոր է հրատապ խնամք Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքից դուրս, ունեք, այցելեք հրատապ խնամքի մոտակա հաստատություն: Medi-Cal-ը չի ապահովագրում Հրատապ խնամքի ծառայություններ Միացյալ Նահանգներից դուրս: Եթե Դուք ճամփորդում եք Միացյալ Նահանգների տարածքից դուրս և Հրատապ խնամքի կարիք ունեք, մենք չենք վճարի Ձեր խնամքի համար: Հրատապ խնամքի մասին մանրամասների համար կարդացեք այս գլխի «Հրատապ խնամք» հատվածը:

Շտապ օգնություն պահանջող դեպքերում զանգահարեք **911** կամ գնացեք մոտակա հիվանդանոց: Kaiser Permanente-ն ապահովագրում է Ցանցից դուրս տրամադրվող Շտապ օգնության խնամքը: Եթե Դուք ճամփորդում եք Կանադա կամ Մեքսիկա և հոսպիտալացում պահանջող Շտապ օգնության խնամքի կարիք ունեք, Kaiser Permanente-ն կապահովագրի Ձեր խնամքը: Մենք որևէ այլ ծառայություններ չենք ապահովագրում Կանադայում կամ Մեքսիկայում: Եթե ճամփորդում եք Կանադայի կամ Մեքսիկայի բացի մեկ այլ երկիր և Ձեզ



Շտապ օգնություն, Հրատապ խնամք կամ որևէ այլ առողջական խնամք է հարկավոր, մենք **չենք** ապահովագրի այն:

Եթե վճարում եք հուսալիտալացում պահանջող Շտապ օգնության խնամքի համար Կանադայում կամ Մեքսիկայում, կարող եք խնդրել մեզ Ձեզ հետ վճարել: Ուղարկեք հայցի ձևաթուղթը, և մենք կվերանայենք Ձեր խնդրանքը: Հայց ներկայացնելու մասին մանրամասների համար տեսեք «Խնդրել մեզ հաշիվ վճարել» հատվածը Գլուխ 2-ում:

Եթե մեկ այլ նահանգում եք կամ ԱՄՆ տարածքում, օրինակ՝ American Samoa, Guam, Northern Mariana Islands, Puerto Rico և US Virgin Islands, Դուք ապահովագրված եք Շտապ օգնության խնամքի համար: Ոչ բոլոր հիվանդանոցներն ու բժիշկներ են ընդունում Medicaid (Medi-Cal-ը Medicaid-ի անվանումն է միայն Կալիֆորնիայում): Եթե Ձեզ Շտապ օգնության խնամք է հարկավոր Կալիֆորնիայից դուրս, որքան հնարավոր է շուտ տեղեկացրեք հիվանդանոցը կամ շտապ օգնության բժշկին, որ Medi-Cal ունեք և Kaiser Permanente անդամ եք:

Խնդրեք, որ հիվանդանոցում անեն Ձեր Kaiser Permanente ID քարտի պատճենը: Ասեք հիվանդանոցում և բժիշկներին, որ մեզ հաշիվ ուղարկեն: Եթե մեկ այլ նահանգում ստացված ծառայությունների համար հաշիվ եք ստանում, անմիջապես զանգահարեք մեզ: Մենք կաշխատենք հիվանդանոցի և/կամ բժշկի հետ, որպեսզի վճարենք Ձեր խնամքի համար:

Եթե Կալիֆորնիայից դուրս եք և Ձեզ շտապ անհրաժեշտ է ամբուլատոր դեղատոմսային դեղ ստանալ, խնդրեք, որ դեղատունը զանգահարի Medi-Cal Rx Հաճախորդների սպասարկում՝ **1-800-977-2273** հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Նշում. ամերիկացի հնդկացիները կարող են ծառայություններ ստանալ Ցանցից դուրս IHCP-ներից:

Եթե հարցեր ունեք Ցանցից դուրս գործող Medi-Cal մատակարարների կամ Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքից դուրս մատչելի ծառայությունների վերաբերյալ, զանգահարեք մեր Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**) հեռախոսահամարով:

Ցանցից դուրս մատակարարներ **CCS** իրավասու վիճակների համար

California Children's Services (CCS) ծրագիրը նահանգային ծրագիր է, որը բուժում է 21 տարեկանից ցածր տարիքի երեխաներին, ովքեր ունեն որոշակի առողջական վիճակներ,



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

հիվանդություններ կամ քրոնիկական առողջական խնդիրներ, և համապատասխանում են CCS ծրագրի կանոններին: Եթե Ձեզ խնամք է հարկավոր California Children's Services («CCS») իրավասու բժշկական վիճակի համար, և մենք չունենք CCS մասնագետ մեր Medi-Cal մատակարարների ցանցում, ով կարող է տրամադրել այն, հնարավոր է, որ կարողանաք այցելել CCS մասնագետի մեր մատակարարների ցանցից դուրս՝ Ձեզ համար անվճար: CCS ծրագրի մասին մանրամասների համար կարդացեք այս Անդամի ձեռնարկի Գլուխ 4-ի՝ «California Children's Services և Whole Child Model ծրագիր» վերնագիրը

Ինչպես է գործում կառավարվող խնամքը

Kaiser Permanente-ն առողջապահական խնամքի ծառայություններ է տրամադրում ուղղակիորեն Անդամներին ինտեգրված բժշկական խնամքի ծրագրի միջոցով: Մեր բժշկական խնամքի ծրագիրը Ձեզ տալիս է Ձեզ հարկավոր Ապահովագրված ծառայությունների մեծ մասի հասանելիություն, օրինակ՝ Սովորական խնամք, հիվանդանոցային խնամք, լաբորատոր ծառայություններ, Շտապ օգնության խնամք, Հրատապ խնամք և այլ նպաստներ, որոնք նկարագրված են այս Անդամի ձեռնարկում: Բացի այդ, մեր առողջապահական կրթական ծրագրերն առաջարկում են ձեզ ձեր առողջությունը պահպանելու և բարելավելու հրաշալի միջոցներ:

Երբեմն Ձեզ կարող է ծառայություն հարկավոր լինել, որը մատչելի չէ մատակարարից, որը մեր Medi-Cal մատակարարների ցանցում է: Այդ դեպքում The Permanente Medical Group-ը (Հյուսիսային Կալիֆորնիա) կամ Southern California Permanente Medical Group-ը (Հարավային Կալիֆորնիա) ուղեգիր կլիագորի Medi-Cal Ցանցից դուրս մատակարարի մոտ: Ձեզ նախնական հաստատում (նախօրոք լիագորում) պետք չէ շտապ օգնության, ընտանիքի պլանավորման կամ ցանցում հոգեկան առողջության ծառայությունների համար:

Medicare և Medi-Cal ունեցող Անդամներ

Medicare և Medi-Cal ապահովագրում ունեցող նպաստառուները Երկակի իրավասության նպաստառուներ են: Եթե ունեք Medicare և Medi-Cal ապահովագրում, Ձեր Medicare ապահովագրումը միշտ առաջինն է վճարելու ապահովագրված ծառայությունների համար: Medi-Cal-ը միշտ վերջին վճարողն է:

Մեր Medi-Cal ծրագիրը չի ապահովագրում սովորական խնամքի ծառայություններ կամ փոխադրում սովորական խնամքի ծառայությունների համար Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքից դուրս: Medi-Cal-ը միայն ապահովագրում է Շտապ օգնություն, ներառյալ շտապ փոխադրում, Հրատապ խնամք և որոշ Զգայուն խնամքի ծառայություններ, երբ Դուք Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքից դուրս եք:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Եթե Ձեր Medicare ապահովագրումը Kaiser Permanente-ի միջոցով է

Երբ Դուք տնից հեռու եք, Ձեր Kaiser Permanente Medicare ծրագիրը կլինի առաջին վճարողը Ձեր ստացված ծառայությունների համար: Խնդրում ենք կարդալ Ձեր Kaiser Permanente Medicare *Ապահովագրության վկայականը* մանրամասների համար: Medi-Cal ապահովագրումը Բնակության տարածքի Սպասարկման տարածքից դուրս սահմանափակ է, ինչպես նշված է վերևում:

Շատ դեպքերում Ձեր Medicare Մաս D դեղատոմսային դեղերի ապահովագրումը պահանջում է, որ Դուք Ձեր դեղատոմսերը լրացնեք Kaiser Permanente Medicare ցանցի դեղատներում: Եթե գնում եք Medi-Cal Rx դեղատոմս Kaiser Permanente ցանցից դուրս, Ձեր Medicare ծրագիրը կարող է չապահովագրել Ձեր դեղատոմսը: Քանի որ Medicare-ն առաջինն է վճարում, մենք խրախուսում ենք Ձեզ օգտագործել մեր ծրագրի Դեղատները Ձեր դեղատոմսերի համար: Տեսեք Ձեր Medicare դեղատների հասցեագիրքը ցանցի դեղատների մասին տվյալների համար:

Եթե արդեն ունեք Kaiser Permanente PCP, Ձեր պետք չէ մեկ այլ PCP ընտրել Ձեր Medi-Cal ապահովագրման համար:

Եթե Ձեր Medicare ապահովագրումը Kaiser Permanente-ի միջոցով չէ

Ձեր Medicare դեղերի ապահովագրման մասին մանրամասների համար տեսեք Ձեր Medicare ապահովագրման փաստաթղթերը Ձեր FFS Medicare ապահովագրման կամ Ձեր Medicare ծրագրից: Հիշեք, որ Medicare-ն առաջինն է վճարում, այնպես որ, հնարավոր է, որ Ձեզանից պահանջվի ստանալ Ձեր Մաս D դեղերը Ձեր Medicare ծրագրի, այլ ոչ թե մեր միջոցով: Մենք կաշխատենք Ձեր Medicare ծրագրի կամ Ձեր Medicare մատակարարների հետ Ձեր խնամքը համակարգելու համար:

Դուք պետք է ընտրեք Kaiser Permanente PCP Ձեր Medi-Cal ապահովագրման համար:

Բժիշկներ

Կարող եք ընտրել Ձեր PCP-ին Ձեր Medi-Cal Մատակարարների հասցեագրքից: Ձեր ընտրած բժիշկը պետք է լինի Medi-Cal Ցանցի մատակարար: Ձեզ մոտիկ գտնվող PCP գտնելու համար այցելեք մեր կայքը՝ **kp.org/finddoctors** հասցեով (անգլերեն): Կարող եք նաև ներբեռնել Medi-Cal Մատակարարների հասցեագրքի պատճենը մեր կայքից՝ **kp.org/Medi-Cal/documents** (անգլերեն): Կարող եք նաև զանգահարել Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**) հեռախոսահամարով:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Կարող եք զանգահարել Անդամների ծառայություններ կամ ստուգել առցանց մատակարարների հասցեագիրքը **kp.org/finddoctors** կայքում (անգլերեն)՝ համոզվելու համար, որ PCP-ին նոր հիվանդներ է ընդունում:

Եթե Դուք բժիշկ ունեիք նախքան Kaiser Permanente-ի Անդամ դառնալը, և այդ բժիշկը մեր Medi-Cal մատակարար ցանցի մաս չէ, Դուք կկարողանաք սահմանափակ ժամանակով պահպանել այդ բժշկին: Մա կոչվում է Խնամքի շարունակականություն: Խնամքի շարունակականության մասին ավելին կարող եք կարդալ այս Անդամի ձեռնարկի Գլուխ 2-ում: Մանրամասների համար զանգահարեք Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**:

Եթե Ձեզ մասնագետ է հարկավոր, PCP-ն Ձեզ կուղեգրի մասնագետի մոտ Kaiser Permanente Medi-Cal մատակարարների ցանցում: Որոշ մասնագետներ ուղեգիր չեն պահանջում: Ուղեգրերի համար կարդացեք այս գլխի «Ուղեգրեր» հատվածը:

Հիշեք, որ եթե PCP չընտրեք, մենք կընտրենք մեկին Ձեզ համար, եթե իհարկե չունեք մեկ այլ համապարփակ առողջական ապահովագրում՝ ի լրումն Medi-Cal-ի:

Եթե ցանկանում եք փոխել Ձեր PCP-ին, Դուք պետք է PCP ընտրեք Kaiser Permanente Medi-Cal մատակարարների ցանցից: Դուք կարող եք գտնել մեր Medi-Cal Մատակարարների որոնելի առցանց հասցեագիրքը **kp.org/finddoctors** կայքում (անգլերեն): Համոզվեք, որ PCP-ն ընդունում է նոր հիվանդներ: Որպեսզի իմանաք, թե ինչպես PCP ընտրել կամ փոխել, խնդրում ենք այցելել մեր կայքը՝ **kp.org** (անգլերենով) հասցեով, կամ զանգահարել Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով:

Հիվանդանոցներ

Շտապ օգնություն պահանջող դեպքերում զանգահարեք **911** կամ գնացեք մոտակա հիվանդանոց:

Եթե իրավիճակը շտապ օգնություն չի պահանջում և Ձեզ հիվանդանոցային խնամք է հարկավոր, Ձեր PCP-ն կորոշի, թե որ հիվանդանոցն էք գնալու: Ձեզ հարկավոր կլինի գնալ մեր Medi-Cal մատակարար ցանցի հիվանդանոց: Մեր Medi-Cal ցանցի հիվանդանոց գտնելու համար այցելեք մեր կայքը՝ **kp.org/facilities** հասցեով (անգլերեն): Չանգահարեք մեր Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով:



Կանացի առողջության մասնագետներ

Դուք կարող եք այցելել Kaiser Permanente Medi-Cal մատակարար ցանցում գործող կանացի առողջության մասնագետի կանացի սովորական խնամքի ծառայությունների համար անհրաժեշտ ապահովագրված խնամք ստանալու համար: Նման ծառայությունների համար Ձեզ հարկավոր չէ ստանալ ուղեգիր կամ լիազորում Ձեր PCP-ից: Կանացի առողջության մասնագետ գտնելու հարցում օգնության համար կարող եք զանգահարել **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով: Դուք կարող եք նաև զանգահարել **1-866-454-8855 (TTY 711)** հեռախոսահամարով և խոսել առողջապահական խնամքի վկայագրված մասնագետի հետ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Medi-Cal Մատակարարների հասցեագրքեր

Kaiser Permanente-ի Medi-Cal Մատակարարների հասցեագրքերում («Մատակարարների հասցեագրքեր») նշված են Kaiser Permanente Medi-Cal մատակարար ցանցի մատակարարները: Ցանցը մատակարարների խումբն է, որն աշխատում է Kaiser Permanente-ի հետ՝ Medi-Cal Ապահովագրված ծառայություններ տրամադրելու համար:

Կան վեց Medi-Cal Մատակարարների հասցեագրքեր Հյուսիսային Կալիֆորնիայի տարածքում և վեց Medi-Cal Մատակարարների հասցեագրքեր Հարավային Կալիֆորնիայի տարածքում: Յուրաքանչյուր Մատակարարների հասցեագիրք պատկանում է հատուկ տեղանքին: Օրինակ, եթե բնակվում եք Santa Clara վարչաշրջանում, South Bay և Peninsula հասցեագիրքը նշում է Medi-Cal Ցանցի մատակարարներին Ձեր վաչրաշրջանում:

Ստորև բերված աղյուսակը կարող է օգնել Ձեզ որոշել, թե որ Մատակարարների հասցեագիրքը կունենա Ձեզ մոտիկ գտնվող մատակարարներ: Կարող եք այցելել ցանկացած Kaiser Permanente Medi-Cal Ցանցի մատակարարի Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքում:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Որտեղ ապրում եք Հյուսիսային Կալիֆորնիայում	Medi-Cal Մատակարարների հասցեագիրք, որը կարող է օգտակար լինել Ձեզ համար
Amador, Fresno, Kings, Madera, Mariposa, San Joaquin, Stanislaus, Northern Tulare, Amador	Կենտրոնական Կալիֆորնիա
Amador, El Dorado, Placer, Sacramento, Sutter, Yolo	Sacramento
Alameda, Contra Costa,	Diablo և Napa/Solano կամ Արևելյան Ծոց
Napa, Solano	Diablo և Napa/Solano
Marin, Napa, Sonoma	San Francisco, Marin և Sonoma
San Francisco	San Francisco
San Mateo, Santa Clara, Santa Cruz	South Bay և Peninsula

Որտեղ ապրում եք Հարավային Կալիֆորնիայում	Medi-Cal Մատակարարների հասցեագիրք, որը կարող է օգտակար լինել Ձեզ համար
Los Angeles	Baldwin Park, Bellflower և South Bay
Riverside, San Bernardino, Los Angeles	Inland Empire և Coachella Valley
Kern, Ventura, Tulare, Los Angeles	Kern վարչաշրջան, Դաշտավայրեր և WVC
Los Angeles	Մետրոպոլիտեն Los Angeles
Orange, Los Angeles, San Bernardino	Orange վարչաշրջան
San Diego, Imperial	San Diego



Ձանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613**
(TTY **711**): Ձանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ,
շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Kaiser Permanente-ի Medi-Cal Մատակարարների հասցեագրքում նշված են հետևյալ տեսակի մատակարարները, որոնք մեր Medi-Cal մատակարարների ցանցում են՝

- Ընտանիքի պլանավորման մատակարարներ
- Դաշնային հավաստագրում ունեցող բուժկենտրոնները («FQHC»), որտեղ մատչելի է
- Անկախ ծննդական կենտրոններ (Freestanding Birth Center, «FBC»), որտեղ մատչելի է
- Հիվանդանոցներ
- Հնդկացիների առողջապահական խնամքի մատակարարներ («IHCP»)
- Երկարաժամկետ ծառայություններ և աջակցություն (Long-term services and supports, «LTSS»)
- Բուժող բուժքույրեր և բուժքույր-մանկաբարձներ
- Ամբուլատոր հոգեկան առողջության մատակարարներ
- PCP-ներ
- Դեղատներ
- Բժշկի օգնականներ
- Գյուղական առողջապահական կլինիկաներ («RHC»), որտեղ մատչելի է
- Մասնագետներ

Medi-Cal Մատակարարների հասցեագրքերում կան Kaiser Permanente Medi-Cal Ցանցի մատակարարների անուններ, մասնագիտացումներ, հասցեներ, հեռախոսահամարներ, աշխատանքային ժամեր և լեզուներ, որով այնտեղ խոսում են: Դրանք նաև Ձեզ տեղեկացնում են, եթե մատակարարը նոր հիվանդներ է ընդունում: Medi-Cal Մատակարարների հասցեագրքերը տեղեկացնում են շենքի ֆիզիկական հասանելիության մակարդակի մասին, օրինակ՝ կայանատեղի, թեքահարթակներ, աստիճաններ՝ բազրիքներով, և գուգարաններ՝ լայն դռներով ու բռնաձողերով: Եթե տեղեկություն եք ցանկանում ստանալ բժշկի կրթության, վերապատրաստման և վկայագրման մասին, խնդրում ենք զանգահարել Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով:

Դուք կարող եք առցանց, որոնելի Մատակարարների հասցեագիրքը գտնել [kp.org/finddoctors](https://www.kp.org/finddoctors) կայքում (անգլերեն): Կայքում գնացեք «Advanced Search» (Ընդլայնված որոնում) հղումով, ընտրեք «Medi-Cal Կառավարվող խնամք» «Health Plan» (Առողջապահական ծրագիր) վանդակում, որպեսզի տեսնեք Medi-Cal մատակարարների ցանկը: Կարող եք նաև ներբեռնել



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ [kp.org](https://www.kp.org) (անգլերեն)

մեր Medi-Cal հասցեագրքերի պատճեններից մեկը մեր կայքից՝ kp.org/Medi-Cal/documents (անգլերեն): Եթե ցանկանում եք Մատակարարների հասցեագրքի պատճենը կամ այլընտրանքային ձևաչափը, զանգահարեք **1-855-839-7613** (TTY **711**):

Կարող եք գտնել Medi-Cal Rx-ի հետ աշխատող դեղատների ցանկը Medi-Cal Rx Դեղատների հասցեագրքում՝ <https://medi-calrx.dhcs.ca.gov/home/> կայքում (անգլերեն): Կարող եք նաև գտնել Ձեզ մոտ գտնվող մասնակից դեղատուն՝ զանգահարելով Medi-Cal Rx Հաճախորդների սպասարկում՝ **1-800-977-2273** հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY-ից օգտվողները կարող են զանգահարել **1-800-977-2273** և սեղմել 5, կամ զանգահարել **711**, երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը 8 a.m.-ից 5 p.m.-ը:

Խնամքի ժամանակին հասանելիություն

Ձեր Medi-Cal Ցանցի մատակարարը պետք է ժամանակին խնամքի հասանելիություն տրամադրի Ձեզ՝ Ձեր առողջական խնամքի կարիքների հիման վրա: Նրանք պետք է առնվազն ժամադրություն առաջարկեն Ձեզ ներքոնշյալ ժամկետներում:

Ժամադրության տեսակ	Դուք պետք է ժամադրություն ստանաք այս ժամկետներում
Հրատապ խնամքի ժամադրություններ, որոնք նախնական հաստատում (նախօրոք լիազորում) չեն պահանջում	48 ժամ
Հրատապ խնամքի ժամադրություններ, որոնք նախնական հաստատում են (նախօրոք լիազորում) պահանջում	96 ժամ
Ոչ հրատապ (ընթացիկ) առաջնային խնամքի ժամադրություններ	10 աշխատանքային օրվա ընթացքում
Ոչ հրատապ (ընթացիկ) մասնագիտական խնամքի ժամադրություններ	15 աշխատանքային օրվա ընթացքում
Ոչ հրատապ (ընթացիկ) հոգեկան առողջության մատակարարի (ոչ բժիշկ) խնամքի ժամադրություններ	10 աշխատանքային օրվա ընթացքում



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ kp.org (անգլերեն)

Ժամադրության տեսակ	Դուք պետք է ժամադրություն ստանաք այս ժամկետներում
Ոչ հրատապ (ընթացիկ) հոգեկան առողջության մատակարարի (ոչ բժիշկ) հետբուժական խնամքի ժամադրություններ	Վերջին ժամադրությունից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում
Ոչ հրատապ (ընթացիկ) ժամադրություններ՝ օժանդակ (հարակից) ծառայությունների համար՝ փաստվածքի, հիվանդության կամ այլ առողջական վիճակի ախտորոշման կամ բուժման նպատակով	15 աշխատանքային օրվա ընթացքում
Սպասելու ժամանակի այլ ստանդարտներ	Դուք կկարողանաք միանալ հետևյալ ժամանակի ընթացքում.
Սովորական աշխատանքային ժամերին անդամների ծառայություններին հեռախոսով սպասելու ժամանակ	10 րոպե
Ժամադրության և խորհրդատվության գծի համար հեռախոսով սպասելու ժամանակ	30 րոպե՝ խորհրդի համար բուժքրոջ հետ միանալու համար

Երբեմն ժամադրության համար ավելի երկար սպասելը խնդիր չէ: Ձեր մատակարարը կարող է Ձեզ ավելի երկար սպասման ժամանակ տալ, եթե դա չի փաստում Ձեր առողջությանը: Ձեր բժշկական արձանագրության մեջ պետք է նշվի, որ ավելի երկար սպասելու ժամանակը չի փաստի Ձեր առողջությանը: Եթե դուք նախընտրում եք սպասել ավելի ուշ ժամադրության, որն ավելի կհամապատասխանի Ձեր ժամանակացույցին կամ ցանկանում եք տեսնել Ձեր ընտրած մատակարարին, Ձեր մատակարարը կհարգի Ձեր նախապատվությունը:

Ձեր բժիշկը կարող է Ձեզ խորհուրդ տալ հատուկ ժամանակացույց կանխարգելիչ ծառայությունների համար, հետևողական խնամք առկա վիճակների համար կամ մշտական ուղեգրեր մասնագետների մոտ՝ կախված Ձեր կարիքներից:

Բանավոր թարգմանչի ծառայություններ

Եթե մեզ զանգահարելիս կամ Ապահովագրված ծառայություններ ստանալիս Ձեզ բանավոր թարգմանչի ծառայություններ են հարկավոր, խնդրում ենք տեղեկացնել մեզ: Բանավոր



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Թարգմանչի ծառայությունները, ներառյալ՝ նշանների լեզուն, մատչելի են անվճար Ձեզ համար: Մենք միանշանակ խորհուրդ ենք տալիս չդիմել երեխաներին կամ ընտանիքի անդամներին՝ որպես բանավոր թարգմանիչ հանդես գալու համար: Թարգմանչական ծառայությունների մասին մանրամասների համար զանգահարեք Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով:

Եթե Ձեզ բանավոր թարգմանչի ծառայություններ են հարկավոր, ներառյալ՝ նշանային լեզու, Medi-Cal Rx դեղատանր, որը Kaiser Permanente ցանցից դուրս է, զանգահարեք Medi-Cal Rx Հաճախորդների սպասարկում՝ **1-800-977-2273** հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY օգտագործողները կարող են զանգահարել **711**՝ երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8 a.m.-ից 5 p.m.-ը:

Դեպի խնամքի մատուցման վայրը ճամփորդության ժամանակը կամ հեռավորությունը

Kaiser Permanente-ն պետք է հետևի Ձեր խնամքի համար ճամփորդության ժամանակի կամ հեռավորության չափանիշներին: Այդ չափանիշներն օգնում են ապահովել, որպեսզի Դուք կարողանաք խնամք ստանալ առանց Ձեր բնակավայրից շատ երկար և շատ հեռու ճանապարհորդելու: Ճամփորդության ժամանակի կամ հեռավորության չափանիշները կախված են Ձեր բնակության վարչաշրջանից:

Եթե մենք չենք կարող առաջարկել Medi-Cal Ցանցի մատակարար ճամփորդության ժամանակի կամ հեռավորության ստանդարտների համաձայն, DHCS-ը կարող է մեկ այլ ստանդարտ առաջարկել, որը կոչվում է այլընտրանքային հասանելիության ստանդարտ: Մեր ժամանակի կամ հեռավորության ստանդարտների մասին մանրամասների համար այցելեք մեր կայքը՝ **kp.org/Medi-Cal/documents** (անգլերեն): Կամ զանգահարեք մեր Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**:

Եթե Ձեզ խնամք է հարկավոր Ձեր տնից հեռու գտնվող մատակարարից, զանգահարեք մեր Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Նրանք կօգնեն Ձեզ գտնել Ձեզ ավելի մոտ գտնվող Medi-Cal մատակարարի: Եթե մենք չկարողանանք ավելի մոտ գտնվող Medi-Cal մատակարար գտնել, Դուք կարող եք խնդրել, որպեսզի մենք Ձեզ համար փոխադրում կազմակերպենք դեպի Medi-Cal մատակարար, անգամ եթե նա գտնվում է Ձեր բնակավայրից հեռու: Հեռու է համարվում, եթե Դուք չեք կարող այդ Medi-Cal մատակարարին հասնել Ձեր վարչաշրջանի համար սահմանված ժամանակի և հեռավորության չափանիշների շրջանակում, անկախ Ձեր փոստային դասիչի համար կիրառվող որևէ այլընտրանքային հասանելիության չափանիշի:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Եթե դեղատան մատակարարների հարցում օգնության կարիք ունեք, զանգահարեք Medi-Cal Rx՝ **1-800-977-2273** (TTY **1-800-977-2273** հեռախոսահամարով և սեղմեք 5, կամ **711**) համարով:

Ժամադրություններ

Երբ Ձեզ խնամք է հարկավոր՝

- Հյուսիսային Կալիֆոռնիայում զանգահարեք **1-866-454-8855** (TTY 711) ժամադրություն նշանակելու համար: Հարավային Կալիֆոռնիայում զանգահարեք **1-833-574-2273** (TTY 711): Կարող եք որոշ տեսակի ժամադրություններ նշանակել առցանց՝ **kp.org** կայքում (անգլերեն):
- Զանգահարելիս պատրաստ ունեցեք Ձեր Kaiser Permanente բժշկական գրառումների համարը (գտնվում է Ձեր Kaiser Permanente ID քարտի վրա)
- Ժամադրությանը Ձեզ հետ վերցրեք Ձեր BIC քարտը, Ձեր Kaiser Permanente-ի ID քարտը և լուսանկարով ID
- Ժամադրության համար փոխադրում խնդրեք, եթե հարկավոր է
- Լեզվական աջակցություն կամ թարգմանչական ծառայություններ խնդրեք, եթե հարկավոր է, երբ ժամադրություն եք նշանակում
- Ժամանակին եկեք Ձեր ժամադրությանը, մի քանի րոպե շուտ եկեք, որպեսզի գրանցվեք, լրացնեք ձևաթղթերը և պատասխանեք մատակարարի ունեցած որևէ հարցերին
- Անմիջապես զանգահարեք, եթե չեք կարող գալ ժամադրությանը կամ ուշանում եք
- Պատրաստ ունեցեք Ձեր հարցերն ու դեղերի վերաբերյալ տեղեկությունները

Շտապ օգնություն պահանջող դեպքերում զանգահարեք **911** կամ գնացեք մոտակա հիվանդանոց:

Ձեր ժամադրությանը գնալը

Եթե Ձեր Ապահովագրված ծառայությունների համար գնալու և վերադառնալու միջոց չունեք, մենք կօգնենք փոխադրում կազմակերպել Ձեզ համար: Ձեր դեպքից կախված՝ Դուք կարող եք որակավորվել Բժշկական փոխադրման կամ Ոչ բժշկական փոխադրման համար: Այս



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

փոխադրման ծառայությունները շտապ օգնության փոխադրում չեն և կարող են անվճար լինել Ձեզ համար:

Եթե ունեք բժշկական արտակարգ իրավիճակ, զանգահարեք **911** կամ գնացեք մոտակա հիվանդանոց:

Ձեզ հասանելի փոխադրման ծառայությունների մասին մանրամասների համար կարդացեք «Փոխադրման ծառայություններ արտակարգ իրավիճակ չհանդիսացող դեպքերում» հատվածը Գլուխ 4-ում («Նպաստներ և ծառայություններ»):

Չեղարկելը կամ փոխելը

Եթե չեք կարող գալ Ձեր ժամադրության, անմիջապես զանգահարեք Ձեր մատակարարի գրասենյակ: Շատ բժիշկներ պահանջում են զանգահարել Ձեր ժամադրությունից 24 ժամ շուտ (1 աշխատանքային օր), եթե պետք է չեղարկեք: Եթե մի քանի ժամադրություն բաց թողնեք, Ձեր բժիշկը կարող է դադարել Ձեզ խնամք տրամադրելը, և Դուք պետք է նոր բժիշկ գտնեք:

Հեռակա առողջապահության ծառայություններ

Հեռակա առողջապահությունը ծառայություններ ստանալու տարբերակ է, երբ ֆիզիկապես Ձեր մատակարարի հետ նույն վայրում չեք: Հեռակա առողջապահությունը կարող է ներառել կենդանի զրույց Ձեր մատակարարի հետ հեռախոսով, վիդեոյով կամ այլ կերպ: Կամ հեռակա առողջապահությունը կարող է ներառել տեղեկատվության կիսում Ձեր մատակարարի հետ առանց կենդանի զրույցի: Կարող եք շատ ծառայություններ ստանալ հեռակա առողջապահության միջոցով: Հեռակա առողջապահության այցելությունները նախատեսված են Ձեր հարմարության համար, որպեսզի Ապահովագրված ծառայություններ ստանաք, երբ Medi-Cal Ցանցի մատակարարը որոշում է, որ դրանք բժշկական տեսանկյունից համապատասխանում են Ձեր բժշկական վիճակին: Հեռակա առողջապահությունը մատչելի չէ բոլոր Ապահովագրված ծառայությունների համար: Պարտադիր չէ, որ Դուք օգտվեք հեռակա առողջապահության ծառայություններից: Որոշ Medi-Cal Ցանցի մատակարարներ առաջարկում են ծառայություններ միայն հեռակա առողջապահություն և չունեն ֆիզիկական գրասենյակ, որտեղ կարող եք ստանալ Ապահովագրված ծառայություններ: Կարող եք որոշել դրա փոխարեն դեմ-առ-դեմ ծառայություններ ստանալ Medi-Cal Ցանցի մատակարարից:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Վճարումներ

Դուք չեք վճարում Ապահովագրված ծառայությունների համար, եթե իհարկե չունեք ծախսաբաժին երկարաժամկետ խնամքի համար: Մանրամասների համար կարդացեք «Երկարաժամկետ խնամք և ծախսաբաժին ունեցող Անդամների համար» այս Անդամի ձեռնարկի Գլուխ 2-ում: Հիմնականում, Դուք հաշիվ չեք ստանալու մատակարարից: Դուք պետք է ցույց տաք Ձեր Kaiser Permanente-ի ID քարտը, Ձեր Medi-Cal BIC քարտը և լուսանկարով ID, երբ ստանում եք որևէ առողջապահական խնամքի ծառայություններ կամ դեղատոմսով դեղեր: Ձեր ID քարտը կտեղեկացնի Ձեր բժշկին՝ ուր ուղարկել հաշիվը: Դուք կարող եք ստանալ Նպաստների բացատրություն (Explanation of Benefits, «EOB») մեզանից կամ հաշվետվություն մատակարարից: EOB-ները և հաշվետվությունները հաշիվներ չեն:

Եթե հաշիվ ստանաք, զանգահարեք մեր Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Հայտնեք մեզ պահանջված գումարը, սպասարկման ամսաթիվը և հաշվի պատճառը: Դուք չեք վճարելու մատակարարներին որևէ գումար, որը Kaiser Permanente-ի պարտքն է Ապահովագրված ծառայության համար:

Եթե դեղատնից հաշիվ եք ստանում դեղատոմսային դեղի, պարագաների կամ հավելումների համար, զանգահարեք Medi-Cal Rx Հաճախորդների սպասարկում՝ **1-800-977-2273** հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY-ից օգտվողները կարող են զանգահարել **711**, երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը 8 a.m.-ից 5 p.m.-ը: Կարող եք նաև այցելել Medi-Cal Rx կայքը՝ <https://medi-calrx.dhcs.ca.gov/home/> (անգլերենով):

Դուք պետք է նախնական հաստատում (նախօրոք լիազորում) ստանաք, նախքան կայցելեք Ցանցից դուրս գործող Medi-Cal մատակարարի, բացառությամբ հետևյալի՝

- Շտապ օգնության խնամք
- Հրատապ խնամք Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքից դուրս
 - Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքում Ցանցից դուրս գործող Հրատապ խնամքի Medi-Cal մատակարարի այցելելու համար Ձեզ նախնական հաստատում է հարկավոր
- Որոշ Զգայուն խնամք, ինչպես նկարագրվում է այս գլխում

Եթե Դուք նախնական հաստատում չստանաք, Դուք հավանաբար ստիպված կլինեք վճարել ցանցից դուրս գործող Medi-Cal մատակարարների կողմից մատուցված ծառայությունների համար: Շտապ օգնության խնամքի, Հրատապ խնամքի և Զգայուն խնամքի ծառայությունների



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար ընթերցեք այս գլխի համապատասխան վերնագրերը:

Եթե Ձեզ Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայություններ են հարկավոր, որոնք ապահովագրվում են Medi-Cal-ի կողմից և մատչելի չեն Kaiser Permanente Medi-Cal ցանցում, մենք կհաստատենք և ուղեգիր կտրամադրենք Ցանցից դուրս գործող Medi-Cal մատակարարին այցելելու համար, որպեսզի ստանաք այդ ծառայությունները:

Եթե Դուք հաշիվ ստանաք կամ Ձեզ խնդրեն համավճար վճարել, երբ կարծում եք, որ չպետք է վճարեք, Դուք կարող եք նաև պահանջագիր ներկայացնել: Դուք պետք է գրավոր տեղեկացնեք մեզ, թե ինչու ստիպված եղաք վճարել պարագայի կամ ծառայության համար: Մենք կծանոթանանք Ձեր պահանջագրին և կորոշենք, թե արդյոք կարող եք հետ ստանալ Ձեր գումարը: Պահանջագրի ձևաթուղթը կարող եք ստանալ առցանց՝ այցելելով **kp.org** կայքը (անգլերեն): Զանգահարեք մեր Անդամների ծառայությունների բաժին՝ **1-855-839-7613** (TTY **711**): Եթե Ձեզ օգնություն անհրաժեշտ լինի պահանջագիրը լրացնելու հարցում, մենք ուրախությամբ կօգնենք Ձեզ:

Եթե սպասարկում եք ստանում Վետերանների գործերի համակարգում, կամ չապահովագրված կամ չլիազորված ծառայություններ եք ստանում Կալիֆորնիայից դուրս, հնարավոր է, պատասխանատու լինեք վճարման համար:

Ուղեգրեր

Եթե ցանկանում եք այցելել մասնագետի, որը ուղեգիր է պահանջում, Ձեր PCP-ն կամ մեկ այլ մասնագետ կարող է Ձեզ ուղեգիր տալ: Մասնագետը մատակարար է, որը կենտրոնանում է մեկ տեսակի առողջապահական խնամքի ծառայության վրա: Ձեզ ուղեգրող բժիշկը կհամագործակցի Ձեզ հետ մասնագետի ընտրության հարցում: Երաշխավորելու համար, որ կարող եք ժամանակին մասնագետի այցելել, DHCS-ը ժամկետներ է նշանակում Անդամների ժամադրությունների ստացման համար: Այս ժամկետները նշված են «Խնամքի ժամանակին հասանելիություն» հատվածում այս Անդամի ձեռնարկում: Ձեր բժիշկը կարող է օգնել Ձեզ ժամադրություն նշանակել մասնագետի մոտ:

Ուղեգիր պահանջող այլ ծառայությունները կարող են ներառել գրասենյակում անցկացվող ընթացակարգեր, ռենտգեններ և այլ պատկերում և անալիզներ:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

3 | Ինչպես խնամք ստանալ

Եթե Դուք առողջական խնդիրներ ունեք, որոնք հատուկ երկարաժամկետ բժշկական խնամք են պահանջում, Ձեզ հարկավոր է երկարաժամկետ ուղեգիր: Մա նշանակում է, որ Դուք կկարողանաք այցելել միևնույն մասնագետի մեկից ավելի անգամ՝ առանց յուրաքանչյուր անգամ ուղեգիր ստանալու:

Եթե մշտական ուղեգիր ստանալու խնդիրներ ունեք կամ ցանկանում եք մեր ուղեգրի քաղաքականության պատճենը, զանգահարեք Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**:

Ձեզ ուղեգիր հարկավոր չէ հետևյալի համար՝

- Այցելություններ PCP-ին
- Օպտոմետրիայի մասնագետներ
- Հոգեկան առողջության ծառայություններ՝ թեթևից միջին վիճակների համար, ներառյալ՝ հոգեկան առողջության սկզբնական գնահատումներ
- Մանկաբարձության/գինեկոլոգիայի (Obstetrics/Gynecology, «OB/GYN») այցելություններ
- Հրատապ խնամք Medi-Cal Ցանցի մատակարարից
- Չափահասների զգայուն ծառայություններ, օրինակ՝ սեռական բռնության խնամք
- Շտապ օգնության խնամք
- Ընտանիքի պլանավորման ծառայություններ (ավելին իմանալու համար զանգահարեք Ընտանիքի պլանավորման տեղեկությունների և ուղեգրի ծառայության գրասենյակ՝ **1-800-942-1054** հեռախոսահամարով)
- ՄԻԱՎ ստուգում և խորհրդատվություն (12 տարեկան և ավելի բարձր տարիքի)
- Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների ծառայություններ (12 տարեկան և ավելի բարձր տարիքի)
- Մանուալ թերապիայի ծառայություններ (կարող է ուղեգիր պահանջվել ցանցից դուրս FQHC-ների, RHC-ների և IHCP-ների համար)

Անչափահասները կարող են նաև ստանալ որոշ ամբուլատոր հոգեկան առողջության ծառայություններ, Ջգայուն խնամքի ծառայություններ և թմրամիջոցների օգտագործման խանգարման բուժման ծառայություններ՝ առանց ծնողների համաձայնության: Մանրամասների համար կարդացեք այս գլխի «Անչափահասի համաձայնության ծառայություններ» հատվածը և «Թմրամիջոցների օգտագործման խանգարման բուժման ծառայություններ» Գլուխ 4-ում:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Կալիֆորնիայի Քաղցկեղի արդարության իրավունքի մասին օրենքի ուղեգրեր

Բարդ քաղցկեղների արդյունավետ բուժումը կախված է շատ գործոններից: Սա ներառում է ճիշտ ախտորոշում և ժամանակին բուժում ստանալը քաղցկեղի մասնագետներից: Եթե Ձեր մոտ ախտորոշվել է բարդ քաղցկեղ, ապա Կալիֆորնիայի Քաղցկեղի խնամքի արդարության նոր օրենքը թույլ է տալիս ուղեգիր խնդրել Ձեր բժշկից՝ քաղցկեղի բուժում ստանալու համար հատուկ ներցանցային Քաղցկեղի ազգային ինստիտուտի (National Cancer Institute, NCI) կողմից նշանակված քաղցկեղի կենտրոնում, NCI համայնքային ուռուցքաբանության հետազոտական ծրագրի (NCI Community Oncology Research Program, NCORP) հետ փոխկապակցված հաստատությունում կամ որակավորված ակադեմիական քաղցկեղի կենտրոնում:

Եթե մենք չունենք NCI կողմից նշանակված քաղցկեղի կենտրոն, կամ NCORP հետ փոխկապակցված հաստատություն, կամ որակյալ քաղցկեղի կենտրոն Ձեր վարչաշրջանի Medi-Cal-ի մատակարարների ցանցում, Դուք կարող եք ուղեգիր խնդրել Կալիֆորնիայում գտնվող որակավորված արտացանցային քաղցկեղի կենտրոն: Որպեսզի ցանցից դուրս գտնվող քաղցկեղի կենտրոնում մատուցված ծառայություններն ապահովագրվեն, պետք է կիրառվեն հետևյալ բոլորը.

- Պահանջվող ծառայությունները պետք է Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ լինեն
- Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները պետք է մատչելի լինեն քաղցկեղի կենտրոնում
- Քաղցկեղի կենտրոնը պետք է համաձայնի մեր վճարման պայմաններին

Դուք նաև կարող եք ուղեգիր խնդրել մեր ցանցի քաղցկեղի մեկ այլ որակավորված կենտրոն:

Պատրաստ եք դադարեցնել ծիւղը: Անգլերեն ծառայությունների համար զանգահարեք 1-800-300-8086 Իսպաներենի համար զանգահարեք 1-800-600-8191: Մանրամասների համար այցելեք www.kickitca.org կայքը (անգլերեն):

Եթե Ձեզ մոտ քաղցկեղ է ախտորոշվել, խոսեք Ձեր բժշկի հետ՝ պարզելու, թե արդյոք Դուք որակավորում եք այս քաղցկեղի կենտրոններից որևէ մեկի ծառայությունների համար:



Նախնական հաստատում (նախօրոք լիազորում)

Նախօրոք լիազորում Հյուսիսային Կալիֆորնիայում

Որոշ տեսակի խնամքի համար Ձեր PCP-ին կամ մասնագետին անհրաժեշտ կլինի ստանալ The Permanente Medical Group-ի թույլտվությունը, նախքան Դուք կստանաք այդ խնամքը: Սա կոչվում է նախօրոք լիազորում, նախօրոք հաստատում կամ նախնական հաստատում խնդրել: Դա նշանակում է, որ The Permanente Medical Group-ը պետք է վստահ լինի, որ խնամքը Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ կամ պետքական է:

Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները ողջամիտ և անհրաժեշտ են պաշտպանելու համար Ձեր կյանքը, Ձեզ պահպանելու համար լրջորեն հիվանդանալուց կամ հաշմանդամ դառնալուց կամ նվազեցնելու համար սաստիկ ցավը՝ հիվանդության կամ ֆսավածքի ախտորոշման միջոցով: 21 տարեկանից ցածր տարիքի Անդամների համար Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները ներառում են այն խնամքը, որը հարկավոր է ֆիզիկական կամ հոգեկան հիվանդություն կամ վիճակ շտկելու ու կամ թերթնացնելու համար:

Առողջության և անվտանգության կողմի մաս 1367.01(h)(1)-ի համաձայն, The Permanente Medical Group («TPMG») ունի 5 աշխատանքային օր տեղեկատվության ստացման պահից, որն անհրաժեշտ է նախնական հաստատման (նախօրոք լիազորման) հայցերի մասին որոշում կայացնելու (հաստատելու կամ մերժելու) համար:

Այն խնդրանքների դեպքում, երբ մատակարարը նշում է կամ TPMG-ի համապատասխան նշանակված անձը որոշում է, որ սովորական ժամանակացույցին հետևելը կարող է լրջորեն վտանգի ենթարկել Ձեր կյանքը, կամ առողջությունը, կամ առավելագույն ֆունկցիոնալ վիճակ ձեռք բերելու, պահպանելու կամ վերադարձնելու Ձեր կարողությունը, TPMG-ն արագացված (արագ) լիազորման որոշում կկայացնի: Մենք ծանուցում կտրամադրենք այնքան արագ, որքան որ պահանջում է Ձեր առողջական վիճակը, և ծառայությունների խնդրանքը ստանալուց հետո 72 ժամից ոչ ուշ:

Կլինիկական կամ բժշկական անձնակազմը, օրինակ՝ բժիշկներ կամ բուժքույրեր, և դեղագործները վերանայվում են նախնական հաստատման (նախօրոք լիազորման) խնդրանքները:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY 711): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Մենք ազդեցություն չունենք վերանայողների՝ ապահովագրումը կամ սպասարկումը մերժելու կամ հաստատելու որոշումների վրա: Եթե Permanente Medical Group-ը չի հաստատում խնդրանքը, մենք Ձեզ Գործողության ծանուցման (Notice of Action, «NOA») նամակ կուղարկենք: NOA-ը կտեղեկացնի Ձեզ, թե ինչպես բողոքարկում ներկայացնել, եթե Դուք չհամաձայնեք որոշման հետ:

Մենք Ձեզ հետ կկապվենք, եթե The Permanente Medical Group-ին լրացուցիչ տեղեկություններ անհրաժեշտ լինեն Ձեր խնդրանքն ուսումնասիրելու համար:

Նախօրոք լիազորում Հարավային Կալիֆորնիայում

Որոշ տեսակի խնամքի համար Ձեր PCP-ին կամ մասնագետին անհրաժեշտ կլինի ստանալ Southern California Permanente Medical Group-ի թույլտվությունը, նախքան Դուք կստանաք այդ խնամքը: Սա կոչվում է նախօրոք լիազորում, նախօրոք հաստատում կամ նախնական հաստատում խնդրել: Դա նշանակում է, որ Southern California Permanente Medical Group-ը պետք է վստահ լինի, որ խնամքը Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ կամ պետքական է:

Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները ողջամիտ և անհրաժեշտ են պաշտպանելու համար Ձեր կյանքը, Ձեզ պահպանելու համար լրջորեն հիվանդանալուց կամ հաշմանդամ դառնալուց կամ նվազեցնելու համար սաստիկ ցավը՝ հիվանդության կամ փասվածքի ախտորոշման միջոցով: 21 տարեկանից ցածր տարիքի Անդամների համար Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները ներառում են այն խնամքը, որը հարկավոր է ֆիզիկական կամ հոգեկան հիվանդություն կամ վիճակ շտկելու ու կամ թեթևացնելու համար:

Առողջության և անվտանգության կողի մաս 1367.01(h)(1)-ի համաձայն, Southern California Permanente Medical Group («SCPMG») ունի 5 աշխատանքային օր տեղեկատվության ստացման պահից, որն անհրաժեշտ է նախնական հաստատման (նախօրոք լիազորման) հայցերի մասին որոշում կայացնելու (հաստատելու կամ մերժելու) համար:

Այն խնդրանքների դեպքում, երբ մատակարարը նշում է կամ SCPMG-ի համապատասխան նշանակված անձը որոշում է, որ սովորական ժամանակացույցին հետևելը կարող է լրջորեն վտանգի ենթարկել Ձեր կյանքը, կամ առողջությունը, կամ առավելագույն ֆունկցիոնալ վիճակ ձեռք բերելու, պահպանելու կամ վերադարձնելու Ձեր կարողությունը, SCPMG-ն արագացված (արագ) լիազորման որոշում կկայացնի: Մենք ծանուցում կտրամադրենք այնքան արագ, որքան որ պահանջում է Ձեր առողջական վիճակը, և ծառայությունների խնդրանքը ստանալուց հետո 72 ժամից ոչ ուշ:



Կլինիկական կամ բժշկական անձնակազմը, օրինակ՝ բժիշկներ կամ բուժքույրեր, և դեղագործները վերանայվում են նախնական հաստատման (նախօրոք լիազորում) խնդրանքները

Մենք ազդեցություն չունենք վերանայողների՝ ապահովագրումը կամ սպասարկումը մերժելու կամ հաստատելու որոշումների վրա: Եթե Southern California Permanente Medical Group-ը չի հաստատում խնդրանքը, մենք Ձեզ Գործողության ծանուցման («NOA») նամակ կուղարկենք: NOA-ը կտեղեկացնի Ձեզ, թե ինչպես բողոքարկում ներկայացնել, եթե Դուք չհամաձայնեք որոշման հետ:

Մենք Ձեզ հետ կկապվենք, եթե Southern California Permanente Medical Group-ին լրացուցիչ տեղեկություններ անհրաժեշտ լինեն Ձեր խնդրանքն ուսուժաստիբելու համար:

Ծառայություններ, որոնք նախապես հաստատում (նախօրոք լիազորում) են պահանջում

Հետևյալները ծառայությունների օրինակներ են, որոնք մշտապես պահանջում են նախնական հաստատում՝

- Ասեղնաբուժության ծառայություններ, երբ Ձեզ անհրաժեշտ է ամսական երկու այցերից ավել
- Չափահասների համայնքային ծառայություններ (Community-Based Adult Services, «CBAS»)
- Ատաճաբուժական անզգայացում
- Երկարատև օգտագործման բժշկական սարքավորումներ
- Տանը մատուցվող առողջապահական խնամք
- Ստոմայական և ուրոլոգիական պարագաներ
- Պրոթեզներ և օրթոտիկ հարմարանքներ
- Ծառայություններ, որոնք մատչելի չեն Medi-Cal Ցանցի մատակարարներից
- Փոխպատվաստումներ
- Բժշկական փոխադրում, երբ արտակարգ իրավիճակ չէ

Շտապ օգնության խնամքը, ներառյալ շտապ օգնության փոխադրումը, նախապես հաստատում (նախօրոք լիազորում) չի պահանջում



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Ձեզ երբեք նախնական հաստատում (նախօրոք լիազորում) հարկավոր չէ Շտապ օգնության խնամք ստանալու համար, անգամ եթե դա Ցանցից դուրս կամ Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքից դուրս է տրամադրվում: Ձեզ նախնական հաստատում հարկավոր չէ Հրատապ խնամքի համար, եթե Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքից դուրս եք: Սա ներառում է երկունք և ծծնդարերություն, եթե հղի եք: Զգայուն շատ ծառայությունների համար Ձեզ նախնական հաստատում հարկավոր չէ: Զգայուն խնամքի մասին մանրամասների համար կարդացեք այս գլխի «Զգայուն խնամք» հատվածը:

Նախնական հաստատում պահանջող ծառայությունների ամբողջական ցանկի և լիազորման որոշումներ կայացնելու ժամանակ մեր կողմից օգտագործվող չափանիշների համար խնդրում ենք այցելել մեր կայքը՝ **kp.org/UM** (անգլերենով) կամ զանգահարել Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով:

Երկրորդ կարծիքներ

Հնարավոր է, որ Ձեզ երկրորդ կարծիք անհրաժեշտ լինի Ձեր մատակարարի կողմից առաջարկված խնամքի կամ Ձեր ախտորոշման կամ բուժման պլանի վերաբերյալ: Օրինակ՝ Ձեզ միգրացիոն երկրորդ կարծիք հարկավոր լինի, եթե ցանկանում եք վստահ լինել, որ Ձեր ախտորոշումը ճիշտ է, Դուք վստահ չեք, թե արդյոք Ձեզ հարկավոր է նշանակված բուժումը կամ վիրահատությունը, կամ երբ Դուք փորձել եք հետևել բուժման պլանին, սակայն դա ազդեցություն չի ունեցել:

Երկրորդ կարծիք ստանալու համար զանգահարեք Ձեր PCP-ին: Ձեր PCP-ն կարող է Ձեզ ուղեգիր տալ Medi-Cal Ցանցի մատակարարի մոտ, ով պատշաճ կերպով որակավորված բժշկական մասնագետ է Ձեր առողջական վիճակի վերաբերյալ երկրորդ կարծիք հայտնելու համար: Կարող եք նաև զանգահարել Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)** և խնդրել գտնել մեկ այլ Medi-Cal Ցանցի մատակարար:

Մենք կվճարենք երկրորդ կարծիքի համար, եթե Դուք կամ Ձեր Medi-Cal Ցանցի մատակարարը խնդրեք այն, և Դուք երկրորդ կարծիք կստանաք Medi-Cal Ցանցի մատակարարից: Medi-Cal Ցանցի մատակարարից երկրորդ կարծիք ստանալու համար Դուք թույլտվություն ստանալու կարիք չունեք: Ձեր Medi-Cal Ցանցի մատակարարը կարող է օգնել Ձեզ ուղեգիր ստանալ երկրորդ կարծիքի համար, եթե անհրաժեշտ է:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Եթե որակավորված Medi-Cal Ցանցի մատակարար չկա Ձեզ երկրորդ կարծիք տալու համար, Անդամների ծառայությունները կօգնեն Ձեզ երկրորդ կարծիք ստանալ Ցանցից դուրս մատակարարից: Եթե մենք Ձեզ ուղարկենք Ցանցից դուրս գործող մատակարարի մոտ երկրորդ կարծիքի համար, մենք կվճարենք երկրորդ կարծիքի համար: Մենք կտեղեկացնենք Ձեզ 5 աշխատանքային օրվա ընթացքում, եթե երկրորդ կարծիքի համար Ձեր ընտրած մատակարարը հաստատվել է: Եթե ունեք քրոնիկական, ծանր կամ լուրջ հիվանդություն, կամ Ձեր առողջությանն անհապաղ և լուրջ վտանգ է սպառնում, ներառյալ, սակայն առանց սահմանափակման, կյանքի, վերջույթի կամ մարմնի կարևոր մասի կամ մարմնական գործառույթի կորուստ, մենք որոշում կկայացնենք 72 ժամվա ընթացքում:

Եթե մենք մերժում ենք երկրորդ կարծիքի Ձեր խնդրանքը, Դուք կարող եք գանգատ ներկայացնել: Գանգատների մասին մանրամասների համար կարդացեք «Բողոքներ» հատվածն այս Անդամի ձեռնարկի Գլուխ 6-ում:

Զգայուն խնամք

Անչափահասի համաձայնության ծառայություններ

Եթե Դուք 18 տարեկանից փոքր եք, Դուք կարող եք ստանալ որոշ Ապահովագրված ծառայություններ՝ առանց ծնողի կամ խնամակալի թույլատվության: Այս ծառայությունները կոչվում են անչափահասի համաձայնության ծառայություններ:

Կարող եք ստանալ այս ծառայություններն առանց ծնողի կամ խնամակալի թույլատվության՝

- Մեռական բռնության ծառայություններ, ներառյալ ամբուլատոր հոգեկան առողջության խնամք
- Հղիություն
- Ընտանիքի պլանավորում և հակաբեղմնավորում
- Աբորտի ծառայություններ

Եթե 12 տարեկան կամ ավելի բարձր տարիքի եք, Դուք կարող եք նաև ստանալ այս ծառայություններն առանց ծնողի կամ խնամակալի թույլատվության՝

- Հոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ հետևյալի համար՝
 - Մեռական բռնարարք



- Ազգապղծություն
- Ֆիզիկական բռնարարք
- Երեխայի նկատմամբ բռնություն
- Երբ մտածում եք գուցե ինքներդ Ձեզ կամ ուրիշներին
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում/թեստավորում/բուժում
- Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների կանխում/ստուգում/բուժում
- Թմրամիջոցների օգտագործման խանգարման բուժման ծառայություններ
- Թմրամիջոցների օգտագործման խանգարման բուժումն ապահովագրված չէ այս Անդամի ձեռնարկի ներքո: Կարող եք ստանալ այս ծառայությունները Ձեր բնակության վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրի միջոցով: Մանրամասների համար կարդացեք «Թմրամիջոցների օգտագործման խանգարման բուժման ծառայություններ» հատվածը այս Անդամի ձեռնարկի Գլուխ 4-ում:

Հղիության թեստավորման, ընտանիքի պլանավորման, բեղմնականիման ծառայությունների կամ սեռական ճանապարհով փոխանցվող վարակների ծառայությունների դեպքում բժիշկը կամ կլինիկան պարտադիր չէ, որ ներառված լինի Kaiser Permanente Medi-Cal մատակարարների ցանցում: Կարող եք ընտրել ցանկացած Medi-Cal մատակարար և գնալ նրանց մոտ առանց ուղեգրի կամ նասնական հաստատման (նախօրոք լիազորման): Սեռական ճանապարհով փոխանցվող վարակներին առնչվող ծառայություններ կարող եք ստանալ Medi-Cal ընտանիքի պլանավորման մատակարարներից:

▪ ***Անչափահասի հանաձայնության ծառայություններ, որոնք հատուկ հոգեկան առողջության ծառայություններ են Sacramento և Solano վարչաշրջանների Անդամների համար***

Անչափահասների հանաձայնության ծառայությունների համար, որոնք մասնագիտական հոգեկան առողջության ծառայություններ չեն, կարող եք այցելել Medi-Cal Ցանցի մատակարար առանց ուղեգրի կամ նախօրոք լիազորման: Ձեր PCP-ից ուղեգիր և մեզանից նախնական հաստատում (նախօրոք լիազորման) հարկավոր չէ, որպեսզի ապահովագրված անչափահասների հանաձայնության ծառայություններ ստանաք:

▪ ***Անչափահասի հանաձայնության ծառայություններ, որոնք հատուկ հոգեկան առողջության ծառայություններ են Կալիֆորնիայի այլ վարչաշրջանների Անդամների համար մեր Հյուսիսային և Հարավային Կալիֆորնիայի տարածքներում***



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Մենք հատուկ հոգեկան առողջության ծառայություններ չենք ապահովագրում Sacramento և Solano վարչաշրջաններից դուրս բնակվող Անդամների համար: Մասնագիտական հոգեկան առողջության ծառայություններն ապահովագրվում են Ձեր բնակության վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրի միջոցով:

Անչափահասների հանաձայնության ծառայությունների համար, որոնք մասնագիտական հոգեկան առողջության ծառայություններ չեն, կարող եք այցելել Medi-Cal Ցանցի մատակարար առանց ուղեգրի կամ նախնական հաստատման (նախօրոք լիազորման): Ձեր PCP-ից ուղեգիր և մեզանից նախնական հաստատում հարկավոր չէ, որպեսզի ապահովագրված անչափահասների հանաձայնության ծառայություններ ստանաք:

Զգայուն խնամքին չառնչվող, Ցանցից դուրս գործող Medi-Cal մատակարարից ստացված ծառայությունները չեն ապահովագրվում: Kaiser Permanente Medi-Cal մատակարարների ցանցից դուրս Medi-Cal մատակարար գտնելու կամ մատակարարի մոտ հասնելու փոխադրում ստանալու համար զանգահարեք մեր Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով:

Անչափահասները կարող են գաղտնի խոսել ներկայացուցչի հետ իրենց առողջական խնդիրների վերաբերյալ՝ զանգահարելով **1-866-454-8855 (TTY 711)** հեռախոսահամարով, և խոսել առողջապահական խնամքի վկայագրված մասնագետի հետ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Մենք ծնողներին կամ խնամակալներին չենք ուղարկի Զգայուն խնամքի ծառայություններ ստանալու մասին տեղեկություն: Զգայուն խնամքին վերաբերող գաղտնի հաղորդակցության մասին մանրամասների համար կարդացեք այս Անդամի ձեռնարկի Գլուխ 7-ի «Գաղտնիության պահպանման գործելակերպի ծանուցագրեր» հատվածը:

Չափահասների զգայուն խնամքի ծառայություններ

Որպես չափահաս 18 տարեկան կամ բարձր տարիքի՝ դուք, հնարավոր է, չցանկանաք այցելել ձեր PCP-ին՝ որոշ ինտիմ կամ անձնական բնույթի բուժօգնության համար: Դուք կարող եք ընտրել որևէ բժշկի կամ կլինիկա այս տեսակի խնամքի համար՝

- Ընտանիքի պլանավորում/հակաբեղմնավորում (ներառյալ՝ ամլացման ծառայություններ 21 տարեկան և ավելի բարձր տարիքի չափահասների համար)
- Հղիության ստուգում և խորհրդատվություն
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում/թեստավորում/բուժում



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

- Մեռական ճանապարհով փոխանցվող վարակների կանխում/ստուգում/բուժում
- Մեռական բռնարարքից հետո մատուցվող խնամք
- Ամբուլատոր արքրտի ծառայություններ

Չափահասների զգայուն խնամքի ծառայությունների համար Ձեր մատակարարը կարող է չլինել Kaiser Permanente Medi-Cal Ցանցի մատակարար: Կարող եք ընտրել ցանկացած Medi-Cal մատակարար և գնալ նրանց մոտ առանց ուղեգրի կամ նասնական հաստատման (նախօրոք լիազորման): Եթե խնամք եք ստանում, որն այստեղ նշված չէ որպես Չգայուն խնամք, Ցանցից դուրս Medi-Cal մատակարարից, հնարավոր է, ստիպված լինեք վճարել դրա համար, եթե ուղեգիր կամ նախօրոք լիազորում չունեք:

Եթե այս ծառայությունների համար բժիշկ կամ կլինիկա գտնելու հարցում օգնության կարիք ունեք կամ օգնություն է հարկավոր այս ծառայություններին հասնելու համար (ներառյալ փոխադրում), զանգահարեք Անդամների ծառայություններ **1-855-839-7613 (TTY 711)**: Դուք կարող եք նաև զանգահարել Ձեր առողջապահական ծրագրի ID քարտի վրա նշված խորհրդատվական գծին և խոսել առողջապահական խնամքի վկայագրված մասնագետի հետ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Մենք որևէ այլ անդամի չենք բացահայտի զգայուն խնամքի հետ կապված բժշկական տեղեկություններն առանց խնամք ստացող Անդամի գրավոր թույլտվության: Չգայուն խնամքի ծառայություններին վերաբերող գաղտնի հաղորդակցության մասին մանրամասների համար կարդացեք այս Անդամի ձեռնարկի Գլուխ 7-ի «Գաղտնիության պահպանման գործելակերպի ծանուցագրեր» հատվածը:

Բարոյական առարկություն

Որոշ մատակարարներ բարոյական առարկություն ունեն որոշ Ապահովագրված ծառայություններ տրամադրելու հարցում: Նրանք իրավունք ունեն **չառաջարկել** որոշ Ապահովագրված ծառայություններ, եթե բարոյապես համաձայն չեն ծառայությունների հետ: Եթե Ձեր մատակարարը բարոյական առարկություն ունի, նա կօգնի Ձեզ գտնել մեկ այլ մատակարար անհրաժեշտ ծառայությունների համար: Kaiser Permanente-ն նույնպես կարող է օգնել Ձեզ մատակարար գտնելու հարցում: Եթե մեկ այլ մատակարարի այցելելու համար ուղեգրի հարցում օգնության կարիք ունեք, զանգահարեք մեր Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Որոշ հիվանդանոցներ և մատակարարներ չեն տրամադրում մեկ կամ ավել ծառայություններ, նույնիսկ եթե դրանք ապահովագրված են Medi-Cal-ի կողմից՝

- ընտանիքի պլանավորում
- հակաբեղմնավորիչ ծառայություններ, ներառյալ՝ հրատապ հակաբեղմնավորում
- ամլացում, ներառյալ՝ փողերի կապում երկունքի և ծննդաբերության ժամանակ
- անպտղության բուժումներ
- աբորտ

Համոզվելու համար, որ ընտրում եք մի մատակարարի, որը կարող է տրամադրել Ձեզ և Ձեր ընտանիքին անհրաժեշտ խնամք, զանգահարեք բժշկին, բժշկական խմբին, անկախ պրակտիկայի կազմակերպությանը կամ կլինիկա, որը ցանկանում էք ընտրել: Կամ զանգահարեք մեր Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Հարցրեք, եթե մատակարարը կարող է տրամադրել Ձեզ անհրաժեշտ ծառայությունները:

Այս ծառայությունները մատչելի են Ձեզ համար, և մենք կերաշխավորենք, որ Դուք և Ձեր ընտանիքի անդամները կարող եք այցելել մատակարարների (բժիշկներ, հիվանդանոցներ, կլինիկաներ), որոնք տրամադրում են այս Ապահովագրված ծառայությունները: Հարցերի դեպքում կամ մատակարար գտնելու օգնության համար զանգահարեք Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով:

Հրատապ խնամք

Հրատապ խնամքը շտապ օգնություն պահանջող կամ կյանքի համար վտանգավոր վիճակը չէ: Դա այն ծառայությունների համար է, որոնք Ձեզ անհրաժեշտ են՝ կանխելու համար լուրջ վնասը Ձեր առողջությանը՝ հանկարծակի հիվանդությունից, վնասվածքից կամ նախկինում Ձեր ունեցած առողջական վիճակի բարդացումից: Հրատապ խնամքի ժամադրությունների մեծ մասը նախնական հաստատում (նախօրոք լիազորում) չի պահանջում Եթե Հրատապ խնամքի ժամադրություն էք խնդրում Medi-Cal ցանցի մատակարարից, Դուք ժամադրություն կստանաք 48 ժամվա ընթացքում: Եթե Ձեր հայցվող Հրատապ խնամքի ծառայությունները նախնական հաստատում (նախօրոք լիազորում) են պահանջում, Ձեզ ժամադրություն կառաջարկեն Ձեր խնդրանքից հետո 96 ժամվա ընթացքում:

Հրատապ խնամքի համար զանգահարեք Ժամադրությունների և խորհրդատվության գիծ Ձեր Բնակության տարածքում՝



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Բնակության տարածք	Ժամադրությունների և խորհրդատվության հեռախոսահամար
Հյուսիսային Կալիֆորնիա	1-866-454-8855 (TTY 711), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր
Հարավային Կալիֆորնիա	1-833-574-2273 (TTY 711), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր

Հրատապ խնամքի կարիք կարող է լինել՝

- Մրսածություն
- Կոկորդի ցավ
- Ջերմություն
- Ականջի ցավ
- Ձգված մկան
- Մայրության ծառայություններ:

Դուք պետք է ստանաք Հրատապ խնամքի ծառայությունները Medi-Cal Ցանցի մատակարարից, երբ Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքում էք: Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքում Medi-Cal Ցանցի մատակարարից ստացված Հրատապ խնամքը նախնական հաստատում (նախօրոք լիազորում) չի պահանջում:

Եթե Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքից դուրս եք, բայց Միացյալ Նահանգներում եք, Հրատապ խնամքը նախնական հաստատում (նախօրոք լիազորում) չի պահանջում: Գնացեք Հրատապ խնամքի մոտակա հաստատություն: Medi-Cal-ը չի ապահովագրում Հրատապ խնամքի ծառայություններ Միացյալ Նահանգներից դուրս: Եթե Դուք ճամփորդում եք Միացյալ Նահանգների տարածքից դուրս և Հրատապ խնամքի կարիք ունեք, մենք **չենք** ապահովագրի Ձեր խնամքը:

Եթե Ձեզ հոգեկան առողջության Հրատապ խնամք է հարկավոր, զանգահարեք Ձեր վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագիր կամ զանգահարեք մեր Անդամների ծառայություններ: Զանգահարեք Ձեր վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագիր օրը



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

24 ժամ, շաբաթը 7 օր: Բոլոր վարչաշրջանների անվճար հեռախոսահամարների համար այցելեք <http://www.dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContaktList.aspx> կայքը (անգլերեն):

Եթե դեղորայք ստանաք որպես Ձեր Հրատապ խնամքի այցի մաս, մենք կապահովագրենք այն՝ որպես Ձեր ապահովագրված այցի մաս: Եթե Ձեր Հրատապ խնամքի մատակարարը Ձեզ դեղատոմս է տալիս, որ դեղատոմս տանեք այն, Medi-Cal Rx-ը կորոշի, եթե ապահովագրում է այն: Medi-Cal Rx-ի մասին մանրամասների համար տեսեք «Medi-Cal Rx-ով ապահովագրված դեղատոմսային դեղեր» վերնագիրը «Այլ Medi-Cal ծրագրեր և ծառայություններ, որոնք ապահովագրված չեն Kaiser Permanente-ի կողմից» հատվածում՝ Գլուխ 4-ում:

Մենք չենք ապահովագրում Ցանցից դուրս գործող Medi-Cal մատակարարների կողմից տրամադրված հետբուժական խնամքն այն բանից հետո, երբ Դուք այլևս Հրատապ խնամքի կարիք չունեք, բացառությամբ՝ ապահովագրված երկարատև օգտագործման բժշկական սարքավորումները: Հրատապ խնամք պահանջող խնդիրը լուծելուց հետո Դուք պետք է Medi-Cal Ցանցի մատակարարի այցելեք որևէ հետագա խնամքի համար: Եթե Ձեզ երկարատև օգտագործման բժշկական սարքավորումներ են հարկավոր, որոնք կապված են Ձեր Հրատապ խնամքի հետ, Ձեր Ցանցից դուրս գործող Medi-Cal մատակարարը պետք է մեզանից նախնական հաստատում (նախօրոք լիազորում) ստանա:

Շտապ օգնության խնամք

Շտապ օգնություն պահանջող դեպքերում զանգահարեք **911** կամ գնացեք մոտակա հիվանդանոց: Շտապ օգնության համար Ձեզ մեզանից նախնական հաստատում (նախօրոք լիազորում) հարկավոր չէ:

Միացյալ Նահանգներում, ներառյալ Միացյալ Նահանգների տարածքում, Դուք իրավունք ունեք օգտվել ցանկացած հիվանդանոցից շտապ օգնության խնամքի համար:

Եթե Միացյալ Նահանգներից դուրս եք, ապահովագրվում է միայն հոսպիտալացում պահանջող Շտապ օգնության խնամքը Կանադայում և Մեքսիկայում: Շտապ օգնության խնամքը և այլ խնամք չի ապահովագրվում այլ երկրներում:

Շտապ օգնության խնամքը կյանքին սպառնացող բժշկական վիճակների համար է: Այն հիվանդության կամ վնասվածքի համար է, որն, ըստ առողջության և բժշկության մասին միջին գիտելիքներ ունեցող ողջամիտ (խոհեմ) անձի (ոչ առողջապահական խնամքի մասնագետ), եթե



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

անմիջապես չբուժվի, վտանգի տակ կդնի Ձեր առողջությունը (կամ Ձեր չձեռնարկած մանկան առողջությունը) կամ մարմնի ֆունկցիան, օրգանը, կամ մարմնի մի մասը կարող է լրջորեն վնասվել: Օրինակները ներառում, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

- Ակտիվ երկունք
- Կոտրված ոսկոր
- Ուժեղ ցավ
- Կրծքավանդակի ցավ
- Թմրամիջոցի գերդոզավորում
- Ուշաթափություն
- Շտապ հոգեբուժական օգնություն պահանջող վիճակներ, ինչպիսիք են՝ ուժեղ դեպրեսիա կամ ինքնասպանության մտքեր (ապահովագրված է վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրերի կողմից)
 - Sacramento և Solano վարչաշրջաններում հոգեբուժական շտապ օգնության վիճակներն ապահովագրվում են մեր կողմից:
 - Մեր Հոյսիսային և Հարավային Կալիֆորնիայի բոլոր մասցած վարչաշրջաններում հոգեբուժական շտապ օգնության վիճակներն ապահովագրվում են վարչաշրջանի հոգեկան առողջապահական ծրագրերի կողմից
- Ուժեղ արյունահոսություն
- Ուժեղ այրվածք
- Ուժեղ ցավ
- Շնչառության խնդիրներ

Մի գնացեք շտապ օգնության սենյակ (emergency room, ER) Սովորական խնամքի կամ անհապաղ չպահանջվող խնամքի համար: Դուք պետք է Սովորական խնամք ստանաք Ձեր PCP-ից, ով Ձեզ ամենալավը գիտի: Եթե վստահ չեք, թե արդյոք ունեք շտապ օգնություն պահանջող իրավիճակ, զանգահարեք Ձեր PCP-ին: Դուք կարող եք նաև զանգահարել Ձեր առողջապահական ծրագրի ID քարտի վրա նշված խորհրդատվական գծին և խոսել առողջապահական խնամքի վկայագրված մասնագետի հետ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Եթե Ձեզ Շտապ օգնություն է հարկավոր տանից հեռու, գնացեք մոտակա հիվանդանոց, անգամ եթե այն Kaiser Permanente Medi-Cal մատակարարների ցանցում չէ: Եթե Դուք այցելում եք ER, խնդրեք նրանց զանգահարել մեզ: Դուք կամ Ձեզ ընդունած հիվանդանոցը պետք է զանգահարեք



Kaiser Permanente շտապ օգնության խնամք ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում: Եթե ճամփորդում եք Միացյալ Նահանգներից դուրս, Կանադայից կամ Մեքսիկայից բացի այլ երկրներում, և Շտապ օգնության խնամքի կարիք ունեք, Kaiser Permanente-ն չի ապահովագրի Ձեր խնամքը:

Եթե Ձեզ շտապ օգնության փոխադրում է անհրաժեշտ, զանգահարեք **911** համարով: Անհրաժեշտ չէ նախապես ստանալ Ձեր PCP-ի կամ Kaiser Permanente-ի թույլտվությունը նախքան ER գնալը:

Եթե շտապ օգնության խնամքից հետո Ձեզ խնամք է հարկավոր Ցանցից դուրս գործող հիվանդանոցում (Հետկայունացման խնամք), հիվանդանոցը կզանգահարի Kaiser Permanente-ին:

Հիշեք. մի զանգահարեք **911**, եթե ողջամտորեն չեք կարծում, որ արտակարգ իրավիճակ ունեք: Շտապ օգնության խնամք ստացեք միայն շտապ օգնություն պահանջող դեպքերում, և ոչ թե Սովորական խնամքի կամ թեթև հիվանդությունների համար, ինչպիսիք են՝ հարբուխը կամ կոկորդի ցավը: Եթե շտապ օգնություն պահանջող դեպք է, զանգահարեք **911** կամ գնացեք մոտակա հիվանդանոց:

Հետկայունացման բուժօգնությունը

Հետկայունացման խնամքը հիվանդանոցում (այդ թվում՝ ER-ում) տրամադրվող Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայություններն են, որոնք Դուք ստանում եք այն բանից հետո, երբ Ձեզ բուժող բժիշկը համարում է, որ Ձեր շտապ օգնություն պահանջող բժշկական վիճակը կլինիկապես կայուն է: Հետկայունացման շրջանի խնամքը նաև ներառում է երկարաժամկետ օգտագործման բժշկական սարքավորումների («DME») տրամադրում՝ միայն եթե դրանք համապատասխանում են հետևյալ բոլոր պահանջներն՝

- DME սարքավորումն ապահովագրված է՝ ըստ Անդամի ձեռնարկի
- DME պարագա ունենալը Ձեզ համար Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է հիվանդանոցից դուրս գրվելուց հետո
- DME-ն առնչվում է հիվանդանոցում ձեր ստացած շտապ օգնության խնամքի հետ:

Այս Անդամի ձեռնարկի ներքո ապահովագրված Երկարաժամկետ օգտագործման բժշկական սարքավորումների մասին հավելյալ տեղեկությունների համար ընթերցեք այս Անդամի



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

ձեռնարկի Գլուխ 4-ի («Նպաստներ և ծառայություններ») «Երկարաժամկետ օգտագործման բժշկական սարքավորումներ» վերնագրով հատվածը:

Մենք ապահովագրում ենք Հետկայունացման խնամք Ցանցից դուրս գործող մատակարարից, միայն եթե մենք այն նախնական հաստատել ենք, կամ եթե այլ կերպ պահանջվում է կիրառելի օրենքով: Ձեզ բուժող բժիշկը պետք է մեզնից թույլտվություն ստանա, նախքան մենք կվճարենք հետկայունացման շրջանի խնամքի համար:

Ցանցից դուրս գործող մատակարարից Հետկայունացման խնամք ստանալու նպատակով նախնական հաստատում խնդրելու համար մատակարարը պետք է զանգահարի մեզ՝ **1-800-225-8883 (TTY 711)** հեռախոսահամարով: Նա կարող է նաև զանգահարել ձեր Kaiser Permanente-ի ID քարտի դարձերեսին նշված հեռախոսահամարով: Մատակարարը պետք է զանգահարի մեզ նախքան Ձեզ ծառայություններ մատուցելը:

Երբ մատակարարը զանգահարի, մենք կգրուցենք Ձեզ բուժող բժշկի հետ Ձեր առողջական խնդիրների մասին: Եթե մենք որոշենք, որ Ձեզ Հետկայունացման խնամք է հարկավոր, մենք կլիազորենք Ապահովագրված ծառայությունները: Որոշ դեպքերում, մենք կարող ենք կազմակերպել, որպեսզի Medi-Cal Ցանցի մատակարարը խնամք տրամադրի:

Եթե մենք որոշենք, որ խնամքը պետք է տրամադրվի ցանցի հիվանդանոցի, հմուտ բուժքույրական խնամքի հաստատության կամ այլ մատակարարի կողմից, մենք կարող ենք լիազորել Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ փոխադրման ծառայություններ՝ մատակարարի մոտ Ձեզ հասցնելու համար: Դրանք կարող են հատուկ փոխադրամիջոցով

Ժամադրությունների և խորհրդատվության հեռախոսագիծը Ձեզ անվճար բժշկական տեղեկատվություն և խորհուրդ է տալիս օրը 24 ժամ, տարվա բոլոր օրերին: Հյուսիսային Կալիֆորնիայում զանգահարեք **1-866-454-8855 (TTY 711)**: Հարավային Կալիֆորնիայում զանգահարեք **1-833-574-2273 (TTY 711)**:

տրամադրվող ծառայություններ լինել, որոնց համար մենք սովորաբար չենք վճարում:

Դուք պետք է մատակարարին հարցնեք, թե ինչ տիպի խնամք (այդ թվում՝ փոխադրում) ենք մենք լիազորել: Մենք վճարում ենք միայն այն ծառայությունների և դրանց հետ կապված փոխադրման համար, որոնք մենք լիազորել ենք: Եթե Դուք դիմել և ստացել եք ծառայություններ, որոնք ապահովագրված չեն, մենք կարող ենք մատակարարին չվճարել ծառայությունների համար:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Ժամադրությունների և խորհրդատվության հեռախոսագիծ

Երբեմն դժվար է խնամալ՝ ինչ տեսակի խնամք է Ձեզ հարկավոր: Մենք ունենք վկայագրված առողջական խնամքի մասնագետներ, որոնք կարող են Ձեզ հեռախոսով օգնել օրը 24 ժամ, շաբաթը յոթ օր: Դուք կարող եք՝

- Զրուցեք առողջական խնամքի մասնագետի հետ, որը կպատասխանի Ձեր բժշկական հարցերին, խնամքի մասին խորհուրդ կտա և կօգնի որոշել, եթե պետք է անմիջապես մատակարարի այցելեք
- Օգնություն ստացեք բժշկական վիճակների համար, օրինակ՝ շաքարախտ կամ ասթմա, ներառյալ՝ խորհուրդ, թե ինչ տեսակի մատակարար է ճիշտ Ձեր վիճակի համար
- Օգնություն ստացեք այն մասին, թե ինչ անել, եթե խնամքի կարիք ունեք, իսկ Ծրագրի հաստատությունը փակ է, կամ Դուք Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքից դուրս եք

Այդ վկայագրված առողջապահական խնամքի մասնագետներից մեկի հետ կապվելու համար զանգահարեք ստորև նշված հեռախոսահամարով Ձեր Բնակության տարածքում: Երբ զանգահարեք, հատուկ պատրաստություն անցած աշխատակիցը կարող է Ձեզ հարցեր տալ, որպեսզի պարզի, թե ում ուղղել Ձեր զանգը:

Բնակության տարածք	Ժամադրությունների և խորհրդատվության հեռախոսահամար
Հյուսիսային Կալիֆորնիա	1-866-454-8855 (TTY 711), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր
Հարավային Կալիֆորնիա	1-833-574-2273 (TTY 711), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Նախնական կարգադրագրեր

Նախնական առողջության կարգադրագրերն իրավաբանական ձև է: Դուք կարող եք նշել ձևաթղթում այն առողջապահական խնամքը, որը ցանկանում եք, եթե ապագայում չկարողանաք խոսել կամ որոշումներ կայացնել: Դուք կարող եք նաև նշել, թե ինչպիսի խնամք **չեք** ցանկանում ստանալ: Դուք կարող եք նշել որևէ մեկին, ինչպես օրինակ՝ Ձեր կնոջը/ամուսնուն, Ձեր փոխարեն առողջապահական խնամքի որոշումներ կայացնելու համար, եթե Դուք չկարողանաք դա անել:

Դուք կարող եք անվճար ստանալ նախնական կարգադրագրի ձևը Kaiser Permanente-ի Ծրագրի հաստատություններում: Դուք կարող եք նաև ձևը ստանալ դեղատներում, հիվանդանոցներում, փաստաբանական գրասենյակներում և բժիշկների գրասենյակներում: Հնարավոր է, որ ստիպված լինեք վճարել ձևի համար, եթե այն մեզանից չեք ստացել: Կարող եք նաև անվճար ներբեռնել ձևը մեր կայքից՝ **kp.org** հասցեով (անգլերեն): Դուք կարող եք խնդրել Ձեր ընտանիքի անդամներին, PCP-ին կամ Ձեր վստահությունը վայելող որևէ անձին օգնել Ձեզ լրացնել ձևը:

Դուք իրավունք ունեք Ձեր բժշկական գրառումներում պահել Ձեր նախնական կարգադրագիրը: Դուք իրավունք ունեք որևէ պահի փոփոխել կամ չեղարկել Ձեր նախնական կարգադրագիրը:

Դուք իրավունք ունեք տեղեկանալու նախնական կարգադրագրի մասին օրենքներում կատարված փոփոխությունների մասին: Kaiser Permanente-ն կտեղեկացնի Ձեզ նահանգային օրենքներում փոփոխությունների մասին, այն տեղի ունենալուց ոչ ուշ քան 90 օր հետո: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք մեր Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով:

Օրգանների և հյուսվածքների նվիրատվություն

Դուք կարող եք կյանքեր փրկել՝ դառնալով օրգանի կամ հյուսվածքի նվիրատու: Եթե Դուք 15-ից 18 տարեկան եք, Դուք կարող եք նվիրատու դառնալ Ձեր ծնողի կամ խնամակալի գրավոր համաձայնությամբ: Դուք կարող եք ցանկացած ժամանակ փոխել Ձեր միտքը և դադարել օրգանների նվիրատու լինել: Եթե ցանկանում եք ավելին իմանալ օրգանների և հյուսվածքների նվիրաբերության մասին, խոսեք Ձեր PCP-ի հետ: Դուք կարող եք նաև այցելել Միացյալ Նահանգների Առողջապահության և մարդու ծառայությունների բաժնի կայքը՝ **www.organdonor.gov** հասցեով (անգլերեն):



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

4. Նպաստներ և ծառայություններ

Ինչ է ապահովագրում Ձեր առողջապահական ծրագիրը

Այս գլուխը բացատրում է Ձեր՝ որպես Kaiser Foundation Health Plan, Inc.-ի Անդամի բոլոր Ապահովագրված ծառայությունները: Ձեր Ապահովագրված ծառայություններն անվճար են, եթե դրանք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են և մատուցվում են այս Անդամի ձեռնարկում նշված կանոնների համաձայն: Դուք պետք է ծառայությունների մեծ մասը ստանաք Medi-Cal Ցանցի մատակարարներից: Որոշ դեպքերում մենք կարող ենք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայություններ ապահովագրել Ցանցից դուրս գործող մատակարարից: Դուք պետք է մեզանից նախնական հաստատում (նախօրոք լիազորում) խնդրեք, եթե խնամքը ցանցից դուրս է, բացի հետևյալից՝

- Շտապ օգնության խնամք
- Հրատապ խնամք Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքից դուրս
- Որոշ Ձգայուն խնամք, ինչպես նկարագրվում է այս Անդամի ձեռնարկի Գլուխ 3-ում

Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները ողջամիտ և անհրաժեշտ են պաշտպանելու համար Ձեր կյանքը, Ձեզ պահպանելու համար լրջորեն հիվանդանալուց կամ հաշմանդամ դառնալուց կամ նվազեցնելու համար սաստիկ ցավը՝ հիվանդության կամ վսասվածքի ախտորոշման միջոցով: 21 տարեկանից ցածր տարիքի Անդամների համար Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները ներառում են այն խնամքը, որը հարկավոր է ֆիզիկական կամ հոգեկան հիվանդություն կամ վիճակ շտկելու ու կամ թեթևացնելու համար: Ապահովագրված ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք մեր Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**) հեռախոսահամարով:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

21 տարեկանից ցածր տարիքի Անդամները ստանում են լրացուցիչ նպաստներ և ծառայություններ: Մանրամասների համար կարդացեք Գլուխ 5-ը՝ «Երեխաների և երիտասարդների բարեկեցության խնամք»:

Հետևյալը մեր կողմից ապահովագրվող ծառայությունների օրինակներն են՝

- Ամբուլատոր ծառայություններ
- Սահմանափակ քանակի ամբուլատոր դեղատոմսային դեղեր, պարագաներ և հավելումներ Ամբուլատոր դեղատոմսային դեղերի, պարագաների և հավելումների մեծ մասն ապահովագրվում է Medi-Cal Rx միջոցով՝ Վճարում ծառայության դիմաց Medi-Cal-ի շրջանակներում
- CCS-իրավասու ծառայություններ Whole Child Model ծրագրի ներքո որոշ վարչաշրջաններում
- Շտապ օգնության խնամք, ներառյալ՝ շտապ օգնության փոխադրման ծառայություններ
- Հոսպիս և պալիատիվ խնամք
- Հոսպիտալացում
- Հետազոտական ծառայություններ
- Լաբորատոր և ճառագայթման ծառայություններ, օրինակ՝ ռենտգեն
- Երկարաժամկետ ծառայություններ և աջակցություն (Long-term services and supports, «LTSS»)
- Նոր ծննդաբերած մոր և մանկան խնամք
- Հոգեկան առողջության ծառայություններ (բացի Sacramento և Solano վարչաշրջաններից մենք ապահովագրում ենք թեթևից միջին վիճակներ, ներառյալ՝ հոգեկան առողջության սկզբնական գնահատումներ)
- Հոգեկան առողջության ծառայություններ թեթևից միջին ծանրության վիճակների համար
- Ոչ շտապ օգնության բժշկական փոխադրում (Non-emergency medical transportation, «NEMT»)
- Ոչ բժշկական փոխադրում (Non-medical transportation, «NMT»)
- Մանկաբուժական ծառայություններ
- Կանխարգելիչ և բարեկեցության ծառայություններ և քրոնիկական հիվանդությունների կառավարում



4 | Նպաստներ և ծառայություններ

- Վերականգնողական և առօրյա կյանքի հմտությունների պահպանման (թերապիա) ծառայություններ և սարքեր
- Վերականգնողական վիրահատություններ
- Թմրամիջոցների օգտագործման խանգարումների գնման ծառայություններ
- Հեռակա առողջապահության ծառայություններ Kaiser Permanente-ի Medi-Cal Ցանցի մատակարարներից
- Ակնաբուժական ծառայություններ

Կարդացեք ստորև ներկայացված բոլոր բաժինները, որպեսզի ավելին իմանաք այն ծառայությունների մասին, որոնք կարող եք ստանալ:

Kaiser Permanente-ի Անդամներին տրամադրվող առողջապահական խնամքի ծառայությունները ենթական են Kaiser Foundation Health Plan, Inc.-ի և Առողջապահական խնամքի ծառայությունների բաժնի (Department of Health Care Services, DHCS) միջև կնքված պայմանագրի պայմաններին, սահմանափակումներին և բացառություններին, և նշված են այս Անդամի ձեռնարկում և որևէ հավելվածներում:

Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները ներառում են Ապահովագրված ծառայություններ, որոնք ողջամիտ և անհրաժեշտ են, որպեսզի՝

- Պաշտպանեն կյանքը
- Կանխեն լուրջ հիվանդությունը կամ լուրջ հաշմանդամությունը
- Թեթևացնեն սաստիկ ցավը
- Ապահովեն տարիքին համապատասխան աճն ու զարգացումը
- Հասնեն, պահպանեն և վերականգնեն ֆունկցիոնալ ունակությունները



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները ողջամիտ և անհրաժեշտ են պաշտպանելու համար Ձեր կյանքը, Ձեզ պահպանելու համար լրջորեն հիվանդանալուց կամ հաշմանդամ դառնալուց կամ նվազեցնելու համար սաստիկ ցավը՝ հիվանդության կամ փաստվածքի ախտորոշման միջոցով:

Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները ներառում են այն ծառայությունները, որոնք անհրաժեշտ են տարիքին համապատասխան աճի և զարգացման կամ ֆունկցիոնալ կարողությունները ձեռք բերելու, պահպանելու կամ վերականգնելու համար:

Մինչև 21 տարեկան Անդամների համար ծառայությունը Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, եթե անհրաժեշտ է շտկել կամ բարվոքել արատները, ֆիզիկական և մտավոր հիվանդությունները կամ առողջական վիճակները դաշնային Վաղ և պարբերական գնման, ախտորոշման և բուժման (Early and Periodic Screening, Diagnostic and Treatment, EPSDT) նպաստի ներքո: Սա ներառում է խնամք, որն անհրաժեշտ է շտկելու կամ օգնելու համար թեթևացնել ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունը կամ վիճակը կամ պահպանելու անդամի վիճակը, որպեսզի այն չվատթարանա:

Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները չեն ներառում՝

- Չստուգված կամ դեռ ստուգվող բուժումներ
- Ընդհանուր առմամբ արդյունավետ չհամարվող ծառայություններ կամ պարագաներ
- Բուժման սովորական կուրսի և տևողության շրջանակներից դուրս ծառայություններ կամ կլինիկական ուղեցույցներ չունեցող ծառայություններ
- Ծառայություններ խնամակալի կամ մատակարարի հարմարավետության համար

Մենք կհամակարգենք այլ ծրագրերի հետ, որպեսզի Դուք ստանաք բոլոր Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները, նույնիսկ եթե այդ ծառայություններն ապահովագրվում են այլ ծրագրի, և ոչ թե մեր կողմից:

21 տարեկանից ցածր տարիքի Անդամների համար Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները ներառում են բոլոր վերոնշյալ Ապահովագրված ծառայությունները, ինչպես նաև որևէ այլ անհրաժեշտ առողջապահական խնամք, ախտորոշիչ ծառայություններ, բուժում և այլ միջոցներ՝ շտկելու կամ բարվոքելու արատներ, ֆիզիկական և հոգեկան հիվանդություններ և վիճակներ՝ ինչպես պահանջում է դաշնային Վաղ և պարբերական գնման, ախտորոշման և բուժման («EPSDT») նպաստը:



EPSDT-ը տրամադրում է կանխարգելման, ախտորոշման և բուժման ծառայություններ ցածր եկամուտ ունեցող նորածիններին, երեխաներին և 21 տարեկանից ցածր տարիքի դեռահասներին: EPSDT-ն ապահովագրում է ավել ծառայություններ, քան նպաստներ չափահասների համար: Այն ստեղծված է երաշխավորելու համար, որ երեխաները ստանում են վաղ ախտորոշում և խնամք առողջական խնդիրները կանխելու, ախտորոշելու և բուժելու համար: EPSDT-ի նպատակն է երաշխավորել, որ անհատական երեխաները ժամանակին ստանան իրենց անհրաժեշտ խնամքը՝ ճիշտ խնամք ճիշտ երեխային ճիշտ ժամանակ և ճիշտ վայրում:

Մենք կհամակարգենք այլ ծրագրերի հետ, որպեսզի Դուք ստանաք բոլոր Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները, նույնիսկ եթե մեկ այլ ծրագիր ապահովագրում է այդ ծառայությունները, և ոչ թե մենք: Այլ ծրագրերի մասին մանրամասների համար տեսեք «Այլ Medi-Cal ծրագրեր և ծառայություններ, որոնք ապահովագրված չեն Kaiser Permanente-ի կողմից» հատվածն այս գլխում:

Kaiser Permanente-ի կողմից ապահովագրվող Medi-Cal նպաստներ

Ամբուլատոր ծառայություններ

Չափահասների պատվաստումներ

Դուք կարող եք առանց նախնական հաստատման (նախօրոք լիազորում) չափահասի պատվաստումներ (սրսկումներ) ստանալ Medi-Cal Ցանցի մատակարարից: Մենք ապահովագրում ենք Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (Centers for Disease Control and Prevention, «CDC») Պատվաստման գործելակերպերի խորհրդատվական կոմիտեի (Advisory Committee on Immunization Practices, «ACIP») կողմից առաջարկվող պատվաստումները, ներառյալ՝ ճամփորդության համար Ձեզ պահանջվող պատվաստումները: Երեխաների պատվաստման մասին մանրամասների համար կարդացեք Գլուխ 5-ը («Երեխաների և երիտասարդների բարեկեցության խնամք»):

Կարող եք նաև չափահասների որոշ պատվաստումներ (սրսկումներ) ստանալ դեղատանը՝ Medi-Cal Rx-ի միջոցով: Medi-Cal Rx-ի մասին մանրամասների համար տեսեք «Այլ Medi-Cal ծրագրեր և ծառայություններ, որոնք ապահովագրված չեն Kaiser Permanente-ի կողմից» հատվածն այս գլխում:



Չանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Չանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Ալերգիայի խնամք

Մենք ապահովագրում ենք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ալերգիայի թեստավորումն ու բուժումը, ներառյալ՝ ալերգիայի դեսենսիբիլիզացիա, հիպոսենսիբիլիզացիա կամ իմունոթերապիա:

Անեսթեզիոլոգիական ծառայություններ

Մենք ապահովագրում ենք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ անեսթեզիոլոգիական ծառայություններ, երբ ստանում եք ամբուլատոր խնամք: Այս ծառայությունները կարող են ներառել անզգայացում ատամնաբուժական ծառայությունների համար, երբ տրամադրվում են անեսթեզիոլոգի կողմից:

Ատամնաբուժական ընթացակարգերի համար մենք ապահովագրում ենք հետևյալ ծառայությունները, երբ մենք լիազորում ենք դրանք՝

- Բժշկի կողմից տրամադրվող՝ քնաբերի ներերակային (intravenous, IV) ներարկման և ընդհանուր անզգայացման ծառայություններ
- Հաստատության ծառայություններ, որոնք կապված են քնաբեր դեղի ներարկման կամ անզգայացման հետ, ամբուլատոր վիրաբուժական կենտրոնում, Դաշնային որակավորված առողջապահական կենտրոնում (Federally Qualified Health Center, «FQHC»), ատամնաբույժի ընդունարանում կամ հիվանդանոցում

Մենք չենք վճարում որևէ այլ տեսակի ատամնաբուժական ծառայությունների համար, օրինակ՝ ատամնաբույժի ծառայություններ:

Մանուալ թերապիայի ծառայություններ

Մենք ապահովագրում ենք մանուալ թերապիայի ծառայություններ, որն սահմանափակվում է ողնաշարի բուժամբժնում մանուալ մանիպուլյացիաների միջոցով: 21 տարեկան և ավելի բարձր տարիքի չափահասները կարող են ստանալ ամսական մինչև երկու այց առանց նախօրոք լիազորման: Կարող են հաստատվել լրացուցիչ այցեր, եթե Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են: Սահմանափակումները կիրառելի չեն 21 տարեկանից փոքր Անդաճների համար:

- ***Մանուալ թերապիայի ծառայություններ American Specialty Health Ցանցի մատակարարներից***

Մենք համագործակցում ենք American Specialty Health-ի հետ մանուալ թերապիայի ծառայությունները կազմակերպելու համար: Մանուալ թերապիայի



ծառայությունների մասին մանրամասների համար խնդրում ենք զանգահարել American Specialty Health` **1-800-678-9133** (TTY **711**) հեռախոսահամարով: Հետևյալ Անդամներն իրավասու են ստանալու մանուալ թերապիայի ծառայություններ American Specialty Health Ցանցի մատակարարներից՝

- 21 տարեկանից փոքր երեխաներ
- Հղի Անդամներ ծննդաբերությունից հետո 60 օրվա ընթացքում
- Հնուտ բուժքույրական խնամքի հաստատության, միջանկյալ խնամքի հաստատության կամ ենթասուր խնամքի հաստատության բնակիչներ

▪ ***Մանուալ թերապիայի ծառայություններ վարչաշրջանի հաստատություններում, FQHC-ներում և RHC-ներում***

Medi-Cal-ը կարող է մանուալ թերապիայի ծառայություններ ապահովագրել բոլոր տարիքի Անդամների համար, եթե դրանք մատուցվում են վարչաշրջանի հիվանդանոցի ամբուլատոր բաժանմունքներում, վարչաշրջանի ամբուլատոր կլինիկաներում, Kaiser Permanente-ի ցանցի FQHC-ներում կամ Գյուղական առողջապահական կլինիկաներում (Rural Health Clinics, RHC): FQHC-ները կամ Գյուղական առողջապահական կլինիկաներում (Rural Health Clinics, RHC): կարող են ուղեգիր պահանջել ծառայությունների համար: Վարչաշրջանի ոչ բոլոր հաստատությունները, FQHC-ները կամ RHC-ներն են առաջարկում մանուալ թերապիայի ծառայություններ: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք մեր Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**) հեռախոսահամարով:

Ճանաչողական առողջության գնահատումներ

Մենք ապահովագրում ենք 65 և ավելի բարձր տարիքի անդամների ճանաչողական առողջության ամենամյա համառոտ գնահատումը, որոնք այլ կերպ իրավասու չեն նմանատիպ գնահատման՝ որպես Medicare ծրագրի բարեկեցության ամենամյա այցի մաս: Ճանաչողական առողջության գնահատումը թույլատրում է բացահայտել Ալցհեյմերի հիվանդության կամ դեմենցիայի նշաններ:

Դիալիզի և հեմոդիալիզի ծառայություններ

Մենք ապահովագրում ենք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ դիալիզի բուժումներ: Մենք ապահովագրում ենք նաև հեմոդիալիզի (քրոնիկական դիալիզ) և ներորովայնային դիալիզի ծառայություններ: Դուք պետք է համապատասխանեք մեր և դիալիզ կատարող կենտրոնի կողմից սահմանված բոլոր բժշկական չափանիշներին:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Medi-Cal-ի ապահովագրությունը չի ներառում՝

- Լավ ինքնազգացողության, հարմարավետության կամ շքեղության սարքավորումներ, պարագաներ և հասկանիչներ
- Ոչ բժշկական պարագաներ, օրինակ՝ ուղևորություններ կատարելու համար դիալիզի տնային սարքավորումը դյուրակիր դարձնող գեներատորներ կամ այլ պարագաներ

Ամբուլատոր վիրահատություններ և այլ ամբուլատոր ընթացակարգեր

Մենք ապահովագրում ենք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ամբուլատոր վիրահատություններ և այլ ամբուլատոր ընթացակարգեր:

Բժշկի ծառայություններ

Մենք ապահովագրում ենք բժշկի ծառայություններ, երբ դրանք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են: Որոշ ծառայություններ կարող են տրամադրվել խմբակային ժամադրության ընթացքում:

Պողիատրիայի (նոսքերի) ծառայություններ

Մենք ապահովագրում ենք պողիատրիայի ծառայություններն, ինչպես անհրաժեշտ է Բժշկական տեսանկյունից, ախտորոշման և մարդու նոսքի բժշկական, վիրաբուժական, մեխանիկական, մանիպուլյատիվ և էլեկտրական բուժման համար: Սա ներառում է բուժում նոսքի կոճի և նոսքին կապված ջղերի համար: Սա ներառում է նոսքի մկանների և ջղերի ոչ վիրահատական բուժում:

Բուժման թերապիաներ

Մենք ապահովագրում ենք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ բուժման թերապիաները, ներառյալ՝

- Քիմիաթերապիա
- Ճառագայթաբուժություն
- Ներարկվող դեղեր և պարագաներ: Սա այն դեղերն ու պարագաներն են, որոնք պետք է ներակվեն և դիտարկվեն առողջապահական խնամքի մատակարարի կողմից: Մենք ապահովագրում ենք դրանք, երբ նշանակված են Medi-Cal Ցանցի մատակարարի կողմից՝ մեր դեղերի դեղացուցակի ուղեցույցների համաձայն: Պարագաները պետք է ներարկվեն Ծրագրի հաստատությունում կամ տան այցելության ժամանակ, որպեսզի ապահովագրվեն: Մեր ապահովագրված



ներարկվող դեղերի օրինակները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

- Ամբողջական արյուն, արյան կարմիր բջիջներ, պլազմա և տրոմբոցիտներ
- Քաղցկեղի քիմիաբուժական դեղեր
- Ալերգիայի հակածիններ
- Դեղեր և պարագաներ, որոնք ներարկվում են ներերակային թերապիայի կամ սրսկման միջոցով

Մեր դեղերի դեղացուցակի մասին մանրամասների համար կարդացեք այս Գլուխ 4-ի «Kaiser Permanente-ի կողմից ապահովագրվող ամբուլատոր դեղատոմսով դեղեր, պարագաներ և հավելումներ» վերնագիրը:

Նոր ծննդաբերած մոր և մանկան խնամք

Ծննդաբերական կենտրոնի ծառայություններ

Մենք ապահովագրում ենք ծառայություններ ծննդաբերական կենտրոններում, որոնք համարվում են Medi-Cal-ի կողմից արտոնագրված Comprehensive Perinatal Services Program-ի (Comprehensive Perinatal Services Program, «CPSP») մատակարար: Ծննդաբերական կենտրոնների ծառայությունները մայրության պաշտպանության կենտրոնների այլընտրանք են, որոնք նախատեսված են ցածր ռիսկի հղիություն ունեցող կանանց համար: Եթե ցանկանում եք ծննդաբերել այս կենտրոններից մեկում և պարզել, եթե որակավորվում եք, հարցրեք Ձեր բժշկին:

Կրծքի պոմպեր և պարագաներ

Մենք ապահովագրում ենք սպառողական մակարդակի կրծքի պոմպ մեկ հղիության համար, ինչպես նաև այդ պոմպի պարագաների մեկ փաթեթ: Եթե Բժշկական տեսանկյունից Ձեզ անհրաժեշտ է հիվանդանոցային մակարդակի կրծքի պոմպ օգտագործել, մենք կապահովագրենք դրա վարձակալումը կամ գնումը: Հիվանդանոցային մակարդակի կրծքի պոմպերը Երկարատև օգտագործման բժշկական սարքավորում են (Durable Medical Equipment, «DME») և պետք է նախապես հաստատվեն Ձեզ համար: Մենք վաճառող կրնտրենք, իսկ Դուք պետք է վերադարձնեք հիվանդանոցային մակարդակի կրծքի պոմպը, երբ այլևս չեք օգտագործում այն:

Կրծքով կերակրման կրթություն և աջակցություններ

Մենք ապահովագրում ենք լակտացիայի համապարփակ աջակցություն:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Հավաստագրված բուժքույր-մանկաբարձի («CNM») ծառայություններ

Մենք ապահովագրում ենք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները, որոնք տրամադրվում են արտոնագրված բուժքույր-մանկաբարձների կողմից, որը գործում է իր մասնագիտացման շրջանակներում:

Ծննդաբերություն և հետծննդաբերական խնամք

Մենք ապահովագրում ենք ծննդաբերությունն ու հետծննդաբերական խնամքը:

Պտղի ժառանգական խանգարումների ախտորոշում և խորհրդատվություն

Մենք ապահովագրում ենք պտղի ծագումնաբանական խանգարումներին վերաբերող ստուգումների և խորհրդատվության համար:

Դուլայի ծառայություններ

Դուլաները ծննդաբերության աշխատողներ են, որոնք առողջական կրթություն, ֆիզիկական, հուզական և ոչ բժշկական աջակցություն են տրամադրում հղի և հետծննդաբերական անձանց ծննդաբերությունից առաջ, ընթացքում և հետո, ներառյալ՝ աջակցություն անհաջող հղիության, մեռելածին և արորտի դեպքում:

Մենք ապահովագրում ենք որակավորված դուլայի ծառայություններ Ձեր հղիության ընթացքում, ներառյալ՝ երկունքի, ծննդաբերության ժամանակ և դրանից հետո: Medi-Cal-ը չի ապահովագրում դուլայի ծառայություններ: Medi-Cal-ի կողմից ապահովագրվելու համար դուլայի ծառայությունները պետք է խորհուրդ տրվեն Medi-Cal Ցանցի մատակարարի կողմից: Եթե Medi-Cal Ցանցի մատակարարի հանձնարարագիր ունեք, մենք կապահովագրենք՝

- Մեկ սկզբնական այց
- Մինչև ութ լրացուցիչ մեկժամյա այց, որոնք կարող են տրամադրվել նախա և հետծննդաբերական շրջանում:
- Աջակցություն երկունքի և ծննդաբերության, արորտի կամ անհաջող հղիության ժամանակ:
- Մինչև երկու երեքժամյա հետծննդաբերական այց հղիության ավարտից հետո: Ձեզ համար ապահովագրվում են որոշակի քանակի այցեր Medi-Cal-ի ներքո:

Լրացուցիչ այցերի համար պահանջվում է նախնական հաստատում:



Արտոնագրված մանկաբարձի («LM») ծառայություններ

Մենք ապահովագրում ենք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները, որոնք տրամադրվում են վկայագրված բուժքույր-մանկաբարձների կողմից, որը գործում է իր մասնագիտացման շրջանակներում:

Մայրական հոգեկան առողջության ծառայություններ

Եթե հղիության ընթացքում կամ դրանից հետո Ձեզ մոտ զարգանում է հոգեկան առողջության վիճակ, մենք կապահովագրենք հոգեկան առողջության ծառայությունները, ինչպես ներկայացված է այս գլխի «Հոգեկան առողջության ծառայություններ» հատվածում:

Նորածնի խնամք

Նորածինները մանուկներն են 0-ից մինչև 2 ամիս: Եթե մայրը Medi-Cal անդամ է ծննդաբերության պահին, մենք կապահովագրենք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները նորածինների համար՝ մոր Medi-Cal ապահովագրության ներքո: Կարևոր է Ձեր նորածինն անդամագրել Medi-Cal-ին, որպեսզի նա ունենա իր սեփական Medi-Cal ապահովագրությունը: Նորածին
Medi-Cal-ին անդամագրելու մասին մանրամասների համար զանգահարեք Ձեր վարչաշրջանի գրասենյակ:

Նախածննդյան խնամք

Մենք ապահովագրում ենք նախածննդյան խնամքի մի շարք քննություններ:

Հոգեկան առողջության ծառայություններ

Հոգեկան առողջության գնահատումներ

Ձեզ ուղեգիր կամ նախնական հաստատում հարկավոր չէ առաջին հոգեկան առողջության գնահատման համար Medi-Cal Յանցի մատակարարի մոտ կամ վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրի մատակարարի մոտ: Կարող եք հոգեկան առողջության գնահատում ստանալ ցանկացած պահի վկայագրված հոգեկան առողջության մատակարարից, որը որակավորված Medi-Cal մատակարար է: Մեր ցանցում հոգեկան առողջության մատակարար գտնելու համար տեսեք մեր մատակարարների առցանց ցուցակները **kp.org/finddoctors** կայքում (անգլերեն) կամ զանգահարեք մեր Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**) հեռախոսահամարով:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

▪ **Sacramento և Solano վարչաշրջանների Անդամների համար**

Եթե Ձեր հոգեկան առողջության մատակարարը որոշում է, որ Ձեզ անհրաժեշտ է հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ (specialty mental health services, «SMHS»), Դուք կստանաք այս ծառայությունները մեր Medi-Cal Ցանցի մատակարարներից մեկից

▪ **Sacramento և Solano վարչաշրջաններից դուրս Անդամների համար**

Եթե Ձեր հոգեկան առողջության մատակարարը որոշում է, որ Ձեզ անհրաժեշտ է հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ (specialty mental health services, «SMHS»), Ձեր մատակարարը Ձեզ ուղեգիր կտա Ձեր վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրին:

Մենք ապահովագրում ենք կանխարգելման, գնման, գնահատման և բուժման ծառայություններ հոգեկան առողջության թեթևից միջին ծանրության վիճակների համար, և դրանք կարող են տրամադրվել Ձեզ նախքան ստանաք Ձեր հոգեկան առողջության պաշտոնական ախտորոշումը:

Հոգեկան առողջության ծառայություններ թեթևից միջին ծանրության վիճակների համար

Եթե Ձեր հոգեկան առողջության մատակարարը որոշում է, որ ունեք թեթև կամ միջին հոգեկան առողջության վիճակ, կամ հոգեկան, հուզական կամ վարվեցողական խանգարում ունեք, մենք ապահովագրում ենք հոգեկան առողջության հետևյալ ամբուլատոր ծառայությունները՝

- Հոգեկան առողջության անհատական և խմբային գնահատում և բուժում (հոգեբուժություն)
- Հոգեբանական թեստավորում, երբ այն անհրաժեշտ է հոգեկան առողջության որևէ խնդիր գնահատելու համար
- Իմացական հմտությունների զարգացում՝ ուշադրության, հիշողության և խնդիրների լուծման ունակության բարելավման համար
- Դեղաբուժությունը հսկելու նպատակով տրամադրվող ամբուլատոր ծառայություններ
- Ձեր հոգեկան առողջության վիճակը բուժելու հետ կապված պատկերման և լաբորատոր ծառայություններ (տե՛ս «Լաբորատոր և ճառագայթման ծառայություններ» այս Գլուխ 4-ում)
- Հոգեբուժական խորհրդատվություն



- Ընտանեկան թերապիա, երբ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է և ներառում է ընտանիքի առնվազն երկու անդամ: Ընտանեկան թերապիայի օրինակները ներառում, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝
 - Երեխա-ծնող հոգեթերապիա (0-ից 5 տարեկան)
 - Ծնող-երեխա ինտերակտիվ թերապիա (2-ից 12 տարեկան)
 - Ճանաչողական-վարքային գույզի թերապիա (մեծահասակներ)
- Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ երկտարր վարքագծային առողջական (dyadic behavioral health, «DBH») ծառայություններ Անդամների և նրանց խնամակալների համար: Երկտարր դա երեխան է և նրա ծնողները կամ խնամակալները: Երկտարր խնամքը սպասարկում է միասին ծնողներին կամ խնամակալներին և երեխաներին: Այն թիրախում է ընտանիքի բարեկեցությունը՝ աջակցելու առողջ երեխայի զարգացմանը և հոգեկան առողջությանը: Երկտարր խնամքի ծառայությունները ներառում են երկտարր վարքագծային առողջական (DBH) բարեկեցության այցեր, երկտարր համապարփակ Համայնքային աջակցությունների ծառայություններ, երկտարր հոգեկրթական ծառայություններ, երկտարր ծնողի կամ խնամակալի ծառայություններ, երկտարր ընտանիքի վերապատրաստում, խորհրդակցություն երեխայի զարգացման համար և մանկական հոգեկան առողջության ծառայություններ:

Հոգեկան առողջության ծառայություններին վերաբերող ամբուլատոր դեղատոմսային դեղերը, պարագաները և հավելումներն ապահովագրվում է Medi-Cal Rx միջոցով: Medi-Cal Rx-ի մասին մանրամասների համար տեսեք «Medi-Cal Rx» վերնագիրը «Այլ Medi-Cal ծրագրեր և ծառայություններ, որոնք ապահովագրված չեն Kaiser Permanente-ի կողմից» հատվածում՝ այս Գլուխ 4-ում:

Եթե հոգեկան առողջության խանգարման համար Ձեզ պահանջվող բուժումը մատչելի չէ Medi-Cal մատակարարների ցանցում կամ Ձեր PCP -ն կամ հոգեկան առողջության մատակարարը չի կարող Ձեզ տրամադրել հարկավոր խնամքը «Խնամքի ժամանակին հասանելիություն» հատվածում նշված ժամկետում, մենք կապահովագրենք և կօգնենք Ձեզ ստանալ ցանցից դուրս ծառայություններ:

Kaiser Permanente-ի կողմից տրամադրվող հոգեկան առողջության ծառայությունների մասին ավելին իմանալու համար կարող եք զանգահարել մեր Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով:



Հատուկ հոգեկան առողջության ծառայություններ Sacramento և Solano վարչաշրջաններից դուրս: Անցեք «Այլ Medi-Cal ծրագրեր և ծառայություններ, որոնք ապահովագրված չեն Kaiser Permanente-ի կողմից»

Հատուկ հոգեկան առողջության ծառայություններ Sacramento վարչաշրջանում

Մենք հատուկ հոգեկան առողջության ծառայություններ («SMHS») ենք ապահովագրում Sacramento վարչաշրջանում բնակվող Անդամների համար: Դուք պետք է SMHS ստանաք Kaiser Permanente-ի Ցանցի մատակարարներից: Kaiser Permanente-ի կողմից տրամադրվող հոգեկան առողջության ծառայությունների մասին ավելին իմանալու համար կարող եք զանգահարել՝ **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով:

Մենք ապահովագրում ենք հետևյալ հատուկ հոգեկան առողջության ծառայություններ Sacramento վարչաշրջանում՝

- Ամբուլատոր ծառայություններ՝
 - Հոգեկան առողջության ծառայություններ (գնահատումներ, ծրագրի կազմում, թերապիա, վերականգնում և հարակից ծառայություններ)
 - Դեղամիջոցների աջակցության ծառայություններ
 - Ցերեկային բուժման ինտենսիվ ծառայություններ
 - Ցերեկային վերականգնողական ծառայություններ
 - Ճգնաժամային միջամտության ծառայություններ
 - Ճգնաժամի կայունացման ծառայություններ
 - Բժշկական գործի կառավարման նպատակային ծառայություններ
 - Թերապևտիկ վարվեցողության ծառայություններ
- Հաստատությունում տրամադրվող ծառայություններ՝
 - Չափահասների և մանկաբուժական հաստատությունում տրամադրվող բուժման ծառայություններ
 - Հաստատությունում տրամադրվող ճգնաժամային բուժման ծառայություններ
- Ստացիոնար ծառայություններ՝
 - Սուր հոգեբուժական ստացիոնար հիվանդանոցային ծառայություններ
 - Հոգեբուժական ստացիոնար հիվանդանոցային մասնագիտական ծառայություններ
 - Հոգեբուժական հաստատության ծառայություններ



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Հետևյալ լրացուցիչ մասնագիտացված հոգեկան առողջության ծառայությունները մատչելի են Sacramento վարչաշրջանի միջոցով: Եթե Ձեզ անհրաժեշտ են ներքոնշյալ ծառայությունները Ձեր Kaiser Permanente մատակարարը կուղեգրի Ձեզ վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրի մատակարարում՝

- Ինտենսիվ խնամքի համակարգում (Intensive care coordination, «ICC»)
- Տանը մատուցվող ինտենսիվ ծառայություններ (Intensive home-based services, «IHBS»)
- Թերապևտիկ խնամակալի խնամք (Therapeutic foster care, «TFC»)

Հատուկ հոգեկան առողջության ծառայություններ Solano վարչաշրջանում

Մենք հատուկ հոգեկան առողջության ծառայություններ («SMHS») ենք ապահովագրում Solano վարչաշրջանում բնակվող Անդամների համար: Դուք պետք է SMHS ստանաք Kaiser Permanente-ի Ցանցի մատակարարներից: Kaiser Permanente-ի կողմից տրամադրվող հոգեկան առողջության ծառայությունների մասին ավելին իմանալու համար կարող եք զանգահարել՝ **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով:

Մենք ապահովագրում ենք հետևյալ հատուկ հոգեկան առողջության ծառայություններ Solano վարչաշրջանում՝

- Ամբուլատոր ծառայություններ՝
 - Հոգեկան առողջության ծառայություններ (գնահատումներ, ծրագրի կազմում, թերապիա, վերականգնում և հարակից ծառայություններ)
 - Դեղամիջոցների աջակցության ծառայություններ
 - Ցերեկային բուժման ինտենսիվ ծառայություններ
 - Ցերեկային վերականգնողական ծառայություններ
 - Ճգնաժամային միջամտության ծառայություններ
 - Ճգնաժամի կայունացման ծառայություններ
 - Բժշկական գործի կառավարման նպատակային ծառայություններ
 - Թերապևտիկ վարվեցողության ծառայություններ
 - Ինտենսիվ խնամքի համակարգում («ICC»)
 - Տանը մատուցվող ինտենսիվ ծառայություններ («IHBS»)
 - Թերապևտիկ խնամակալի խնամք («TFC»)
- Հաստատությունում տրամադրվող ծառայություններ՝



- Մեծահասակների՝ հաստատությունում տրամադրվող բուժման ծառայություններ:
- Հաստատությունում տրամադրվող ճգնաժամային բուժման ծառայություններ
- Ստացիոնար ծառայություններ՝
 - Սուր հոգեբուժական ստացիոնար հիվանդանոցային ծառայություններ
 - Հոգեբուժական ստացիոնար հիվանդանոցային մասնագիտական ծառայություններ
 - Հոգեբուժական հաստատության ծառայություններ

Շտապ օգնության խնամք

Ստացիոնար և ամբուլատոր ծառայություններ, որոնք անհրաժեշտ են բժշկական շտապ օգնություն պահանջող վիճակը բուժելու համար

Մենք ապահովագրում ենք բոլոր ծառայությունները, որոնք հարկավոր են բժշկական արտակարգ վիճակ բուժելու համար Միացյալ Նահանգներում (ներառյալ՝ Puerto Rico, U.S. Virgin Islands և այլն): Մենք ապահովագրում ենք նաև Շտապ օգնության խնամք, որը հոսպիտալացում է պահանջում Կանադայում կամ Մեքսիկայում: Բժշկական շտապ օգնություն պահանջող վիճակն առողջական վիճակ է՝ ուժեղ ցավով կամ լուրջ ֆասսվածքով: Վիճակն այնքան լուրջ է, որ եթե դրան անմիջապես բժշկական ուշադրություն չտրամադրեն, առողջության և ողջամիտ (խոհեմ) անձը (ոչ առողջապահական խնամքի մասնագետ) կարող է ակնկալել, որ դա կհանգեցնի հետևյալից մեկին՝

- Լուրջ վտանգ Ձեր առողջությանը
- Լուրջ ֆասս մարմնական ֆունկցիաներին
- Որևէ օրգանի կամ մարմնի մասի լուրջ անդամալուծություն
- Ակտիվ երկունքի փուլում գտնվող լուրջ վտանգի ենթարկված հղի անձի դեպքում, դա նշանակում է երկունք այն պահին, երբ հետևյալներից որևէ մեկը տեղի կունենա՝
 - Նախքան ծննդաբերություն բավարար ժամանակ չկա Ձեզ անվտանգ կերպով հիվանդանոց տեղափոխելու համար
 - Փոխադրումը կարող է վտանգել Ձեր կամ Ձեր չծնված մանկան առողջությունը կամ անվտանգությունը

Եթե ԱՄՆ-ում շտապ օգնության բաժանմունքի մատակարարը Ձեզ տալիս է Ձեր բուժման մաս կազմող ամբուլատոր դեղատոմսի մինչև 72 ժամվա պաշար, մենք կապահովագրենք դեղատոմսային դեղը՝ որպես Ձեր Շտապ օգնության խնամքի մաս:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Եթե հիվանդանոցի Շտապ օգնության բաժանմունքը Ձեզ դեղատոմս է դուրս գրում, որը պետք է տանեք ամբուլատոր դեղատոմս, Medi-Cal Rx-ը պատասխանատու է այդ դեղատոմսի ապահովագրման համար:

Եթե ամբուլատոր դեղատոմս դեղագործը Ձեզ դեղորայքի շտապ պաշար է տալիս, այդ դեղատոմսը նույնպես կապահովագրվի Medi-Cal Rx-ի, այլ ոչ թե մեր կողմից: Եթե դեղատոմս օգնություն է հարկավոր Ձեզ դեղորայքի շտապ պաշար տալու համար, ասացեք նրանց, որ զանգահարեն Medi-Cal Rx Հաճախորդների սպասարկում՝ **1-800-977-2273**, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Շտապ օգնության փոխադրման ծառայություններ

Մենք ապահովագրում ենք շտապ օգնության մեքենայի ծառայությունները՝ շտապ օգնություն պահանջող իրավիճակում Ձեզ մոտակա խնամքի վայր հասցնելու համար: Սա նշանակում է, որ Ձեր վիճակը բավական լուրջ է, որ այդ վայրն այլ ձևերով հասնելը կարող է վտանգել Ձեր առողջությունը կամ կյանքը: ԱՄՆ-ից դուրս ծառայությունները չեն ապահովագրվում, բացի Շտապ օգնության ծառայություններից, երբ Ձեզ անհրաժեշտ է հոսպիտալացում Կանադայում կամ Մեքսիկայում: Եթե շտապ օգնության փոխադրման ծառայություններ եք ստացել Կանադայում կամ Մեքսիկայում, և հիվանդանոց չեք պատկել այդ խնամքի ընթացքում, մենք չենք ապահովագրի Ձեր փոխադրման ծառայությունները:

Առողջապահական կրթություն

Մենք ապահովագրում ենք մի շարք առողջապահական կրթության խորհրդատվություններ, ծրագրեր և նյութեր, որոնք ժամադրության կամ այցելության ժամանակ տրամադրվում են Ձեր PCP-ի կամ այլ մատակարարների կողմից:

Մենք ապահովագրում ենք նաև մի շարք առողջապահական կրթության խորհրդատվություններ, ծրագրեր և նյութեր, որպեսզի օգնենք Ձեզ ակտիվորեն ներգրավվել Ձեր առողջության պաշտպանության և բարելավման գործում, ներառյալ ծխելը թողնելու, սթրեսի կառավարման և քրոնիկական վիճակների ծրագրերը (ինչպես օրինակ՝ շաքարախտներն ու ասթման):

Մեր առողջապահական կրթության խորհրդատվությունների, ծրագրերի և նյութերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք կապվել առողջապահական կրթության բաժնի հետ Ձեր տեղական Ծրագրի հաստատությունում: Կարող եք նաև զանգահարել Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով կամ այցելել մեր կայքը՝ **kp.org** հասցեով (անգլերեն):



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Առողջապահական կրթության ծառայություններ համայնքային բուժաշխատողների կողմից «CHW»)

Մենք ապահովագրում ենք կանխարգելիչ առողջության կրթություն և առողջական նավարկման ծառայություններ, որոնք տրամադրվում են համայնքային բուժաշխատողների կողմից (community health workers, CHW): Բժիշկը կամ վկայագրված մատակարարը պետք է Ձեզ համար խորհուրդ տա այս ծառայությունները: Մենք չենք ապահովագրում CHW-ի մատուցած բոլոր ծառայությունները: CHW-ի ապահովագրված ծառայությունները ներառում են հետևյալը.

- Առողջապահական կրթություն՝ Ձեր առողջությունը խթանելու կամ առողջության պահպանման խոչընդոտները վերացնելու համար, ինչպիսիք են՝
 - Ինչպես վերահսկել և կանխարգելել քրոնիկական վիճակները, վարակիչ հիվանդությունները, վարքագծային առողջության վիճակները, պերինատալ, սեռական և վերարտադրողական և բերանի խոռոչի առողջության վիճակները
 - Երեխայի խնամք և զարգացում
 - Բռնության և վսասվածքների կանխարգելում
- Առողջության մասին տեղեկություններ, ներառյալ տեղեկատվություն, ուսուցում, ուղեգրեր և աջակցություն առողջապահական ծառայություններից օգտվելու և համայնքային ռեսուրսներին միանալու համար:
- Առողջության խթանում և ուսուցում, ներառյալ նպատակների սահմանումը և գործողությունների պլանների ստեղծում՝ ուղղված հիվանդությունների կանխարգելմանը և կառավարմանը

Diabetes Prevention Program («DPP»)

Diabetes Prevention Program («DPP») փաստերի վրա հիմնված ապրելակերպի փոփոխության ծրագիր է: Այս 12 ամսական ծրագիրը կենտրոնանում է ապրելակերպի փոփոխության վրա: Այն նախատեսված է կանխարգելելու կամ հետաձգելու 2-րդ տիպի շաքարախտի զարգացումը նախաշաքարախտի ախտորոշում ունեցող անձանց մոտ: Այն կարող է տևել երկու տարի որակավորված Անդամների համար: Ծրագիրը տրամադրում է կրթություն և խմբային աջակցություն: Մեթոդները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

- Տրամադրել հավասարակից մարզիչ
- Սովորեցնել ինքնադիտարկում և խնդիրների լուծում
- Տրամադրել խրախուսում և հետադարձ կապ
- Տրամադրել տեղեկատվական նյութեր՝ նպատակներին աջակցելու համար



- Հետևել քաշի պարբերական գրանցմանը՝ նպատակներին հասնելու օգնության համար

Անդամները պետք է համապատասխանեն որոշ կանոնների, որպեսզի միանան DPP-ին: Հարցրեք Ձեր բժշկին, եթե որակավորվում եք ծրագրի համար:

Հոսպիս և պալիատիվ խնամք

Մենք տրամադրում ենք հոսպիսային և պալիատիվ խնամք երեխաների և չափահասների համար, ինչն օգնում է նվազեցնել ֆիզիկական, հուզական, սոցիալական և հոգևոր անհարմարությունները: 21 տարեկան և ավելի բարձր տարիքի չափահասները չեն կարող միաժամանակ հոսպիսային և պալիատիվ խնամք ստանալ: Եթե Դուք պալիատիվ խնամք եք ստանում և համապատասխանում եք հոսպիսային խնամքի չափանիշներին, Դուք կարող եք ցանկացած պահի խնդրել տեղափոխվել հոսպիսային խնամքի:

Հոսպիսային խնամք

Խնամքը հոսպիսում նպաստ է մահացու հիվանդություն ունեցող անդամների համար: Այն հիմնականում կենտրոնանում է ցավի և ախտանիշների կառավարման, այլ ոչ թե կյանքը երկարացնելու նպատակով բուժման վրա:

Մենք ապահովագրում ենք հոսպիսի խնամքը, եթե հետևյալ բոլոր պահանջները բավարարված են՝

- Մեր Medi-Cal մատակարարների ցանցում գործող բժիշկը Ձեզ մոտ ախտորոշել է մահացու հիվանդություն և պարզել, որ Ձեր կյանքի ակնկալվող տևողությունը 6 ամիս կամ պակաս է
- Ծառայությունները տրամադրվում են Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքում
- Ծառայությունները տրամադրվում են արտոնագրված հոսպիսային կազմակերպության կողմից, որը Medi-Cal Ցանցի մատակարար է
- Ցանցի բժիշկը որոշում է, որ այդ ծառայությունները բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են ցավի ամոքման և ավարտական փուլում գտնվող Ձեր անբուժելի հիվանդության ու դրա հետ կապված առողջական խնդիրների կառավարման համար



Խնամք հոսպիտում՝

- 21 տարեկան կամ ավելի բարձր տարիքի չափահասները կարող են այնպիսի խնամք ստանալ, որը մեղմում է ցավը և ավարտական փուլում գտնվող անբուժելի հիվանդության այլ ախտանշանները, բայց չի բուժում հիվանդությունը: Չափահասները չեն կարող միաժամանակ ստանալ և՛ հոսպիտային խնամք, և՛ պալիատիվ խնամք:
- Մինչև 21 տարեկան երեխաներն այնպիսի խնամք են ստանում, որը մեղմում է ցավը և ավարտական փուլում գտնվող անբուժելի հիվանդության այլ ախտանշանները և, եթե ցանկանան, կարող են նաև բուժում ստանալ իրենց հիվանդությունից:

Դուք կարող եք ցանկացած ժամանակ փոխել հոսպիտում խնամք ստանալու Ձեր որոշումը: Հոսպիտում խնամքը սկսելու կամ դադարեցնելու մասին որոշումը պետք է լինի գրավոր և Medi-Cal-ի կանոնների համաձայն:

Եթե վերոնշյալ բոլոր պահանջները բավարարվել են, մենք ապահովագրում ենք հոսպիտի հետևյալ ծառայությունները՝

- Medi-Cal Ցանցի մատակարարների ծառայություններ
- Հմուտ բուժքույրական խնամք, ներառյալ՝ բուժքույրական խնամքի անհրաժեշտության գնահատում և գործի կառավարում, ցավի ամոքում և ախտանշանների կառավարում, բարոյական աջակցություն՝ Ձեզ և Ձեր ընտանիքին, և ցուցումներ խնամողներին
- Ֆիզիոթերապիա, աշխատանքային թերապիա և խոսքի թերապիա՝ ախտանշանները կառավարելու կամ կենսագործունեությունը պահպանելու հարցում օգնելու համար
- Շնչառական օրգանների թերապիա
- Բժշկական սոցիալական ծառայություններ
- Տանը մատուցվող առողջապահական խնամքի աջակցություն և օգնություն ուտելու, լոգանք ընդունելու և հագնվելու հարցում
- Դեղեր՝ ցավի վերահսկման և Ձեր մահացու հիվանդության այլ ախտանիշները մեղմելու համար:
 - Մենք ապահովագրում ենք ներարկվող դեղերը՝ համաձայն մեր դեղերի դեղացուցակի ուղեցույցների
 - Մենք ապահովագրում ենք ամբուլատոր դեղեր, որոնք ուղղակիորեն կապված



Են Ձեր հոսպիսային ապահովագրված ծառայությունների հետ: Դուք պետք է այս դեղերը ձեռք բերեք Kaiser Permanente-ի ցանցի դեղատնից: Որոշ դեղերի դեպքում՝ մենք յուրաքանչյուր 30-օրյա ժամանակաշրջանում վճարում ենք 30 օրվա պաշարի համար:

- Ամբուլատոր դեղատոմսային դեղերը, որոնք Ձեր հոսպիսային խնամքի մաս են կազմում, ապահովագրվում են Medi-Cal Rx-ի կողմից: Medi-Cal Rx ծրագրի մասին մանրամասների համար կարդացեք «Medi-Cal Rx» վերնագիրն ավելի ուշ այս Գլուխ 4-ում՝ «Kaiser Permanente-ի կողմից չապահովագրվող այլ նպաստներ և ծրագրեր» հատվածում
- Երկարատև օգտագործման բժշկական սարքավորումներ
- Ստացիոնար խնամողի կարճատև փոխարինում, երբ այն անհրաժեշտ է, որպեսզի Ձեր խնամողները մի փոքր հանգստանան: Խնամողի կարճատև փոխարինումը երբեմն տրամադրվող կարճատև ստացիոնար խնամքն է, որը կարող է միանգամից ոչ ավել քան հինգ անընդմեջ օր տևել
- Խորհրդատվություն կորստի հետ օգնության հարցում
- Խորհրդատվություն սննդակարգի վերաբերյալ

Մենք վճարում ենք նաև հետևյալ հոսպիսային ծառայությունների համար, բայց միայն ճգնաժամային պահերին, երբ դրանք Բժշկական առումով անհրաժեշտ են՝ ամոքման կամ սուր բժշկական ախտանշանների կառավարման համար՝

- Շարունակական հիմքով բուժքույրական խնամք մինչև օրը 24 ժամ, որքան որ անհրաժեշտ է Ձեզ տանը պահելու համար
- Կարճաժամկետ ստացիոնար խնամք հիվանդանոցում՝ այնպիսի մակարդակով, որը չի կարող տան պայմաններում ապահովվել

Պալիատիվ խնամք

Պալիատիվ խնամքը հիվանդի և ընտանիքի շուրջ կենտրոնացած խնամքն է, որը բարելավում է կյանքի որակը՝ ակնկալելով, կանխելով և բուժելով տառապանքը: Պալիատիվ խնամքը չի պահանջում, որ անդամն ունենա վեց ամիս կամ ավելի քիչ կյանքի ակնկալվող տևողություն: Պալիատիվ խնամքը կարող է տրամադրվել բուժիչ խնամքի հետ մեկտեղ: Մենք ապահովագրում ենք պալիատիվ խնամքն այն Անդամների համար, ովքեր համապատասխանում են այս ծառայությունների համար Medi-Cal-ի իրավունակության պահանջներին:



Պալիատիվ խնամքը ներառում է հետևյալը՝

- Խնամքի նախօրոք պլանավորում
- Պալիատիվ խնամքի գնահատում և խորհրդատվություն
- Խնամքի ծրագիրը, որը ներառում է պալիատիվ և բուժման խնամքի բոլոր թույլատրված միջոցները
- Խնամքի թիմի ծրագիր, ներառյալ, սակայն չսահմանափակվելով հետևյալով՝
 - Բժշկության կամ ոսկրախտության բժիշկ
 - Բժշկի օգնական
 - Գրանցված բուժքույր
 - Վկայագրված մասնագիտական բուժքույր կամ բուժող բուժքույր
 - Սոցիալական աշխատող
 - Քահանա
- Խնամքի համակարգում
- Ցավի և ախտանիշների կառավարում
- Բժշկական առողջության և բժշկական սոցիալական ծառայություններ

Հոսպիտալացում

Անեսթեզիոլոգիական ծառայություններ

Մենք ապահովագրում ենք հիվանդանոցում փալու ընթացքում Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ անեսթեզիոլոգիական ծառայությունները: Անեսթեզիոլոգը մատակարար է, ով մասնագիտացված է հիվանդներին անեսթեզիա տրամադրելու մեջ: Անեսթեզիան դեղի մի տեսակ է, որն օգտագործվում է որոշ բժշկական կամ ատաճաբուժական ընթացակարգերի ժամանակ:

Ստացիոնար հիվանդանոցային ծառայություններ

Մենք ապահովագրում ենք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ հիվանդանոցային խնամք, երբ Ձեզ ընդունում են ցանցի հիվանդանոց: Ծառայությունները ներառում են՝ հիվանդասենյակ և սնունդ, դեղեր, սարքավորումներ, պատկերման և լաբորատոր ծառայություններ և այլ ծառայություններ, որոնք հիմնականում տրամադրում են հիվանդանոցները: Եթե Ձեզ ընդունում են ցանցի հիվանդանոց, Դուք պետք է մեզանից հաստատում ստանաք Ձեր վիճակի կայանացումից հետո ստացված խնամքի համար: Եթե հաստատում չստանաք, ապա հիվանդանոցում Ձեր փալը չի ապահովագրվի:



Ամբողջական գենոմի արագ սեկվենավորում

Ամբողջական գենոմի արագ սեկվենավորումը (Rapid Whole Genome Sequencing, «RWGS») ապահովագրված նպաստ է Medi-Cal որևէ անդամի համար, ով մեկ տարեկան է կամ ավելի փոքր, և ստանում է հիվանդանոցային ստացիոնար ծառայություններ ինտենսիվ խնամքի բաժանմունքում (Intensive Care Unit, «ICU»): Սա ներառում է անհատական սեկվենավորում, եռակի սեկվենավորում ծնողի կամ ծնողի և մանկան համար, ինչպես նաև գերարագ սեկվենավորում: RWGS-ը վիճակներն ախտորոշելու նոր մեթոդ է, որպեսզի մեկ տարեկան կամ ավելի փոքր երեխաների ICU խնամքն արդյունավետ լինի:

- ***Whole Child Model ապահովագրում ունեցող վարչաշրջաններում (Marin, Napa, Orange, Placer, San Mateo, Santa Cruz, Solano, Sonoma և Yolo)***

Եթե Ձեր երեխան իրավասու է California Children's Services («CCS») համար, մենք կապահովագրենք հիվանդանոցում մտալը և RWGS` Whole Child Model ծրագրի ներքո:

- ***California Children's Services ապահովագրում ունեցող վարչաշրջաններում (բոլոր մասցած վարչաշրջանները Medi-Cal ծրագրի Սպասարկման տարածքում)***

Եթե Ձեր երեխան իրավասու է California Children's Services («CCS») համար, CCS-ը կարող է ապահովագրել հիվանդանոցում մտալը և RWGS-ը:

Վիրահատության ծառայություններ

Մենք ապահովագրում ենք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ վիրահատություններ, որոնք իրականացվում են հիվանդանոցում:

Kaiser Permanente-ի կողմից ապահովագրվող ամբուլատոր դեղատոմսային դեղեր

Ամբուլատոր դեղատոմսային դեղերի մեծ մասն ապահովագրվում է Medi-Cal Rx-ի կողմից Վճարում ծառայության դիմաց Medi-Cal-ի միջոցով: Medi-Cal Rx ծրագրի մասին մանրամասների համար կարդացեք «Medi-Cal Rx-ի միջոցով ապահովագրվող ամբուլատոր դեղատոմսային դեղեր» վերնագիրն ավելի ուշ այս Գլուխ 4-ում՝ «Այլ Medi-Cal ծրագրեր և ծառայություններ, որոնք ապահովագրված չեն Kaiser Permanente-ի կողմից» հատվածում:

Գոյություն ունեն որոշ դեղատոմսային դեղեր և պարագաներ, որոնք մենք ապահովագրում ենք, քանի որ նահանգային օրենքը պահանջում է մեզանից ապահովագրել դրանք: Այս



հատվածը նկարագրում է դեղատոմսային դեղեր և պարագաներ, որոնք մենք ապահովագրում ենք նահանգային օրենքի շրջանակներում:

Էներյալ և պարէներյալ սնուցում

Մարմինն սնուցելու այս մեթոդներն օգտագործվում են, երբ առողջական վիճակը Ձեզ թույլ չի տալիս սովորական ձևով սնվել: Մենք ապահովագրում ենք էտերյալ և պարտերյալ սնուցման ապրանքներն, երբ դրանք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են: Էտերյալ սնուցման ֆորմուլաները և պարտերյալ սնուցման ապրանքները կարող են նաև ապահովագրվել Medi-Cal Rx-ի կողմից:

Հակաբեղմնավորիչ դեղերը և սարքերը

Մենք ապահովագրում ենք հակաբեղմնավորիչ դեղեր և սարքեր, երբ դրանք դուրս են գրվում Medi-Cal Ցանցի մատակարարի կողմից: Եթե հակաբեղմնավորիչ դեղեր կամ սարքեր եք ստանում Ցանցից դուրս գործող Medi-Cal մատակարարից, մատակարարը պետք է խնդրի Medi-Cal Rx-ից վճարել դրանց համար: Դուք ստիպված չեք վճարել ապահովագրված հակաբեղմնավորման համար: Ազատ վաճառվող հակաբեղմնավորման դեղերն ու սարքերն ապահովագրվում են Medi-Cal Rx-ի կողմից:

Շաքարախտի ստուգման պարագաներ

Նահանգային օրենքը պահանջում է, որ մենք ապահովագրենք շաքարախտի ստուգման պարագաները, երբ դուրս են գրվում Medi-Cal Ցանցի մատակարարի կողմից: Եթե ստանում եք Ձեր շաքարախտի ստուգման պարագաները Kaiser Permanente-ի ցանցից դուրս գտնվող դեղատնից, Ձեր դեղատունը կխնդրի Medi-Cal Rx-ին վճարել Ձեր պարագաների համար:

Մեր կողմից ապահովագրվող այլ դեղատոմսով դեղային պարագաներ

Մենք ապահովագրում ենք նաև ապրանքներ, որոնք նշանակվել են Ցանցից դուրս գործող հետևյալ Medi-Cal մատակարարների կողմից՝

- Ցանցից դուրս գործող բժիշկներ, եթե TheThe Permanente Medical Group-ը լիազորում է գրավոր ուղեգիրը ցանցից դուրս գործող բժշկի մոտ, և պարագան ապահովագրված է որպես այդ ուղեգրի մի մաս
- Ցանցից դուրս գործող բժիշկներ, եթե պարագան ապահովագրված Շտապ օգնության խնամք է կամ սպասարկման տարածքից դուրս գտնվող Հրատապ խնամք
 - Ցանցից դուրս գործող դեղագործը կամ հիվանդանոցի շտապ օգնության բաժանմունքը կարող է տրամադրել Ձեզ մինչև 72 ժամվա արտակարգ



Իրավիճակի պաշար

Medi-Cal Rx ծրագրի մասին մանրամասների համար կարդացեք «Medi-Cal Rx» վերնագիրն ավելի ուշ այս Գլուխ 4-ում՝ «Այլ Medi-Cal ծրագրեր և ծառայություններ, որոնք ապահովագրված չեն Kaiser Permanente-ի կողմից» հատվածում:

Օրական պաշարի սահմանափակում

Գոյություն ունի սահմանափակում, թե որքան դեղ կամ այլ պարագաներ կարող է տրամադրվել մեկ անգամ:

▪ **Հորմոնալ հակաբեղմնավորիչներ**

Նշանակող բժիշկը որոշում է, թե որքան հակաբեղմնավորիչ դեղ կամ պարագա նշանակել: Պաշարի ապահովագրման օրական սահմանափակումների նպատակով, Medi-Cal Ցանցի մատակարարներն են որոշում Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ պաշարը Ձեզ համար 30 օրվա, կամ 100 օրվա, կամ 365 օրվա համար: Մեկ անգամվա հակաբեղմնավորիչների առավելագույն քանակը, որը կարող էք ստանալ, 365 օրվա պաշարն է:

▪ **Բոլոր այլ պարագաները**

Նշանակող բժիշկը կամ ատամնաբույժն է որոշում նշանակվող դեղի, պաշարի կամ հավելման քանակը: Ցանցի բժիշկներն են որոշում Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ պաշարը Ձեզ համար 30 օրվա կամ 100 օրվա համար:

Ապահովագրված պարագայի առավելագույն քանակը, որը կարող էք ստանալ մեկ անգամ կա՛մ 30 օրում 30-օրյա պաշարն է, կա՛մ 100 օրում 100-օրյա պաշարն է: Օրական պաշարի սահմանափակումը գերազանցող դեղերի կամ պարագաների համար մենք չենք վճարում:

Դեղատուներ կարող է կրճատել օրական պաշարը 30-օրյա պաշարի որևէ 30 օրվա ժամանակահատվածում, եթե համարի, որ տվյալ դեղը կամ պարագան սահմանափակ քանակությամբ է առկա շուկայում կամ հատուկ դեղ է (ցանցի դեղատուներ կարող է ասել, եթե Ձեր ընդունած դեղն այդ շարքից է):



Kaiser Permanente-ի կողմից ապահովագրվող դեղատոմսային պարագաների դեղացուցակ

Մենք ապահովագրում ենք որոշ Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ պարագաներ, որոնք պահանջում են դեղատոմս և որոշակի պարագաներ, որոնք մատչելի են ազատ վաճառքում (over the counter, «OTC»): Մենք ապահովագրում ենք այս պարագաները, երբ ստանում եք դրանք որպես ապահովագրված հիվանդանոցում մնալու մի մաս, կամ երբ ստանում եք դրանք բժշկական այցելության շրջանակներում: Մենք նաև ապահովագրում ենք նահանգային օրենքով պահանջվող որոշ պարագաներ, երբ դրանք տրվում են ցանցի ամբուլատոր դեղատանը: Մենք ապահովագրում ենք Medi-Cal Ցանցի մատակարարների կողմից նշանակված պարագաներ, որոնք նշանակվել են իրենց արտոնագրի ու գործունեության շրջանակներում և մեր դեղացուցակի կանոնների համաձայն:

Մեր դեղացուցակը պարունակում է դեղերի ցուցակ, որը մեր Դեղատների և բուժագիտության հանձնաժողովը հաստատել է մեր Անդամների համար: Մեր Դեղատների և բուժագիտության հանձնաժողովը ցանցի բժիշկների և դեղագործների մի խումբ է, որն ուսումնասիրում է դեղերի անվտանգությունն ու արդյունավետությունը: Դեղատների և բուժագիտության հանձնաժողովը որոշում է, թե որ դեղերն են լինելու Kaiser Permanente-ի դեղացուցակում: Դեղատների և բուժագիտության հանձնաժողովը հանդիպում է առնվազն երեք ամիսը մեկ՝ քննարկելու ավելացումները կամ հանումները՝ հիմնվելով նոր տեղեկատվության կամ մատչելի դեղերի վրա:

Պարզելու համար, եթե դեղը դեղացուցակի մաս է կազմում, կամ դեղացուցակի կրկնօրինակը ստանալու համար, զանգահարեք Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով:

Նշում. այն հանգամանքը, որ որևէ դեղ ընդգրկված է ցուցակում, դեռ չի նշանակում, որ Ձեր բժիշկն անպայման նշանակելու է այն որոշակի հիվանդության կամ առողջական խնդրի համար:

Medi-Cal Rx-ի կողմից ապահովագրվող ամբուլատոր դեղերի Պայմանագրային դեղերի ցանկ

Medi-Cal Rx ծրագրի մասին մանրամասների համար կարդացեք «Medi-Cal Rx» վերնագիրն ավելի ուշ այս Գլուխ 4-ում՝ «Այլ Medi-Cal ծրագրեր և ծառայություններ, որոնք ապահովագրված չեն Kaiser Permanente-ի կողմից» հատվածում:



Դեղատներ

Կարող եք ստանալ Ձեր դեղատոմսային դեղերը Kaiser Permanente ցանցի դեղատանը, կամ կարող եք այցելել Medi-Cal Rx դեղատուն Ձեր Medi-Cal դեղատոմսերի մեծամասնության համար: Եթե Ձեր դեղատոմսը հետազոտական բուժման կամ ապահովագրված հոսպիտալին ծառայությունների մասն է, ապա պետք է ստանաք Ձեր դեղատոմսով դեղը Kaiser Permanente ցանցի դեղատանը:

- **Kaiser Permanente դեղատնից դեղատոմսով դեղեր ստանալը**

Կարող եք գտնել մեր դեղատների վայրերը մեր կայքում՝ **kp.org/finddoctors** (անգլերեն), կամ զանգահարեք Անդաճների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**) հեռախոսահամարով՝ Ձեր տարածքում ցանցի դեղատների հասցեների և աշխատանքային ժամերի համար:

Երբ Դուք դեղատուն ընտրեք, Ձեր դեղատոմսը Ձեզ հետ տարեք դեղատուն: Դեղատանը ներկայացրեք Ձեր դեղատոմսը՝ Ձեր Kaiser Permanente նույնականացման (Identification, ID) քարտի հետ միասին: Անպայման տեղեկացրեք դեղատանը Ձեր կողմից ընդունվող բոլոր դեղերի և Ձեր ունեցած պերզիանների մասին: Եթե որևէ հարց ունեք դեղատոմսի վերաբերյալ, անպայման հարցրեք դեղագործին:

Երբ Ձեզ հարկավոր է համալրել դեղերը, Դուք կարող եք նախապես զանգահարել, փոստային առաքում պատվիրել կամ դրանք առցանց պատվիրել: Որոշ դեղատներ դեղերի ապահովագրված համալրում չեն կատարում, և ո՛չ բոլոր պարագաներն են, որ կարող են ուղարկվել մեր փոստային առաքման ծառայության միջոցով: Ստուգեք Ձեր դեղատանը, եթե հարցեր ունեք այն մասին, թե արդյոք դեղատոմսով դեղը կարող է Ձեզ փոստով ուղարկվել կամ ձեռք բերվել ցանցի դեղատանը: Մեր փոստային առաքման ծառայության միջոցով առաքվող պարագաների ցուցակը կարող է փոփոխվել ցանկացած պահի՝ առանց նախազգուշացման:

- **Medi-Cal Rx դեղատնից դեղատոմսով դեղեր ստանալը**

Տեսեք «Medi-Cal Rx» վերնագիրը «Այլ Medi-Cal ծրագրեր և ծառայություններ, որոնք ապահովագրված չեն Kaiser Permanente-ի կողմից» հատվածում, որպեսզի իմանաք՝ ինչպես կարող եք Medi-Cal Rx դեղատուն գտնել Kaiser Permanente ցանցից դուրս:



Medicare Մաս D

Եթե Դուք Medi-Cal-ի ապահովագրություն ունեք և իրավասու եք կամ անդամակցում եք Medicare-ի Մաս D ապահովագրությանն, ապա առաջինը վճարում է Medicare-ի Մաս D-ն: Երբեմն Medi-Cal-ի կողմից ապահովագրված դեղը կարող է ապահովագրված չլինել Medicare Մաս D-ի կողմից: Եթե Medicare-ը չի վճարում մի դեղի համար, որի համար վճարում է Medi-Cal-ը, հնարավոր է, որ Medi-Cal-ը շարունակի վճարել դրա համար: Եթե Դուք Kaiser Permanente Senior Advantage-ի անդամ եք և ցանկանում եք ավելին իմանալ Medicare-ի Մաս D-ի դեղերի ապահովագրության մասին, կարդացեք Ձեր Senior Advantage-ի Ապահովագրության ապացույցը: Դուք կարող եք կարդալ նաև այն մասին, թե ինչպես լրացուցիչ օգնություն ստանալ Ձեր գրպանից վճարվող ծախսերը վճարելու համար:

Medicare-ի Մաս D-ի մասին ավելին իմանալու համար (այդ թվում՝ ինչպես անդամագրվել Մաս D-ին) խնդրում ենք զանգահարել Անդամների ծառայություններ՝ **1-800-443-0815** (TTY **711**) հեռախոսահամարով: Կարող եք նաև անվճար զանգահարել Medicare՝ **1-800-MEDICARE (1-800-633-4227)** հեռախոսահամարով (TTY **1-877-486-2048**) կամ այցելել իրենց կայքը՝ **www.medicare.gov** (անգլերենով) հասցեով:

Վերականգնողական և առօրյա կյանքի հմտությունների պահպանման («թերապիա») ծառայություններ և սարքեր

Վերականգնողական և առօրյա կյանքի հմտությունների պահպանման ծառայություններ և սարքեր՝ օգնելու ֆասսվածքներ, հաշմանդամություն կամ քրոնիկական վիճակներ ունեցող մարդկանց վերականգնել իրենց հոգեկան և ֆիզիկական հմտությունները:

Մենք ապահովագրում ենք վերականգնողական և առօրյա կյանքի հմտությունների պահպանման ծառայությունները, որոնք նկարագրված են այս բաժնում, եթե բավարարվում են ստորև նշված բոլոր պահանջները՝

- Ծառայությունները Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են
- Ծառայությունները տրամադրվում են առողջական վիճակի համար
- Ծառայությունների նպատակն է օգնել Ձեզ պահպանել, ձևավորել կամ կատարելագործել առօրյա կյանքի համար անհրաժեշտ հմտություններ ու կարողություններ
- Դուք ծառայություններ եք ստանում Ծրագրի հաստատությունում, եթե իհարկե Medi-Cal Ցանցի բժիշկը չափի, որ Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է Ձեզ համար մեկ այլ վայրում ստանալ այս ծառայությունները, կամ Ծրագրի հաստատությունը չի կարող բուժել Ձեր առողջական վիճակը:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

- Ծառայությունն ապահովագրված են Medi-Cal-ի կողմից

Մենք ապահովագրում ենք այս վերականգնողական և առօրյա կյանքի հմտությունների պահպանման ծառայությունները՝

Ասեղնաբուժություն

Մենք ապահովագրում ենք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ասեղնաբուժության ծառայություններ՝ համընդհանուր ճանաչված առողջական վիճակի արդյունքում առաջացած ուժեղ մշտական քրոնիկական ցավը կանխելու, փոփոխելու կամ թեթևացնելու համար: Ամբուլատոր ասեղնաբուժական ծառայությունների համար ուղեգիր կամ նախնական թույլտվություն հարկավոր չէ:

Ամբուլատոր ասեղնաբուժական ծառայություններն՝ ասեղներով էլեկտրական ստիմուլացիայով կամ առանց դրա, ապահովագրվում են, երբ ստացվում են մեր Medi-Cal Ցանցի մատակարարների կամ American Specialty Health ցանցի մատակարարների կողմից: Ասեղնաբուժության ծառայությունների մասին մանրամասների համար խնդրում ենք զանգահարել American Specialty Health՝ **1-800-678-9133 (TTY 711)** հեռախոսահամարով:

Աուդիոլոգիա (լսողություն)

Մենք ապահովագրում ենք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ լսողության ծառայությունները:

Վարվեցողական առողջության բուժում

Մենք ապահովագրում ենք վարվեցողական առողջության բուժման (behavioral health treatment, «BHT») ծառայությունները 21 տարեկանից ցածր տարիքի անդամների համար EPSDT նպաստի միջոցով: BHT-ն ներառում է ծառայությունների և բուժման ծրագրեր, ինչպես օրինակ՝ վարքագծի կիրառական վերլուծություն և փաստերի վրա հիմնված վարքագծի միջամտության ծրագրեր, որոնք հնարավորինս լավագույն ձևով զարգացնում կամ վերականգնում են 21 տարեկանից ցածր տարիքի անձի ֆունկցիոնալ վիճակը:

BHT ծառայությունները հմտություններ են սովորեցնում՝ վարքագծային դիտարկում և ամրապնդում օգտագործելով կամ սովորեցնելով թիրախային վարքի յուրաքանչյուր քայլ: BHT ծառայությունները հիմնված են վստահելի փաստերի վրա: Դրանք փորձառական չեն: BHT ծառայությունների օրինակները ներառում են վարքագծային միջամտություններ, ճանաչողական վարքագծային միջամտության փաթեթներ, վարքագծի համապարփակ բուժում և կիրառական վարքային վերլուծություն:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

BHT ծառայությունները պետք է բժշկական տեսանկյունից անհրաժեշտ լինեն, նշանակված լինեն վկայագրված բժշկի կամ հոգեբույժի կողմից, հաստատված լինեն մեր կողմից և տրամադրվեն հաստատված բուժման ծրագրի համաձայն:

Բուժման ծրագիր՝

- Պետք է մշակվի այնպիսի Medi-Cal Ցանցի մատակարարի կողմից, որը հանդիսանում է BHT որակավորված մատակարար և կարող է իրականացվել BHT որակավորված մատակարարի, BHT որակավորված մասնագետի, BHT որակավորված պարամասնագետի կողմից
- Որոշակի ժամանակահատվածի համար սահմանված չափելի անձնական նպատակներ է պարունակում, որոնք մշակվում և հաստատվում են Անդամի համար՝ աուտիզմի ծառայությունների որակավորված մատակարարի կողմից
- Առնվազն վեց ամիսը մեկ վերանայվում է աուտիզմի ծառայությունների որակավորված մատակարարի կողմից և փոփոխվում, երբ դրա անհրաժեշտությունը կա
- Ապահովում է, որ միջամտությունները համապատասխանում են ապացույցների վրա հիմնված BHT մեթոդներին
- Պարունակում է ծնողների կամ խնամող(ներ)ի, դպրոցի, հաշմանդամության նահանգային ծրագրերի և, անհրաժեշտության դեպքում, այլ անձանց հետ խնամքի համակարգում
- Նախատեսում է ծնողի/խնամողի վերապատրաստություն, աջակցություն և մասնակցություն
- Նկարագրում է Անդամի վարվեցողական առողջության խանգարումները, որոնք պետք է կարգավորվեն տվյալ ծրագրով, և արդյունքների գնահատման չափորոշիչները, որոնց օգնությամբ պետք է գնահատվի, թե ինչ չափով են իրականացվել վարքի կարգավորման հարցում սահմանված նպատակները
- Պարունակում է ծրագրի նպատակի և խնդիրների իրականացման համար անհրաժեշտ ծառայության տեսակը, դրա տրամադրման ժամերի քանակը և ծնողի մասնակցությունը դրանում, ինչպես նաև հաճախականությունը, որով գնահատվում և զեկուցվում է Անդամի առաջընթացը
- Կիրառում է ապացույցների վրա հիմնված այնպիսի մեթոդներ, որոնք զարգացման ընդհանուր խանգարումը կամ աուտիզմը բուժելու հարցում կլինիկական արդյունավետություն են ցույց տվել



Medi-Cal-ի ապահովագրությունը չի ներառում՝

- BHT, որը տրամադրվում է, երբ շարունակվող կլինիկական օգուտ չի ակնկալվում
- Հիմնականում խնամողին փոխարինելու, ցերեկային խնամքի կամ ուսուցանական ծառայություններ
- Փոխհատուցում բուժման ծրագրին ծնողի մասնակցության համար
- Բուժում, որի նպատակն է աշխատանքի տեղավորումը կամ ազատ ժամանցի միջոցառումները
- Խնամակալական խնամք, որը հիմնականում (i) տրամադրվում է առօրյա կյանքում անհրաժեշտ գործողությունների (օրինակ՝ լոգանք ընդունել, հագնվել, սնվել և անձնական հիգիենա պահպանել) հարցում օգնություն ցույց տալու նպատակով, (ii) տրամադրվում է Անդամի կամ այլ անձանց ապահովությունը պահպանելու նպատակով և (iii) կարող է տրամադրվել մասնագիտական հմտություններ կամ վերապատրաստում չունեցող անձանց կողմից
- Ոչ ավանդական միջավայրում, օրինակ՝ հանգստյան տներում, սպաներում, ճամբարներում և նման այլ վայրերում տրամադրվող ծառայություններ, պաշարներ կամ ընթացակարգեր
- Ծնողի, օրինական խնամակալի կամ օրենքով պատասխանատու որևէ այլ անձի կողմից տրամադրված ծառայություններ

Եթե հարցեր ունեք, զանգահարեք Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**) հեռախոսահամարով:

Սրտի վերականգնում

Մենք ապահովագրում ենք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ սրտի վերականգնման ստացիոնար և ամբուլատոր ծառայություններ:

Երկարատև օգտագործման բժշկական սարքավորում «DME»

Երկարատև օգտագործման բժշկական սարքավորումները (Durable Medical Equipment, «DME») ներառում են հետևյալ չափանիշները բավարարող պարագաներ՝

- Կրկնակի օգտագործման համար նախատեսված պարագաներ:
- Պարագան առաջնահերթ և սովորաբար օգտագործվում է բժշկական նպատակով
- Պարագան սովորաբար օգտակար է միայն հիվանդություն կամ վնասվածք ունեցող անձի համար



- Պարագան հարմար է տան օգտագործման համար
- Պարագան անհրաժեշտ է Ձեզ կյանքի առօրյա գործողություններում (activity of daily living, «ADL») օգնության համար

Երկարատև օգտագործման բժշկական սարքավորումները պահանջում են նախնական հաստատում: Մենք ապահովագրում ենք բժշկական պարագաների, սարքավորումների և այլ ծառայությունների ձեռքբերումն ու վարձակալությունը՝ վկայագրված մատակարարի նշանակմամբ, եթե ապրանքը Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, և այն նախնական հաստատվել է Ձեզ համար: Ապահովագրությունը սահմանափակված է Ձեր բժշկական կարիքները պատշաճ կերպով բավարարող ամենաէժեքային հարմարանքով: Մենք ենք ընտրում մատակարարին: Դուք պետք է վերադարձնեք սարքավորումը կամ մեզ վճարեք արդար շուկայական գինը, երբ մենք այլևս չապահովագրենք այն:

Սովորաբար մենք չենք ապահովագրում՝

- Լավ ինքնազգացողության, հարմարավետության կամ շքեղության սարքավորումներ կամ հատկանիշներ, բացառությամբ սպառողական մակարդակի կրծքի պոմպեր, ինչպես նկարագրված էր այս գլխի «Մայրություն և նորածնի ինամբ» վերնագրի «Կրծքի պոմպեր և պարագաներ» ենթավերնագրի ներքո
- Ապրանքներ, որոնց նպատակն առօրյա կյանքի սովորական գործունեությունը պահպանելը չէ, ինչպես օրինակ մարզանքի սարքավորումները (այդ թվում՝ այն հարմարանքների, որոնց նպատակն է լրացուցիչ նեցուկ ապահովել ազատ ժամանակի կամ մարզական խաղերի ժամանակ)
- Հիգիենայի սարքավորումներ, բացի Բժշկական տեսանկյունից անհրաժեշտից 21 տարեկանից ցածր տարիքի Անդամի համար
- Ոչ բժշկական ապրանքներ, ինչպես օրինակ՝ սաունայի լոգարաններ կամ վերելակներ
- Ձեր տան կամ մեքենայի փոփոխություններ, բացի աստիճանների վերելակներից, որոնք չեն պահանջում Ձեր տան մշտական փոփոխություն: Համայնքային աջակցությունների ներքո ապահովագրվող փոփոխությունների մասին մանրամասների համար կարդացեք այդ վերնագիրն ավելի ուշ այս Գլուխ 4-ում:
- Արյան և մարմնի այլ նյութերի ստուգման սարքեր, բացի շաքարախտի ստուգման պարագաներից: Շաքարախտի պարագայում արյան գլյուկոզայի մոնիտորները (ներառյալ՝ գլյուկոզայի շարունակական մոնիտորներ), ստուգման երիզները և լանցետներն ապահովագրվում են: Տեսեք այս գլխի վերոնշյալ «Շաքարախտի ստուգման պարագաներ» հատվածը մանրամասների համար:



4 | Նպաստներ և ծառայություններ

- Սրտի և թոքերի աշխատանքը հսկող էլեկտրոնային սարքեր, բացառությամբ մանկական շնչարգելության ստուգման սարքերը
- Սարքավորման նորոգում կամ փոխարինում կորստի, գողության կամ սխալ օգտագործման պատճառով, բացի Բժշկական տեսանկյունից անհրաժեշտից 21 տարեկանից ցածր տարիքի Անդամի համար
- Այլ պարագաներ, որոնք սովորաբար չեն օգտագործվում առողջապահական խնամքի նպատակներով

Whole Child Model ունեցող վարչաշրջաններում լսողական սարքերի ապահովագրում

Whole Child Model ծրագիրը Medi-Cal ծրագիր է հետևյալ վարչաշրջաններում՝ Marin, Napa, Orange, Placer, San Mateo, Santa Cruz, Solano, Sonoma և Yolo վարչաշրջաններ: Այս վարչաշրջաններում մենք ապահովագրում ենք լսողական սարքերը բոլոր Անդամների համար, եթե՝

- Ձեզ ստուգել են լսողության կորստի համար
- Լսողական սարքերը Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են
- Դուք դեղատոմս ունեք Ձեր բժշկից:

Ապահովագրությունը սահմանափակված է Ձեր բժշկական կարիքները բավարարող ամենաէժեք սարքով: Մենք կրնտրենք, թե ով Ձեզ կմատակարարի լսողական սարքը: Մենք ապահովագրում ենք մեկ լսողական սարք, բացառությամբ եթե մեկական լսողական սարք յուրաքանչյուր ականջի համար ավելի լավ արդյունք է տալիս, քան մեկը:

Medi-Cal-ի շրջանակներում մենք ապահովագրում ենք հետևյալը յուրաքանչյուր ապահովագրված լսողական սարքի համար՝

- Հարմարեցման համար անհրաժեշտ ականջի կաղապարներ
- Մեկ ստանդարտ մարտկոցի փաթեթ
- Այցելություններ՝ վստահ լինելու համար, որ սարքը լավ է աշխատում
- Ձեր լսողական սարքը մաքրելու և հարմարեցնելու այցելություններ
- Լսողական սարքի վերանորոգում:

Medi-Cal-ի շրջանակներում մենք կփոխարինենք լսողական սարքը, եթե՝

- Ձեր լսողության կորուստն այն աստիճանի է, որ Ձեր ներկա լսողական սարքն ի վիճակի չէ այն ուղղել



- Ձեր լսողական սարքը կորել, գողացվել կամ խափանվել է (և հնարավոր չէ այն վերանորոգել), և դա Ձեր մեղքով չի եղել: Դուք պետք է մեզ գրավոր բացատրեք՝ ինչպես է դա պատահել

21 տարեկան և ավելի բարձր տարիքի չափահասների համար Medi-Cal ապահովագրությունը չի ներառում՝

- Լսողական սարքի մարտկոցների փոխարինում

California Children's Services ունեցող վարչաշրջաններում լսողական սարքերի ապահովագրում

▪ **Լսողական սարքեր 21 տարեկանից ցածր տարիքի Անդամների համար**

Նահանգային օրենքը պահանջում է, որ երեխաները, որոնց լսողական սարքերն են պահանջվում, ուղարկվեն California Children's Services («CCS») ծրագիր՝ պարզելու համար, եթե երեխան իրավասու է CCS-ի համար: Եթե երեխան իրավասու է CCS-ի համար, CCS-ը կապահովագրի Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ լսողական սարքերի արժեքը: Եթե երեխան իրավասու չէ CCS-ի համար, մենք կապահովագրենք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ լսողական սարքերը՝ որպես Medi-Cal-ի ապահովագրության մաս:

▪ **Լսողական սարքեր 21 տարեկան և ավելի բարձր տարիքի Անդամների համար**

Medi-Cal-ի շրջանակներում մենք ապահովագրում ենք հետևյալը յուրաքանչյուր ապահովագրված լսողական սարքի համար՝

- Հարմարեցման համար անհրաժեշտ ականջի կաղապարներ
- Մեկ ստանդարտ մարտկոցի փաթեթ
- Այցելություններ՝ վստահ լինելու համար, որ սարքը լավ է աշխատում
- Ձեր լսողական սարքը մաքրելու և հարմարեցնելու այցելություններ
- Լսողական սարքի վերանորոգում:

Medi-Cal-ի շրջանակներում մենք կփոխարինենք լսողական սարքը, եթե՝

- Ձեր լսողության կորուստն այն աստիճանի է, որ Ձեր ներկա լսողական սարքն ի վիճակի չէ այն ուղղել



4 | Նպաստներ և ծառայություններ

- Ձեր լսողական սարքը կորել է, այն գողացել են կամ կոտրվել է (և հնարավոր չէ սարքել), և դա ձեր մեղքով չի եղել: Դուք պետք է մեզ գրավոր բացատրեք՝ ինչպես է դա պատահել

21 տարեկան և ավելի բարձր տարիքի չափահասների համար Medi-Cal ապահովագրությունը չի ներառում՝

- Լսողական սարքի մարտկոցների փոխարինում

Ցանր մատուցվող առողջապահական ծառայություններ

Մենք ապահովագրում ենք Ձեր տանը տրամադրվող Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ առողջապահական ծառայությունները, որոնք նշանակված են որակավորված Medi-Cal Ցանցի մատակարարի կողմից, երբ հետևյալներից բոլորը համապատասխանում են իրականությանը՝

- Դուք չեք կարող տանից դուրս գալ (Ձեր տեղաշարժը զգալիորեն սահմանափակված է Ձեր տան կամ Ձեր որևէ բարեկամի կամ ընտանիքի անդամի տան տարածքով)
- Ձեր վիճակը պահանջում է բուժքրոջ, ֆիզիոթերապևտի, աշխատանքային կամ խոսքի թերապևտի ծառայություններ
- Ցանցի բժիշկը համարում է, որ հնարավոր է տանը վերահսկել և կառավարել Ձեր խնամքը
- Ցանցի բժիշկը համարում է, որ ծառայությունները կարող են ապահով և արդյունավետ կերպով տրամադրվել Ձեր տանը
- Դուք ծառայությունները ստանում եք մեր Medi-Cal Ցանցի մատակարարներից

Ցանր մատուցվող առողջապահական ծառայությունները սահմանափակվում են այն ծառայություններով, որոնք ապահովագրում է Medi-Cal-ը, ներառյալ՝

- Կես դրույքով հմուտ բուժքույրական խնամք
- Կես դրույքով տնային առողջապահական օգնական
- Հմուտ ֆիզիկական, աշխատանքային և խոսքի թերապիա
- Բժշկական սոցիալական ծառայություններ
- Բժշկական պարագաներ



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Բժշկական պարագաներ, սարքավորումներ և մեծ սարքեր

Մենք ապահովագրում ենք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ բժշկական սարքավորում, հարմարանքներ և պարագաներ, որոնք դուրս են գրված Medi-Cal Ցանցի մատակարարի կողմից, ներառյալ՝ տեղադրված լսողական սարքեր: Որոշ բժշկական պարագաներ ապահովարգված են Վճարում ծառայության դիմաց (Fee-for-Service, «FFS») Medi-Cal Rx-ի միջոցով, և ոչ մեր կողմից: Կարող եք դեղատանը հարցնել, թե որ պարագաներն են ապահովագրվում Medi-Cal Rx-ի կողմից: Medi-Cal Rx ծրագրի մասին մանրամասների համար կարդացեք «Medi-Cal Rx» վերնագիրն ավելի ուշ այս Գլուխ 4-ում՝ «Kaiser Permanente-ի կողմից չապահովագրվող այլ նպաստներ և ծրագրեր» հատվածում:

Ակնարկ. անպահության պարագաներն ապահովագրված են միայն ինչպես նկարագրված են DHCS Մատակարարների ուղեցույցում:

Medi-Cal-ը չի ապահովագրում՝

- Տան կենցաղի սովորական իրեր, ներառյալ, սակայն չսահմանափակվելով՝
 - Կաշուն ժապավեն (բոլոր տեսակները)
 - Բժշկական սպիրտ
 - Կոսմետիկա
 - Բամբակե գնդիկներ և ձողիկներ
 - Բամբակաձողիկներ, չորացնող փոշիներ
 - Անձեռոցիկներ
 - Կախարդի շագանակ
- Տան կենցաղի սովորական իրեր, ներառյալ, սակայն չսահմանափակվելով՝
 - Սպիտակ վագելին
 - Չոր մաշկի յուղեր և լոսյոններ
 - Տալկ և տալկի պարունակությամբ ապրանքներ
 - Օքսիդացնող միջոցներ, օրինակ՝ ջրածնի պերօքսիդ
 - Կարբամիդ պերօքսիդ և նատրիումի պերբորատ
- Առանց դեղատոմսի շամպուններ
- Արտաքին օգտագործման լուծույթներ, որոնք պարունակում են բենզոնաթթվի և սալիցիլաթթվի քսուքներ, սալիցիլաթթվի կրեմ, քսուք կամ հեղուկ և ցինկի օքսիդի մածուկ



- Այլ իրեր, որոնք առողջապահական խնամքում առաջնային օգտագործում չունեն, և որոնք սովորաբար և հիմնականում օգտագործվում են մարդկանց կողմից, ովքեր դրանց հատուկ բժշկական կարիքը չունեն

Աշխատանքային թերապիա

Մենք ապահովագրում ենք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ աշխատանքային թերապիայի ծառայություններ, ներառյալ՝ աշխատանքային թերապիայի գնահատում, բուժման պլանավորում, բուժում, հրահանգներ և խորհրդատվության ծառայություններ:

Օրթոպեդիկ սարքեր/պրոթեզներ

Մենք ապահովագրում ենք պրոթեզներ և օրթոպեդիկ սարքեր, եթե բավարարվում են հետևյալ պայմանները՝

- Պարագան Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է մարմնի մասի աշխատանքը վերականգնելու համար (միայն պրոթեզների համար)
- Պարագան դուրս է գրվել Ձեզ համար
- Պարագան Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է մարմնի մասին օժանդակելու համար (միայն օրթոպեդիայի համար)
- Պարագան Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է Ձեզ առօրյա կյանքի գործողություններն անելու համար
- Պարագան հարկավոր է Ձեր ընդհանուր բժշկական վիճակի համար
- Պարագան ապահովագրված է Medi-Cal-ի կողմից

Պարագաները պետք է նախնական հաստատում ունենան: Դրանք ներառում են՝ տեղադրված լսողական սարքեր, կրծքի պրոթեզներ/կրծքագեղձի հեռացման կրծկալ, այրվածքի համար սեղմող հագուստ, ինչպես նաև պրոթեզներ մարմնի մասի գործառույթը վերականգնելու կամ փոխարինելու համար, կամ մարմնի թուլացած կամ այլաձևած մասին օժանդակելու համար: Ապահովագրությունը սահմանափակված է Ձեր բժշկական կարիքները պատշաճ կերպով բավարարող ամենաէֆեկտիվ պարագայով կամ սարքավորումով: Մենք ենք ընտրում մատակարարին:

Ստոմայական և ուրոլոգիական պարագաներ

Ստոմայական և ուրոլոգիական պարագաների համար պետք է նախնական հաստատում ստանաք: Մենք ապահովագրում ենք ստոմայական պարկեր, մեզի կաթետրներ, հեղուկի հեռացման պարկեր, ռոռգման պարագաներ և մածուցիկ նյութեր: Սա չի ներառում



հարմարության պարագաներ: Մենք չենք ապահովագրում նաև շքեղության համար օգտագործվող սարքեր և հատկանիշներ:

Ֆիզիոթերապիա

Մենք ապահովագրում ենք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ֆիզիոթերապիայի ծառայություններ, ներառյալ՝ ֆիզիոթերապիայի գնահատում, բուժման պլանավորում, բուժում, հրահանգներ, խորհրդատվության ծառայություններ և տեղային կիրառման դեղորայք:

Թոքային վերականգնում

Մենք ապահովագրում ենք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ թոքային վերականգնում, երբ նշանակված է Medi-Cal Ցանցի մատակարարի կողմից:

Հմուտ բուժքույրական խնամքի հաստատության ծառայություններ

Մենք ապահովագրում ենք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ հմուտ բուժքույրական խնամքի հաստատության ծառայություններ, եթե Դուք հաշմանդամ եք և խնամքի բարձր մակարդակի կարիքն ունեք: Այս ծառայությունները ներառում են սենյակ և սնունդ վկայագրված հաստատությունում, որը տրամադրում է շուրջօրյա հմուտ բուժքույրական խնամք:

Խոսքի թերապիա

Մենք ապահովագրում ենք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ խոսքի թերապիա:

Տրանսգենդերային ծառայություններ

Մենք ապահովագրում ենք տրանսգենդերային ծառայություններ (զենդերի հաստատման ծառայություններ), երբ դրանք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են, կամ երբ ծառայությունները համապատասխանում են վերականգնողական վիրաբուժության չափանիշներին:

Կլինիկական փորձարկումներ

Մենք ապահովագրում ենք կլինիկական փորձարկման հետ կապված Մովորական խնամքի ծառայությունները, եթե բավարարվում են ստորև նշված բոլոր պայմանները՝

- Մենք կվճարեինք այդ ծառայությունների համար, եթե դրանք կլինիկական փորձարկման հետ կապ չունենային



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

- Քաղցկեղի կամ կյանքը վտանգող այլ առողջական վիճակի (վիճակ, որի դեպքում մահը հավանական է, եթե դրա ընթացքը չդադարեցվի) կլինիկական փորձարկման նախագծի համաձայն՝ Դուք համապատասխանում եք դրան մասնակցելու պահանջներին, ինչը որոշվում է ստորև նշված եղանակներից մեկով՝
 - Kaiser Permanente-ի Medi-Cal Ցանցի մատակարարներից մեկն է կայացնում այդ որոշումը
 - Դուք մեզ այդ որոշումը հաստատող բժշկական և գիտական տեղեկություններ եք տրամադրում
- Եթե Kaiser Permanente-ի Medi-Cal Ցանցի մատակարարներից որևէ մեկը մասնակցում է կլինիկական փորձարկմանը և պատրաստ է Ձեզ ընդգրկելու այդ կլինիկական փորձարկման մեջ՝ որպես մասնակից, ապա Դուք պետք է Kaiser Permanente Medi-Cal Ցանցի մատակարարի միջոցով մասնակցեք կլինիկական փորձարկմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ կլինիկական փորձարկումն իրականացնում է Ձեր բնակվող նահանգից դուրս
- Կլինիկական փորձարկումը Հաստատված կլինիկական փորձարկում է

«Հաստատված կլինիկական փորձարկում» նշանակում է կյանքը վտանգող առողջական վիճակի կանխմանը, հայտնաբերմանը կամ բուժմանը նվիրված I փուլի, II փուլի, III փուլի կամ IV փուլի կլինիկական փորձարկում: Կլինիկական փորձարկումը պետք է բավարարի հետևյալ պայմաններից մեկը՝

- Հետազոտության կամ ուսումնասիրության մեջ ԱՄՆ Մննդի և դեղորայքի վարչության կողմից ստուգվող որևէ նոր հետազոտական դեղ է կիրառվում
- Հետազոտությունը կամ ուսումնասիրությունն այնպիսի դեղի փորձարկում է, որն ազատված է նոր հետազոտական դեղերի փորձարկմանը ներկայացվող պահանջներից
- Հետազոտությունը կամ ուսումնասիրությունը հաստատված է կամ ֆինանսավորվում է ստորև նշվածներից առնվազն մեկի կողմից՝
 - Առողջապահության ազգային ինստիտուտ
 - Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոններ
 - Առողջապահական խնամքի հետազոտության և որակի գործակալություն
 - Medicare և Medicaid ծառայությունների կենտրոններ
 - Վերոնշյալ երկու կամ ավելի կազմակերպությունների մասնակցությամբ համատեղ խումբ կամ կենտրոն, կամ Պաշտպանության դեպարտամենտ, կամ Վետերանների գործերի դեպարտամենտ



- Առողջապահության ազգային ինստիտուտների կողմից քաղցկեղի կենտրոնի աջակցության դրամաշնորհների համար թողարկված հանձնարարականներում նշված և դրա պահանջները բավարարող որևէ ոչ կառավարական գիտահետազոտական հիմնարկություն
- Վետերանների գործերի դեպարտամենտ, կամ Պաշտպանության դեպարտամենտ, կամ Էներգետիկայի դեպարտամենտ, բայց միայն այն դեպքում, եթե հետազոտությունը կամ ուսումնասիրությունը ստուգվել և հաստատվել է մասնագիտական գնահատման համակարգի միջոցով, որը՝ ըստ ԱՄՆ Առողջապահության և հանրային ծառայությունների քարտուղարի, բավարարում է ստորև նշված բոլոր պայմանները. (1) այն համեմատելի է Առողջապահության ազգային ինստիտուտների՝ հետազոտությունների և ուսումնասիրությունների մասնագիտական գնահատման համակարգի հետ և (2) այն գնահատման արդյունքներից որևէ շահ չունեցող և համապատասխան որակավորում ունեցող անձանց կողմից գիտության ամենաբարձր չափանիշներով կատարվող անկողմնակալ գնահատում է ապահովում

Մենք չենք ապահովագրում այն ծառայությունները, որոնք տրամադրվում են միայն տվյալներ հավաքելու և վերլուծելու նպատակով:

Եթե հետազոտական ուսումնասիրության հետ կապված ծառայությունը ներառում է ամբուլատոր դեղատոմսային դեղ, պարագա կամ հավելում, որն այլապես կապահովագրվեր Medi-Cal Rx-ի կողմից, մենք չենք ապահովագրի այն: Դուք կամ Ձեր մատակարարը պետք է խնդրեք դեղատոմսային պարագայի ապահովագրում Medi-Cal Rx-ից:

Լաբորատոր և ճառագայթման ծառայություններ

Մենք ապահովագրում ենք ամբուլատոր և ստացիոնար լաբորատոր ու ռենտգեն ծառայություններ, երբ Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է: Ապահովագրվում են առաջանցիկ պատկերման ընթացակարգեր, օրինակ՝ Համակարգչային տոմոգրաֆիա (Computerized Tomography, CT) սկանավորում, Մագնիսական ռեզոնանսային պատկերում (Magnetic resonance imaging, MRI) -ներ և Բնդիտրոնային էմիսիոն տոմոգրաֆիա (Positron Emission Tomography, PET) սկանավորում, կախված բժշկական անհրաժեշտությունից:



Կանխարգելիչ և բարեկեցության ծառայություններ և քրոնիկական հիվանդությունների կառավարում

Կանխարգելիչ ծառայություններ

Մենք ապահովագրում ենք հետևյալ կանխարգելիչ ծառայությունները՝

- Պատվաստումներ, որոնք խորհուրդ են տրվում Պատվաստման պրակտիկաների խորհրդատվական կոմիտեի կողմից
- Ընտանիքի պլանավորման ծառայություններ
- Մանկաբուժության ամերիկյան ակադեմիայի Bright Futures խորհուրդներ (https://downloads.aap.org/AAP/PDF/periodicity_schedule.pdf) [անգլերեն]
- Անբարենպաստ մանկության փորձառությունների (Adverse childhood experience, ACE) գնում
- Ասթմայի կանխարգելման ծառայություններ
- Կանխարգելիչ ծառայություններ կանանց համար, որոնք խորհուրդ են տրվում Բժշկության ինստիտուտի, Առողջապահական ծառայությունների ռեսուրսների վարչության և Մանկաբարձության և գինեկոլոգիայի ամերիկյան քոլեջի կողմից
- Օգնություն ծխելը դադարեցնելու համար, նաև կոչվում է ծխելը դադարեցնելու ծառայություններ
- Կանխարգելիչ ծառայություններ, որոնք խորհուրդ են տրվում Միացյալ նազանգների Կանխարգելիչ ծառայությունների աշխատախմբերի մակարդակներ A և B-ի կողմից

Ընտանիքի պլանավորման ծառայությունները տրամադրվում են երեխա ունենալու տարիքի Անդամներին, որպեսզի նրանք կարողանան որոշել երեխաների քանակը և տարիքային տարբերությունը: Այս ծառայությունները ներառում են հակաբեղմնավորման բոլոր մեթոդները, որոնք հաստատված են Սննդի և դեղորայքի վարչության (Food and Drug Administration, FDA) կողմից: Kaiser Permanente-ի PCP-ն և մանկաբարձ-գինեկոլոգ մասնագետները կարող են տրամադրել ընտանիքի պլանավորման ծառայություններ:

Ընտանիքի պլանավորման ծառայությունների համար կարող եք նաև ընտրել Medi-Cal բժիշկ կամ կլինիկա, որոնք կապված չեն Kaiser Permanente-ի հետ՝ առանց մեզանից ուղեգիր կամ նախնական հաստատում (նախօրոք լիազորում) ստանալու: Մենք կվճարենք այդ բժշկին կամ կլինիկային Ձեր ստացված ընտանիքի պլանավորման ծառայությունների համար: Ընտանիքի պլանավորման ծառայություններին վերաբերող Ցանցից դուրս Medi-Cal մատակարարի



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Ծառայությունները կարող են չապահովագրվել: Մանրամասների համար զանգահարեք Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY 711):

Մենք նաև ապահովագրում ենք քրոնիկական հիվանդության կառավարման ծրագրեր, որոնք կենտրոնանում են հետևյալ վիճակների վրա՝

- Շաքարախտ
- Սրտանոթային հիվանդություն
- Ասթմա
- Դեպրեսիա

20 տարեկան և ավելի ցածր տարիքի երիտասարդների կանխարգելիչ խնամքի մասին տեղեկատվության համար կարդացեք Գլուխ 5. Երեխաների և երիտասարդների բարեկեցության խնամք

Վերականգնողական վիրահատություններ

Մենք ապահովագրում ենք՝

- Վիրահատություն, երբ խնդիր է առաջացել Ձեր մարմնի մասերից մեկի հետ: Խնդիրը կարող է կապված լինել բնածին արատի, զարգացման խանգարման, տրավմայի, վարակի, ուռուցքի, հիվանդության կամ վնասվածքի հետ: Մենք նույնպես ապահովագրում ենք վիրահատություն, երբ հիվանդության բուժումը հանգեցնում է մարմնի մասի կորստի, օրինակ՝ կրծքագեղձի հեռացում: Մենք ապահովագրում ենք վիրահատություն մարմնի ոչ նորմալ կառուցվածքը շտկելու կամ ուղղելու համար՝ հնարավորինս նորմալ տեսքի այն բերելու նպատակով:
- Կրծքագեղձի կամ դրա մի մասի Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ հեռացումից հետո մենք վճարում ենք այդ կրծքի վերականգնողական վիրահատության համար և մյուս կրծքի վերականգնողական վիրահատության համար, որպեսզի դրանք իրար ավելի նման լինեն: Մենք վճարում ենք այտուցումների դեպքում տրամադրվող ծառայությունների համար՝ ավշային հանգույցների հեռացումից հետո

Մենք չենք ապահովագրում վիրահատություն, որի արդյունքում տեսքը միայն նվազագույն փոփոխություններ կստանա:



Թմրամիջոցների օգտագործման խանգարումների զննման ծառայություններ

Մենք ապահովագրում ենք ակոհոլի դեղերի զննում, գնահատում, հակիրճ միջամտություններ և բուժման ուղեգրեր (screening, assessment, brief interventions, and referrals to treatment, «SABIRT»): Մենք չենք ապահովագրում թմրամիջոցների օգտագործման խանգարման բուժման ծառայությունները:

Վարչաշրջանի միջոցով բուժման ապահովագրման մասին կարդացեք այս գլխի «Թմրամիջոցների օգտագործման խանգարման բուժման ծառայություններ» հատվածը:

Տեսողության նպաստներ

Աչքի պարբերական քննություններ

24 ամսվա ընթացքում անք ապահովագրում ենք աչքի մեկ պարբերական քննություն: Աչքի ստուգումներն ապահովագրված են, եթե Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են, օրինակ շաքարախտ ունեցող Անդամների համար:

Ակնոցներ

Մենք ապահովագրում ենք հետևյալը՝

- ***Ամբողջական ակնոցներ (շրջանակ և տեսապակիներ)***

Մենք ապահովագրում ենք մեկ զույգ ակնոց յուրաքանչյուր 24 ամիսը մեկ, եթե Ձեզ առնվազն 0.75 դիոպտրիա ուժգնության ակնոց է նշանակվել:

- ***Ակնոցի տեսապակիներ***

Մենք կպատվիրենք նոր կամ փոխարինող ակնոց Ձեզ համար DHCS ակնոցների տեսապակիների վաճառողից: Եթե DHCS-ի վաճառողը չի կարող Ձեզ անհրաժեշտ տեսապակիներ տրամադրել, ապա մենք կկազմակերպենք Ձեր տեսապակիների պատրաստումը մեկ այլ օպտիկական լաբորատորիայում: Դուք ավելի չեք վճարի, եթե մենք կազմակերպենք դա, քանի որ DHCS-ի վաճառողը չի կարողանում Ձեզ ակնոցի տեսապակիներ տրամադրել:

Եթե Դուք ակնոցի տեսապակիներ կամ հատկանիշներ եք ցանկանում, որոնք ապահովագրված չեն Medi-Cal-ի կողմից, ապա ինքներդ պետք է վճարեք դրանց համար:



▪ **Ակնոցի շրջանակներ**

Մենք ապահովագրում ենք նոր կամ փոխարինող շրջանակներ, որոնց արժեքն է \$80 կամ ավելի քիչ: Եթե Դուք \$80-ից թանկ շրջանակ ընտրեք, ապա պետք է վճարեք \$80-ի և շրջանակի գնի տարբերությունը:

▪ **Փոխարինող ակնոց 24 ամսվա ընթացքում**

Մենք ապահովագրում ենք փոխարինող ակնոցներ, եթե Ձեր դեղատոմսը փոխվել է առնվազն 0.50 դիոպտրիայով կամ Ձեր ակնոցները կորել, գողացվել կամ կոտրվել են (և դրանք հնարավոր չէ վերանորոգել), և դա Ձեր մեղքով տեղի չի ունեցել: Դուք պետք է մեզ գրություն տաք այն մասին, թե ինչպես է Ձեր ակնոցը կորել, գողացվել կամ կոտրվել: Նոր շրջանակը նույն տեսակի կլիինի, ինչ հինը (մինչև \$80 արժողությամբ), եթե ակնոցը ստանալուց հետո դեռ 24 ամիս չի անցել

Վատ տեսողության սարքեր

Ցածր տեսողության սարքերն ապահովագրվում են Medi-Cal-ի կողմից, եթե բավարարվում են հետևյալ պայմանները.

- Տեսողության լավագույն շտկած սրությունը կազմում է 20/60 կամ ավելի վատ լավ աչքում, կամ որևէ աչքի տեսադաշտը ֆիքսված կետից սահմանափակվում է 10 աստիճանով կամ պակաս:
- Վիճակն ուղղելի չի սովորական ակնոցների, կոնտակտային ոսպնյակների, դեղորայքի կամ վիրահատության միջոցով
- Վիճակը խանգարում է անձին կատարելու առօրյա գործողություններ, ինչպես օրինակ բժավոր դեգեներացիայի դեպքում:
- Ստացողի ֆիզիկական և հոգեկան վիճակն այնպիսին է, որ ողջամտորեն հավանական է, որ օժանդակ սարքի օգտագործումը կբարելավվի իր առօրյա կյանքը:

Ապահովագրությունը սահմանափակված է Անդամի բժշկական կարիքները բավարարող ամենաէժան հարմարանքով: Medi-Cal-ի ապահովագրական ծածկույթում ներառված չեն էլեկտրոնային խոշորացման կամ այլ սարքեր, որոնց համար ոսպնյակներ նախատեսված չեն աչքերի համար:



Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ կոնտակտային ոսպնյակներ

Եթե Դուք առողջական վիճակ ունեք, երբ Medi-Cal ցանցում գործող բժիշկը կամ ակնաբույժը որոշում է, որ Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, որպեսզի Դուք կոնտակտային ոսպնյակներ կրեք, մենք կապահովագրենք կոնտակտային ոսպնյակները: Հատուկ կոնտակտային ոսպնյակների համար որակավորվող առողջական վիճակները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալներով՝ անիրիդիա, աֆակիա, կերատոկոնուս:

Մենք կփոխարինենք Ձեր՝ Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ կոնտակտային ոսպնյակներն, եթե Ձեր կոնտակտային ոսպնյակները կորել կամ գողացվել են: Դուք պետք է մեզ գրություն տաք այն մասին, թե ինչպես են Ձեր կոնտակտային ոսպնյակները կորել կամ գողացվել:

Փոխադրման նպաստներ արտակարգ իրավիճակ չհանդիսացող դեպքերում

Շտապ օգնության փոխադրման ծառայությունների մասին մանրամասների համար կարդացեք «Շտապ օգնության խնամք» վերնագիրը վերևում՝ այս Գլխում 4-ում:

Բժշկական փոխադրում արտակարգ իրավիճակ չհանդիսացող դեպքերում

Դուք կարող եք Բժշկական փոխադրում ստանալ ոչ շտապ օգնության իրավիճակներում, եթե Դուք բժշկական կարիքներ ունեք, որոնք Ձեզ թույլ չեն տալիս օգտվել մեքենայից, ավտոբուսից, գնացքից կամ տաքսիից Ձեր Medi-Cal ժամադրությունների գնալու համար: Դուք կարող եք Բժշկական փոխադրում ստանալ Ախահովագրված ծառայությունների և Medi-Cal ապահովագրված դեղատան ժամադրությունների համար: Բժշկական փոխադրում խնդրելու համար դիմեք Ձեր Medi-Cal Ցանցի մատակարարին, ատամնաբույժին կամ թմրամիջոցների խանգարումներից բուժման մասնագետին: Ձեր մատակարարը կորոշի Ձեր կարիքներին ամենահամապատասխան փոխադրամիջոցը: Բժշկական փոխադրում կարող է լինել շտապ օգնության մեքենա, միկրոավտոբուս, անվասայլակ տեղափոխող միկրոավտոբուս կամ օդային փոխադրամիջոց:

Բժշկական փոխադրումը պետք է օգտագործվի, երբ՝

- Դուք ֆիզիկական կամ բժշկական պատճառներով չեք կարող օգտվել ավտոբուսից, տաքսիից կամ միկրոավտոբուսից Ձեզ ժամադրությանը գնալու համար



- Ձեզ օգնություն է հարկավոր վարորդի կողմից, որպեսզի դուրս գաք կամ մտնեք Ձեր տուն, ավտոմեքենա կամ բուժման վայր՝ ֆիզիկական կամ հոգեկան հաշմանդամության պատճառով
- Այն պահանջվում է ցանցի բժշկի կողմից և նախապես լիազորվում է

Եթե Ձեր բժիշկը կարծում է, որ Ձեզ Բժշկական փոխադրում է հարկավոր, նա Ձեզ կնշանակի այն: Մենք կգանգահարենք Ձեզ, որպեսզի կազմակերպենք Ձեր Բժշկական փոխադրումը:

Բժշկական փոխադրման սահմանափակումներ

Ոչ շտապ օգնության իրավիճակներում մենք ապահովագրում ենք ամենաեժան Բժշկական փոխադրումը դեպի մատչելի ժամադրություն ունեցող ամենամոտ գտնվող մատակարար՝ Ձեր բժշկական կարիքների համար: Օրինակ, եթե ձեզ հնարավոր է ֆիզիկապես կամ բժշկական ցուցումների համաձայն տեղափոխել անվասայլակի խցիկով ֆուրգոնի միջոցով, մեր պլանը չի վճարի շտապօգնության մեքենայի համար: Ձեզ համար ապահովագրվում է օգտվել օդային տրանսպորտից միայն այն դեպքում, եթե ձեր առողջական վիճակը թույլ չի տալիս օգտվել ցամաքային տրանսպորտի որևէ տեսակից: Դուք չեք կարող Բժշկական փոխադրում ստանալ, եթե Medi-Cal չի ապահովագրում Ձեր ստացած ծառայությունը, կամ դա Medi-Cal ապահովագրված դեղատան ժամադրությունն է:

Եթե Medi-Cal-ը ապահովագրում է այդ տեսակի ժամադրություն, բայց ոչ մեր Medi-Cal ծրագրի միջոցով, մենք չենք ապահովագրի Բժշկական փոխադրումը: Սակայն մենք կարող ենք օգնել Ձեզ փոխադրում կազմակերպել: Եթե Ձեզ Բժշկական փոխադրում է հարկավոր Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքից դուրս կամ Ցանցից դուրս գործող մատակարարի այցելելու համար, մենք կապահովագրենք Բժշկական փոխադրումը, միայն եթե այն հաստատվել է Ձեզ համար:

Բժշկական փոխադրման արժեքն Անդամի համար

Երբ մենք կազմակերպում ենք Բժշկական փոխադրումը, այն անվճար է Ձեզ համար:

Ոչ բժշկական փոխադրում

Ձեր Medi-Cal նպաստները ներառում են փոխադրում Ձեր ժամադրության վայր կամ դեղատուն Medi-Cal Ապահովագրված ծառայությունների համար, երբ Դուք որևէ փոխադրման մատչելիություն չունեք: Կարող եք փոխադրում ստանալ Ձեզ համար անվճար, երբ փորձել եք փոխադրման բոլոր այլ միջոցները և՝



4 | Նպաստներ և ծառայություններ

- Գնում եք կամ վերադառնում **Medi-Cal** ապահովագրված ծառայության ժամադրությունից
- Գնում եք, որ դեղատոմս կամ բժշկական պարագա վերցնեք
- Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքում եք
 - Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքից դուրս **NMT** ապահովագրվում է միայն, երբ նախապես հաստատված է մեր կողմից, եթե իհարկե դա Հրատապ խնամք չէ

Եթե կարծում եք, որ ունեք բժշկական արտակարգ իրավիճակ, զանգահարեք **911** կամ գնացեք մոտակա հիվանդանոց: Ձեզ նախնական հաստատում պետք չէ մեզանից շտապ օգնության փոխադրման համար կամ Շտապ օգնության խնամքի համար: Շտապ օգնության փոխադրման ծառայությունների մասին մանրամասների համար կարդացեք «Շտապ օգնության խնամք» վերնագիրն այս Անդամի ձեռնարկի Գլխում 3-ում:

Kaiser Permanente-ն թույլ է տալիս Ձեզ օգտվել մեքենայից, տաքսիից, ավտոբուսից կամ փոխադրման այլ մասնավոր/հանրային միջոցից՝ **Medi-Cal**-ի կողմից Ապահովագրված ծառայություններ ստանալու նպատակով ժամադրության գնալու և վերադառնալու համար: Մենք ապահովագրում ենք **NMT**-ի ամենաեժան տարբերակը, որը համապատասխանում է Ձեր բժշկական կարիքներին: Երբեմն մենք կարող ենք Ձեզ փոխհատուցել (Ձեզ հետ վճարել) Ձեր կողմից կազմակերպված անհատական մեքենայով փոխադրման համար: Այն պետք է սկզբից հաստատվի մեր կողմից: Դուք պետք է մեզ բացատրեք՝ ինչու չեք կարող այլ փոխադրամիջոցով գնալ, օրինակ՝ ավտոբուսով: Մենք կփոխհատուցենք Ձեզ տրանսպորտային բրոքեր, ավտոբուսի մշտական քարտեր, տաքսու կտրոններ կամ գնացքի տոմսեր օգտագործելու համար: Լիազորում խնդրելու և լիազորման որոշումներ կայացնելու համար օգտագործվող չափանիշների համար զանգահարեք մեր փոխադրման մատակարարին՝ **1-844-299-6230** (TTY **711**) հեռախոսահամարով: Ներկայացուցիչը կարող է նաև պատասխանել մղոնների փոխատուցմանը վերաբերող որևէ հարցերին:

Խնդրում ենք զանգահարել **Kaiser Permanente**-ի փոխադրման մատակարարին՝ **1-844-299-6230** (TTY **711**) հեռախոսահամարով, Ձեր ժամադրությունից առնվազն երեք աշխատանքային օր առաջ (երկուշաբթիից ուրբաթ), կամ զանգահարեք անմիջապես, երբ հրատապ ժամադրություն ունեք: Զանգահարելիս խնդրում ենք պատրաստ ունենալ հետևյալը՝

- **Kaiser Permanente**-ի Ձեր ID քարտը
- Ձեր բժշկական ժամադրությունների ամսաթիվը և ժամը



Զանգահարեք **Kaiser Permanente** Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

4 | Նպաստներ և ծառայություններ

- Այն հասցեն, որտեղից Ձեզ հարկավոր է վերցնել և այն հասցեն, որտեղ Դուք պետք է գնաք
- Թե արդյոք Ձեզ անհրաժեշտ է լինելու հետ վերադառնալ
- Թե արդյոք որևէ մեկը ուղեկցելու է Ձեզ (օրինակ՝ ծնող/օրինական խնամակալ կամ խնամող)

Նշում. ամերիկացի հնդկացիները կարող են դիմել իրենց տեղական IHC և NMT ծառայություններ խնդրել:

NMT-ի սահմանափակումներ

Մենք ապահովագրում ենք ամենաեժան Ոչ բժշկական փոխադրումը դեպի մատչելի ժամադրություն ունեցող ամենամոտ գտնվող մատակարար՝ Ձեր բժշկական կարիքների համար: Անդամները չեն կարող ինքնուրույն վարել կամ ուղղակիորեն փոխհատուցվել NMT-ի համար:

NMT չի կիրառվում, եթե՝

- Հարկավոր է շտապ օգնության մեքենա, միկրոավտոբուս, անվասալակ տեղափոխող միկրոավտոբուս կամ NEMT-ի այլ տեսակ՝ Ձեր Medi-Cal Ապահովագրված ծառայությանը գնալու համար:
- Ձեզ օգնություն է հարկավոր վարորդի կողմից, որպեսզի դուրս գաք կամ մտնեք տուն, ավտոմեքենա կամ բուժման վայր՝ ֆիզիկական կամ առողջական վիճակի պատճառով
- Դուք անվասայլակում եք և չեք կարող մեքենայից տեղափոխվել առանց վարորդի օգնության
- Medi-Cal-ը չի ապահովագրում ծառայությունը
- Դուք Ձեր Բնակության տարածքի Սպասարկման տարածքից դուրս եք

Ոչ բժշկական փոխադրման արժեքն Անդամի համար

Երբ մենք կազմակերպում ենք Ոչ բժշկական փոխադրումը, այն անվճար է Ձեզ համար:

Ճամփորդության ծախսեր Ապահովագրված ծառայությունների համար

Որոշ դեպքերում, եթե Դուք պետք է ճանապարհորդեք բժշկի ժամադրության, որը հասանելի չէ Ձեր տան մոտ, մենք կարող ենք ապահովագրել ճանապարհորդական ծախսերն, ինչպիսիք են սնունդը, հյուրանոցում ժամերը և հարակից այլ ծախսերը, օրինակ՝ կայանատեղի,



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

ճանապարհային վարձեր և այլն: Նրանք կարող են ապահովագրվել նաև որևէ մեկի համար, ով ճամփորդում է Ձեզ հետ՝ Ձեզ ժամադրությանն օգնելու համար, կամ Ձեզ օրգան նվիրող որևէ մեկի հետ՝ Ձեր օրգանի փոխապատվաստման համար: Այս ծառայությունների համար Ձեզ նախապես հաստատում (նախօրոք լիազորում) է հարկավոր: Լրացուցիչ տեղեկությունների համար հարցրեք Ձեր Medi-Cal Ցանցային մատակարարին ապահովագրված ճանապարհորդական ծախսերի վերաբերյալ:

Kaiser Permanente-ի կողմից ապահովագրվող այլ նպաստներ և ծրագրեր

Երկարաժամկետ խնամքի ծառայություններ և աջակցություն («LTSS»)

Մենք իրավասու անդամների համար ապահովագրում ենք երկարաժամկետ ծառայություններն ու աջակցությունները, որոնք տրամադրվում են հետևյալ տեսակի երկարաժամկետ խնամքի հաստատություններում կամ տնային պայմաններում՝

- Մասնագիտացված խնամքի հաստատություններ
- Միջին աստիճանի խնամքի հաստատություններ
- Միջանկյալ խնամքի հաստատություններ, ներառյալ՝
 - Միջանկյալ խնամքի հաստատություններ/զարգացման հաշմանդամություն ունեցողներ (intermediate care facilities/developmentally disabled, «ICF/DD»):
 - Միջանկյալ խնամքի հաստատություններ/զարգացման հաշմանդամություն ունեցողներ, հաբիլիտացիա (intermediate care facilities/developmentally disabled-habilitative, «ICF/DD-H»):
 - Միջանկյալ խնամքի հաստատություններ/զարգացման հաշմանդամություն ունեցողներ, բուժքույրություն (intermediate care facilities/developmentally disabled-nursing, «ICF/DD-N»):

Եթե Դուք որակավորվում եք երկարաժամկետ խնամքի ծառայություններ համար, մենք կհամոզվենք, որ Դուք տեղավորվեք առողջապահական խնամքի հաստատությունում կամ տանը, որն ապահովում է Ձեր բժշկական կարիքներին առավել համապատասխան խնամքի մակարդակը:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

LTSS տեղեկատվություն Հյուսիսային Կալիֆորնիայի տարածքի համար

Եթե հարևեր ունեք երկրաժամկետ խնամքի ծառայությունների մասին, զանգահարեք ներքոնշյալ հեռախոսահամարով Ձեր բնակության վարչաշրջանի համար՝

Հյուսիսային Կալիֆորնիայի վարչաշրջան, որտեղ ապրում եք	Հեռախոսահամար
Եթե հետևյալ վարչաշրջաններում եք՝ Amador, El Dorado, Placer, Sacramento, San Joaquin	Զանգահարեք 1-833-721-6012 (TTY 711), երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8:30 a.m.-ից 1 p.m.-ը և 2 p.m.-ից 5 p.m.-ը
Եթե հետևյալ վարչաշրջաններում եք՝ Alameda, Contra Costa, Fresno, Kings, Madera, Marin, Mariposa, Napa, San Francisco, San Mateo, Santa Clara, Santa Cruz, Solano, Sonoma, Stanislaus, Sutter, Tulare, Yolo, Yuba	Զանգահարեք 1-833-952-1916 (TTY 711), երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8:30 a.m.-ից 1 p.m.-ը և 2 p.m.-ից 5 p.m.-ը

LTSS տեղեկատվություն Հարավային Կալիֆորնիայի տարածքի համար

Եթե հարևեր ունեք երկրաժամկետ խնամքի ծառայությունների մասին, զանգահարեք Անդամների ծառայություններ **1-855-839-7613**, (TTY **711**), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Խնամքի համակարգում

Հիմնական խնամքի կառավարում

Շատ տարբեր մատակարարներից կամ տարբեր առողջական համակարգերից խնամք ստանալը կարող է դժվար լինել: Մենք ուզում ենք երաշխավորել, որ Անդամները ստանում են Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ բոլոր ծառայությունները, դեղատոմսային դեղերը և վարքագծային առողջական ծառայությունները: Մենք կարող ենք օգնել համակարգել և կառավարել Ձեր առողջական կարիքները՝ Ձեզ համար անվճար: Այս օգնությունը մատչելի է, նույնիսկ երբ մեկ այլ ծրագիր է ապահովագրում ծառայությունները:

Կարող է դժվար լինել հասկանալ՝ ինչպես հոգալ Ձեր առողջական խնամքի կարիքները, երբ դուրս եք գրվում հիվանդանոցից, կամ խնամք եք ստանում տարբեր համակարգերում: Ահա որոշ միջոցներ՝ ինչպես [MCP] կարող է օգնել անդամներին.



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

- Եթե դժվարանում եք հետևողական ժամադրություն կամ դեղորայք ստանալ հիվանդանոցից դուրս գրվելուց հետո, մենք կարող ենք օգնել:
- Եթե օգնության կարիք ունեք դեմ-առ-դեմ ժամադրություն ստանալու համար, մենք կարող եք անվճար փոխադրում կազմակերպել:

Խնամքի համակարգման տեղեկատվություն Հյուսիսային Կալիֆորնիայի տարածքի համար

Եթե Ձեր առողջության կամ Ձեր երեխայի առողջության վերաբերյալ հարցեր կամ մտահոգություններ ունեք, զանգահարեք ներքոնշյալ հեռախոսահամարով Ձեր բնակության վարչաշրջանում՝

Հյուսիսային Կալիֆորնիայի վարչաշրջան, որտեղ ապրում եք	Հեռախոսահամար
Amador, El Dorado, Placer, Sacramento, San Joaquin	Զանգահարեք 1-833-721-6012 (TTY 711) , երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8:30 a.m.-ից 1 p.m.-ը և 2 p.m.-ից 5 p.m.-ը
Alameda, Contra Costa, Fresno, Kings, Madera, Marin, Mariposa, Napa, San Francisco, San Mateo, Santa Clara, Santa Cruz, Solano, Sonoma, Stanislaus, Sutter, Tulare, Yolo, Yuba	Զանգահարեք 1-833-952-1916 (TTY 711) , երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8:30 a.m.-ից 1 p.m.-ը և 2 p.m.-ից 5 p.m.-ը

Խնամքի համակարգման տեղեկատվություն Հարավային Կալիֆորնիայի տարածքի համար

Եթե Ձեր առողջության կամ Ձեր երեխայի առողջության վերաբերյալ հարցեր կամ մտահոգություններ ունեք, զանգահարեք Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613, (TTY 711)**, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Բարդ խնամքի կառավարում (CCM)

Ավելի բարդ առողջական կարիքներ ունեցող անդամները կարող են որակավորվել լրացուցիչ ծառայությունների համար՝ կենտրոնանալով խնամքի համակարգման վրա: Մենք առաջարկում ենք Բարդ խնամքի կառավարման (Complex Care Management, «CCM») ծառայություններ այն անդամների համար, որոնք բարձր վտանգի տակ են, ունեն բժշկական բարդ վիճակ կամ անդամներ, որոնք ունեն բժշկական վիճակ և բարդ սոցիալական վիճակ,



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

որն ազդում է անդամի խնամքի բժշկական կառավարման վրա և պահանջում է ռեսուրսների լայնածավալ օգտագործում:

Այն անդամները, որոնք անդամագրված են CCM և Խնամքի ընդլայնված կառավարմանը (կարդացեք ներքևում), ունեն Նշանակված խնամքի կառավարիչ Kaiser Permanente, ով կարող է օգնել ոչ միայն վերոնշյալ հիմնական խնամքի կառավարման հարցերում, բայց նաև առաջարկել անցումային խնամքի լայնածավալ աջակցություններ, որոնք մատչելի են, եթե դուրս եք գրվում հիվանդանոցից, հմուտ բուժքույրական հաստատությունից, հոգեբուժական հիվանդանոցից կամ տնային բուժումից:

Խնամքի ընդլայնված կառավարում («ECM»)

Մենք ապահովագրում ենք Խնամքի ընդլայնված կառավարման (Enhanced Care Management, ECM) ծառայությունները շատ բարդ կարիքներ ունեցող անդամների համար: ECM-ն ունի լրացուցիչ ծառայություններ, որոնք օգնում են Ձեզ խնամք ստանալ, որպեսզի առողջ մնալ: Այն համակարգում է Ձեր տարբեր բժիշկներից և այլ առողջապահական խնամքի մատակարարներից ստացված խնամքը: ECM-ն օգնում է համակարգել առաջնային խնամքը, կանխարգելիչ խնամքը, սուր խնամքը, վարքագծային առողջությունը, զարգացման ծառայությունները, բերանի խոռոչի առողջությունը և համայնքային երկարաժամկետ ծառայությունները և աջակցությունները, ինչպես նաև ուղեգրեր մատչելի համայնքային ռեսուրսների համար:

Եթե Դուք որակավորվում եք, ապա հնարավոր է, որ Ձեզ հետ կապվեն ECM ծառայությունների մասին: Դուք նույնպես կարող եք զանգահարել մեզ՝ պարզելու, եթե և երբ կարող եք ECM ստանալ: Կամ գրուցեք Ձեր առողջապահական խնամքի մատակարարի հետ: Նրանք կարող են պարզել, եթե Դուք որակավորվում եք ECM-ի համար կամ ուղեգրեր Ձեզ խնամքի կառավարման ծառայությունների:

▪ ***Ապահովագրված ECM ծառայություններ***

Եթե որակավորվում եք ECM-ի համար, Դուք կունենաք Ձեր սեփական խնամքի թիմը և Խնամքի ավագ կառավարիչ: Այս անձը կգրուցի Ձեզ և Ձեր բժիշկների, մասնագետների, դեղագործների, գործի կառավարիչների, սոցիալական ծառայությունների մատակարարների և այլոց հետ: Նա երաշխավորում է, որ բոլորը միասին են աշխատում, որպեսզի Դուք ստանաք Ձեզ անհրաժեշտ խնամքը: Խնամքի ավագ կառավարիչը կարող է նաև օգնել Ձեզ գտնել այլ ծառայություններ Ձեր համայնքում և դիմել դրանց: ECM-ը ներառում է՝



- Իրազեկում և ներգրավում
- Համապարփակ գնահատում և խնամքի կառավարում
- Խնամքի ընդլայնված համակարգում
- Առողջության խթանում
- Համապարփակ անցումային խնամք
- Անդամի և ընտանիքի աջակցության ծառայություններ
- Համակարգում և ուղեգրեր դեպի համայնքային և սոցիալական աջակցություններ

Պարզելու համար, եթե ECM-ը ճիշտ է Ձեզ համար, խոսեք Ձեր առողջապահական խնամքի մատակարարի հետ կամ զանգահարեք Անդամների ծառայություններ:

▪ ***Արժեքն անդամի համար***

ECM ծառայությունները Ձեզ տրամադրվում են անվճար:

Համայնքային աջակցություններ

Հնարավոր է, որ կարողանաք ստանալ Համայնքային աջակցություններ Ձեր անհատականացված խնամքի ծրագրի շրջանակներում: Համայնքային աջակցությունները հարմար և արժեքի տեսակետից արդյունավետ այլընտրանքային ծառայություններ են Medi-Cal նահանգային ծրագրի ապահովագրում ունեցողների համար: Այս ծառայությունները կամավոր է Անդամների համար: Դուք պարտավոր չեք օգտվել Համայնքային աջակցություններից: Եթե որակավորվում եք, Համայնքային աջակցությունները կարող են օգնել Ձեզ ավելի անկախ ապրել: Այս ծառայությունները չեն փոխարինում այն նպաստները, որոնք արդեն ստանում եք ձեր Medi-Cal-ի շրջանակներում:

Համայնքային աջակցությունները ներառում են հետևյալ ծառայությունները: Դրանք հասանելի չեն բոլոր տարածքներում: Ոչ բոլոր Անդամներն են որակավորվում Համայնքային աջակցությունների համար: Որակավորվելու համար դուք պետք է համապատասխանեք հատուկ չափանիշների:



Համայնքային աջակցություն	Նկարագիր	Ով կարող է իրավասու լինել
Ասթմայի շտկում	<p>Մա ներառում է տան միջավայրի ֆիզիկական փոփոխություններ, որոնք անհրաժեշտ են անհատի առողջությունը, բարեկեցությունը և անվտանգությունը երաշխավորելու համար, կամ օգնելու անհատին գործել տանը, առանց որի ասթմայի սուր նոպաները կարող են հանգեցնել շտապ օգնության ծառայությունների կամ հոսպիտալացման կարիքին:</p>	<p>Անդամներ, ովքեր՝</p> <ul style="list-style-type: none"> • ունեն վատ վերահսկվող ասթմա • ում համար վկայագրված առողջապահական խնամքի մատակարարը փաստագրել է, որ ծառայությունը կօգնի խուսափել ասթմայի հետ կապված հոսպիտալացումներից, շտապ օգնության բաժանմունք այցերից կամ այլ թանկ ծառայություններից:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Համայնքային աջակցություն	Նկարագիր	Ով կարող է իրավասու լինել
<p>Համայնքային անցումային ծառայություններ/Բուժքույրական հաստատությունից անցում դեպի տուն</p>	<p>Սա ներառում է չկրկնվող ծախսերի կազմակերպում այն անհատների համար, որոնք անցնում են վկայագրված հաստատությունից անհատական բնակարանում բնակվելու պայմանների, որտեղ անձը պատասխանատու է իր ապրուստի ծախսերի համար:</p>	<p>Անդամներ, ուրբեր՝</p> <ul style="list-style-type: none"> • այժմ ստանում են բուժքույրական հաստատության մակարդակի խնամք • բնակվել են 60+ օր բուժքույրական հաստատությունում • ցանկանում են ապրել համայնքում • կարող են անվտանգ բնակվել համայնքում՝ համապատասխան և մատչելի աջակցությունների օգնությամբ:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Համայնքային աջակցություն	Նկարագիր	Ով կարող է իրավասու լինել
Ցերեկային հաբիլիտացիա	Այս ծառայությունները տրամադրվում են անհատի տանը կամ տնից դուրս, ոչ հաստատությունում: Այս ծրագրերը մշակված են օգնելու անհատներին ստանալ, պահպանել և բարելավել ինքնօգնությունը, սոցիալական կապերը և հարմարեցման հմտությունները, որոնք անհրաժեշտ են անձի բնական միջավայրում բարեհաջող ապրելու համար:	Անդամներ, ուրբեր՝ <ul style="list-style-type: none"> • անօթևան են • այլևս անօթևան չեն և տեղավորվել են բնակավայր վերջին 24 ամսվա ընթացքում • անօթևանության կամ հաստատություն ընկնելու բարձր վտանգի տակ են, և ում բնակության կայունությունը կարող է բարելավվել ցերեկային հաբիլիտացիայի խրազրի միջոցով
Միջավայրի մատչելիության հարմարեցումներ (տան փոփոխություններ)	Այս ծառայությունները ներառում են ֆիզիկական հարմարեցումներ տան համար, որոնք անհրաժեշտ են անհատի առողջությունը, բարեկեցությունը և անվտանգությունը երաշխավորելու համար, կամ օգնելու անհատին գործել տանն ավելի անկախ, առանց որի մասնակցին պետք կլինի տեղավորել հաստատություն:	Անդամներ, որոնք բուժքույրական հաստատություն տեղավորվելու վտանգի տակ են:
Բնակավայրի դեպոզիտներ	Այս ծառայություններն օգնում են որոշել, համակարգել, գտնել կամ ֆինանսավորել մեկանգամյա ծառայություններ կամ	Անդամներ, ուրբեր՝ <ul style="list-style-type: none"> • համապատասխանում են Բնակեցում և



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY 711): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Համայնքային աջակցություն	Նկարագիր	Ով կարող է իրավասու լինել
	փոփոխություններ, որոնք անհրաժեշտ են, որպեսզի անձր հասարակ կենցաղ ստեղծի:	քաղաքային զարգացում (Housing and Urban Development, «HUD») անօթևանության սահմանմանը կամ անօթևանության վտանգի տակ են <ul style="list-style-type: none"> • ստացել են բնակավայրի անցման կամ բնակավայրի նավարկման ծառայություններ:
Բնակավայրի վարձակալության պահպանման ծառայություններ	և Այս ծառայությունները տրամադրում են վարձակալության և պահպանման ծառայություններ, որպեսզի պահպանեն ապահով և կայուն բնակավայր, երբ այն արդեն կազմակերպվել է:	Անդամներ, ովքեր՝ <ul style="list-style-type: none"> • համապատասխանում են HUD անօթևանության սահմանմանը կամ անօթևանության վտանգի տակ են • ստացել են բնակավայրի անցման կամ բնակավայրի նավարկման ծառայություններ:
Բնակավայրի անցման/նավարկման ծառայություններ	Այս ծառայություններն օգնում են նպաստառուներին բնակավայր ստանալ, ներառյալ՝ վարձակալի գննում և բնակավայրի գնահատում, անհատականացված բնակեցման աջակցության ծրագիր և բնակավայրի ապահովում:	Անդամներ, ովքեր՝ <ul style="list-style-type: none"> • համապատասխանում են HUD անօթևանության սահմանմանը կամ անօթևանության վտանգի տակ են:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Համայնքային աջակցություն	Նկարագիր	Ով կարող է իրավասու լինել
<p>Կերակուրներ/բժշկականորեն մշակված կերակուրներ</p>	<p>Այս ծառայությունները ներառում են 1) բժշկականորեն մշակված կերակուրներ, որոնք տրամադրվում են անդամին իր տանը և համապատասխանում են նրա յուրահատուկ սննդակարգի կարիքների՝ հաշվի առնելով իր քրոնիկ հիվանդությունները, ու մշակված են սննդակարգի վկայագրված մասնագետի կողմից, և/կամ 2) բժշկականորեն աջակցող սնունդ և սնուցման ծառայություններ:</p>	<p>Անդամներ, ովքեր՝</p> <ul style="list-style-type: none"> • ունեն քրոնիկ վիճակ • դուրս են գրվում հիվանդանոցից կամ հմուտ բուժքույրական հաստատությունից • հիվանդանոց կամ բուժքույրական հաստատություն տեղավորվելու բարձր վտանգ տակ են • ունեն խնամքի համակարգման բարձր կարիքներ:
<p>Անցում բուժքույրական հաստատություն/Շեղում դեպի աջակից ապրելակերպի հաստատություններ</p>	<p>Այս ծառայություններն աջակցում են անհատներին բնակվել համայնքում և/կամ խուսափել հաստատություն տեղավորվելուց, երբ հնարավոր է, որպեսզի հեշտացվի բուժքույրական հաստատությունից վերադարձը տան պայմաններ, համայնքային միջավայր և/կամ կանխվի հմուտ բուժքույրական հաստատություն ընդունումն այն նպաստառուների համար, որոնք ունեն բուժքույրական հաստատության մակարդակի խնամքի մոտալուտ կարիք:</p>	<p>Բուժքույրական հաստատություն անցման համար, անդամներ, ովքեր՝</p> <ul style="list-style-type: none"> • բնակվել են 60+ օր բուժքույրական հաստատությունում • ցանկանում են բնակվել աջակից ապրելակերպի միջավայրում՝ որպես բուժքույրական հաստատության այլընտրանք, • կարող են անվտանգ բնակվել աջակից ապրելակերպի հաստատությունում՝



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Համայնքային աջակցություն	Նկարագիր	Ով կարող է իրավասու լինել
		<p>համապատասխան և մատչելի աջակցությունների օգնությամբ:</p> <p>Բուժքույրական հաստատություն շեղման համար, անդամներ, ուլքեր՝</p> <ul style="list-style-type: none"> • հետաքրքրված են համայնքում մտալու մեջ, • ցանկանում են և կարող են անվտանգ բնակվել աջակից ապրելակերպի հաստատությունում՝ համապատասխան և մատչելի աջակցությունների և ծառայությունների օգնությամբ, և • ներկայումս ստանում են բժշկական տեսանկյունից անհրաժեշտ բուժքույրական հաստատության մակարդակի ինամք կամ համապատասխանում են բուժքույրական հաստատության մակարդակի ինամքի անհրաժեշտության չափանիշներին



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Համայնքային աջակցություն	Նկարագիր	Ով կարող է իրավասու լինել
Անջնական խնամքի և տան տնտեսի ծառայություններ	Այս ծառայություններն օգնում են առօրյա կյանքի գործունեության («ADL») և Առօրյա կյանքի կարևոր գործունեության (Instrumental Activities of Daily Living, «IADL») հարցերում:	<p>Անդամներ, ովքեր՝</p> <ul style="list-style-type: none"> • հոսպիտալացման կամ բուժքույրական հաստատություն տեղավորվելու վտանգի տակ են • ունեն գործառական պակասներ և չունեն համապատասխան աջակցության համակարգ • հաստատված են Տնային աջակից ծառայությունների համար:
Ռեկուպերատիվ խնամք (Խնամողի կարճատև բժշկական փոխարինում)	Այս ծառայությունները ներառում են կարճատև բնակելու հաստատության խնամք այն անհատների համար, որոնք այլևս հոսպիտալացում չի պահանջվում, սակայն նրանք դեռ ապաքինվում են վնասվածքից կամ հիվանդությունից, և ում վիճակը կվատթարանա անկայուն կյանքի միջավայրում:	<p>Անդամներ, ովքեր՝</p> <ul style="list-style-type: none"> • մենակ են ապրում՝ առանց կանոնավոր աջակցությունների • հոսպիտալացման վտանգի տակ են կամ նոր են դուրս գրվել հիվանդանոցից • ունեն բնակության վայրի անապահովություն • համապատասխանում են HUD անօթևանության սահմանմանը կամ անօթևանության վտանգի տակ են



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Համայնքային աջակցություն	Նկարագիր	Ով կարող է իրավասու լինել
<p>Խնամողի կարճատև փոխարինման ծառայություններ</p>	<p>Այս ծառայությունները տրամադրվում են կարճաժամկետ հիմունքով, քանի որ խնամք տրամադրող և/կամ վերահսկող անհատները պետք է բացակայեն կամ արձակուրդ գնան: Այս ծառայությունները ոչ բժշկական բնույթի են: Այս ծառայությունը տարբերվում է խնամողի կարճատև բժշկական փոխարինումից/ռեկուպերատիվ խնամքից, և հանգիստ է տրամադրում միայն խնամակալի համար:</p>	<p>Անդամներ, ովքեր՝</p> <ul style="list-style-type: none"> • ապրում են համայնքում և օգնության կարիք ունեն Առօրյա կյանքի գործունեության («ADL») հարցում
<p>Կարճաժամկետ բնակեցում հիվանդանոցից դուրս գրվելուց հետո</p>	<p>Այս ծառայությունները բնակավայր չունեցող և բարձր բժշկական կամ վարքագծային առողջության կարիքներ ունեցող նպաստառուներին տրամադրում են հնարավորություն շարունակելու իրենց բժշկական/հոգեբուժական/թմրանյութերի օգտագործման խանգարման վերականգնումը դուրսգրումից հետո կամ այլ միջավայրում (վերականգնում, ուղղիչ, ռեկուպերատիվ խնամք և այլն):</p>	<p>Անդամներ, ովքեր՝</p> <ul style="list-style-type: none"> • համապատասխանում են HUD անօթևանության սահմանմանը կամ անօթևանության վտանգի տակ են • դուրս են գրվում ռեկուպերատիվ խնամքից կամ ստացիոնար հիվանդանոցից



Համայնքային աջակցություն	Նկարագիր	Ով կարող է իրավասու լինել
Մթափեցման կենտրոններ	<p>Այս վայրերը ծառայում են որպես այլընտրանքային վայրեր այն անհատների համար, որոնց գտել են հարբած վիճակում, և որոնք հակառակ դեպքում կտեղափոխվեին շտապ օգնության բաժանմունք կամ բանտ: Մթափեցման կենտրոնները տրամադրում են այս անձանց, մասնավորապես անօթևաններին և անկայուն կյանքի իրավիճակներում գտնվողներին, ապահով, աջակից միջավայր, որտեղ կարող են սթափվել:</p>	<p>Անդամներ, ուրբեր՝</p> <ul style="list-style-type: none"> • 18 տարեկան են կամ ավելի բարձր տարիքի • հարբած են, սակայն գիտակից են, համագործակցում են, կարողանում են քայլել, կատաղի չեն և չունեն բժշկական դիսթրես • հակառակ դեպքում կտեղափոխվեին շտապ օգնության բաժանմունք կամ բանտ • եկել են շտապ օգնության բաժանմունք և համապատասխանում են Մթափեցման կենտրոն տեղափոխվելուն:

Համայնքային աջակցությունների մասին տեղեկատվություն Հյուսիսային Կալիֆորնիայի տարածքում

Եթե օգնության կարիք ունեք կամ ուզում եք իմանալ, թե որ Համայնքային աջակցություններն են մատչելի Ձեզ համար, զանգահարեք ներքոնշյալ հեռախոսահամարով Ձեր բնակության վարչաշրջանում.



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Հյուսիսային Կալիֆորնիայի վարչաշրջան, որտեղ ապրում եք	Հեռախոսահամար
Amador, El Dorado, Placer, Sacramento, San Joaquin	Համայնքային աջակցությունների մասին մանրամասների համար զանգահարեք 1-833-721-6012 (TTY 711) , երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8:30 a.m.-ից 1 p.m.-ը և 2 p.m.-ից 5 p.m.-ը
Alameda, Contra Costa, Fresno, Kings, Madera, Marin, Mariposa, Napa, San Francisco, San Mateo, Santa Clara, Santa Cruz, Solano, Sonoma, Stanislaus, Sutter, Tulare, Yolo, Yuba	Զանգահարեք 1-833-952-1916 (TTY 711) և հաղորդագրություն թողեք Համայնքային աջակցությունների մասին տեղեկատվություն ստանալու համար: Խնամքի համակարգողը Ձեզ հետ կզանգահարի երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8:30 a.m.-ից 5 p.m.-ը

Համայնքային աջակցությունների մասին տեղեկատվություն Հարավային Կալիֆորնիայի տարածքում

Եթե օգնության կարիք ունեք կամ ուզում եք իմանալ, թե որ Համայնքային աջակցություններն են մատչելի Ձեզ համար, զանգահարեք Անդամների ծառայություններ **1-855-839-7613, (TTY 711)**, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Կարևոր օրգանների փոխապատվաստումներ

Պարզելու համար, թե որ վարչաշրջաններն ունեն Whole Child Model ծրագիր, այցելեք «California Children’s Services և Whole Child Model ծրագիր» հատվածն այս գլխում:

Whole Child Model ունեցող վարչաշրջաններում երեխաների փոխապատվաստումներ

Մենք կուղարկենք 21 տարեկանից փոքր երեխային, որը որակավորվում է CCS-ի համար, CCS հաստատված Մասնագիտացված խնամքի կենտրոն (Specialty Care Center, «SCC») գնահատման համար 72 ժամվա ընթացքում այն պահից, երբ երեխայի բժիշկը որոշում է, որ երեխան փոխապատվաստման պոտենցիալ թեկնածու է: Եթե SCC-ը հաստատում է, որ փոխապատվաստում է հարկավոր, և դա ապահով է երեխայի համար, մենք կապահովագրենք փոխապատվաստումը և առնչվող ծառայությունները, քանի դեռ երեխան անդամագրված է մեր Medi-Cal ծրագրին:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Մնացած բոլոր վարչաշրջաններում երեխաների փոխպատվաստումներ

Նահանգային օրենքը պահանջում է, որ 21 տարեկանից փոքր երեխաները, որոնց փոխպատվաստումներ են պահանջվում, ուղարկվեն California Children’s Services («CCS») ծրագիր՝ պարզելու համար, եթե երեխան որակավորվում է CCS-ի համար: Եթե Ձեր երեխան որակավորվում է CCS-ի համար, CCS-ը կապահովագրի փոխպատվաստման և առնչվող ծառայությունների ծախսերը: Եթե Ձեր երեխան որակավորվում չէ CCS-ի համար, ապա մենք կուղարկենք երեխային որակավորված փոխպատվաստման կենտրոն գնահատման համար: Եթե փոխպատվաստման կենտրոնը հաստատի, որ փոխպատվաստում է անհրաժեշտ և այն ապահով է, մենք կապահովագրենք փոխպատվաստման և առնչվող ծառայությունների ծախսերը:

Փոխպատվաստումներ 21 տարեկան կամ ավելի բարձր տարիքի չափահասների համար

Եթե Ձեր բժիշկը որոշի, որ Ձեզ կարևոր օրգանի փոխպատվաստում է հարկավոր, ապա մենք Ձեզ կուղարկենք որակավորված փոխպատվաստման կենտրոն գնահատման համար: Եթե փոխպատվաստման կենտրոնը հաստատի, որ փոխպատվաստում է անհրաժեշտ և այն ապահով է Ձեզ բժշկական վիճակի համար, մենք կապահովագրենք փոխպատվաստման և առնչվող ծառայությունների ծախսերը:

Medi-Cal-ի կողմից ապահովագրվող փոխպատվաստումներ

Մեր կողմից ապահովագրված կարևոր օրգանների փոխպատվաստումները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

- Ոսկրածուծ
- Սիրտ
- Սիրտ/թոք
- Երիկամ
- Երիկամ/ենթաստամոքսային գեղձ
- Լյարդ
- Լյարդ/փոքր աղիք
- Թոք
- Փոքր աղիք

California Children’s Services և Whole Child Model ծրագիր

California Children’s Services («CCS») նահանգային ծրագիր է, որը բուժում է 21 տարեկանից ցածր տարիքի երեխաներին, ովքեր ունեն որոշակի առողջական վիճակներ, հիվանդություններ կամ քրոնիկական առողջական խնդիրներ, և համապատասխանում են CCS ծրագրի կանոններին: Եթե Ձեր բժիշկը համարում է, որ Դուք կարող եք որակավորվել



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

CCS-ի համար, նա կուղարկի Ձեզ Ձեր վարչաշրջանի CCS ծրագիր՝ իրավասության գնահատման համար:

Whole Child Model («WCM») ծրագրի ներքո մենք ապահովագրում ենք CCS ծառայությունները մեր որակավորվող Անդամների համար: Whole Child Model ծրագիրը մատչելի է որոշ վարչաշրջաններում: Կարող եք ստուգել ներքոնշյալ աղյուսակը՝ պարզելու, եթե Ձեր վարչաշրջանում Whole Child Model կա:

CCS կամ Whole Child Model իրավասություն

Վարչաշրջանի CCS ծրագրի անձնակազմը կորոշի, եթե որակավորվում էք CCS կամ WCM համար: Մենք չենք որոշում CCS իրավասությունը: Եթե Ձեր երեխան որակավորվում է այս տեսակի բուժում ստանալու համար, CCS մատակարարները կբուժեն Ձեր երեխային CCS որակավորվող վիճակի համար:

CCS-ը չի ապահովագրում բոլոր առողջական վիճակները: CCS-ն ապահովագրում է առողջական վիճակների մեծ մասը, որոնք ֆիզիկապես հաշմանդամ են դարձնում կամ որոնք դեղով, վիրահատությամբ կամ վերականգնմամբ (ռեաբիլիտացիա) բուժման կարիք ունեն: CCS-ի համար իրավասու վիճակները ներառում են, սակայն առանց սահմանափակվելու՝

- Բնածին սրտի հիվանդություն
- Քաղցկեղներ
- Ուռուցքներ
- Արյան հիվանդություն
- Մանգաղաձև բջիջների անեմիա
- Վահանագեղձի խնդիրներ
- Շաքարախտ
- Երիկամների լուրջ քրոնիկական խնդիրներ
- Լյարդի հիվանդություն
- Աղիքների հիվանդություն
- Գայլի շրթունք/երախ
- Սպայնա բիֆիդա
- Լսողության կորուստ
- Կատարակտներ
- Մանկական ուղեղային կաթված
- Փոխպատվաստումներ, ներառյալ՝ եղջերաթաղանթ
- Նոպաներ՝ որոշակի պարագաներում
- Ռևմատոիդ հողաբորբ
- Մկանային դիստրոֆիա
- ՉԻԱՀ
- Գլխի, ուղեղի, ողնաշարի լուրջ փասվածքներ
- Ուժեղ այրվածք
- Խիստ ծոված ատամներ



Եթե բնակվում եք CCS ունեցող վարչաշրջանում

Եթե որակավորվում եք այս տեսակի խնամք ստանալու համար, Kaiser Permanente հետ աշխատող CCS մատակարարները նշանակում են անձնական խնամքի համակարգող, ով օգնում է համակարգել բուժումը CCS-ի համար իրավասու վիճակների համար՝ օգտագործելով խնամքի թիմ և խնամքի ծրագիր: Kaiser Permanente-ն չի ապահովագում CCS ծրագրի կողմից տրամադրվող ծառայությունները: Որպեսզի CCS-ն ապահովագրի այս ծառայությունները, CCS-ը պետք է հաստատի մատակարարին, ծառայությունները և սարքավորումը:

Եթե չեք որակավորվում CCS ծրագրի ծառայությունների համար, Դուք կշարունակեք ստանալ Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ խնամքը Kaiser Permanente-ից: CCS-ի մասին մանրամասների համար կարող եք այցելել CCS-ի կայքը www.dhcs.ca.gov/services/ccs (անգլերեն) կամ զանգահարել Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**) հեռախոսահամարով:

Եթե բնակվում եք Whole Child Model ծրագիր ունեցող վարչաշրջանում

Whole Child Model («WCM») ծրագիրն ընդգրկում է California Children's Services («CCS») ծրագիրը Medi-Cal իրավասու CCS երեխաների և պատանիների համար Medi-Cal Կառավարվող խնամքի մեջ: WCM ծրագրի ներքո Kaiser Permanente-ն պատասխանատու է ապահովագրել CCS իրավասու վիճակների համար նախատեսված ծառայությունները:

Ճամփորոշյան ծախսեր CCS և WCM ծառայությունների համար

Հնարավոր է, որ կարողանաք օգնություն ստանալ ճամփորոշյան ծախսերի հարցում, ինչպես օրինակ՝ փոխադրում, կերակուրներ, կայանատեղի, ճանապարհների վարձեր, եթե CCS իրավասու վիճակի համար բժշկական ժամադրության հասնելու միջոցներ չունեք: Դուք պետք է զանգահարեք մեզ, նախքան ինքնուրույն վճարեք փոխադրման համար, քանի որ մենք ապահովագրում ենք ոչ բժշկական և ոչ շտապ օգնության բժշկական փոխադրում, ինչպես նշված է նպաստներում և ծառայություններում: Այնուամենայնիվ, եթե վճարեք գրպանից, հնարավոր է, որ կարողանաք մեզանից փոխհատուցում ստանալ, եթե արդեն վճարել եք անհրաժեշտ փոխադրման համար: Եթե որոշվի, որ Ձեր փոխադրումն անհրաժեշտ էր, մենք պետք է հաստատենք այն և փոխհատուցենք դրա արժեքը Ձեզանից պահանջվող անդորրագրերը և փոխադրման ծախսերի այլ փաստաթղթերը մեզ ներկայացնելու պահից 60 օրացուցային օրվա ընթացքում:



Տան և համայնքի հիմունքով ծառայություններ WCM ծառայություններից դուրս

Եթե իրավասու եք անդամագրվել 1915(c) հրաժարմանը, հնարավոր է, որ կարողանաք ստանալ տան և համայնքի հիմունքով ծառայություններ, որոնք չեն վերաբերում CCS իրավասու վիճակին, սակայն անհրաժեշտ են Ձեզ, որպեսզի Գնաք համայնքային միջավայրում՝ հաստատություն տեղափոխվեու փոխարեն: Օրինակ, եթե Ձեզ պահանջվում են տան փոփոխություններ համայնքային միջավայրում Գնալու համար, մենք չենք կարող վճարել այլ ծախսերը որպես CCS իրավասու վիճակ, սակայն եթե անդամագրված եք 1915(c) հրաժարմանը, ապա տան փոփոխությունները կարող են ապահովագրվել որպես բժշկական տեսանկյունից անհրաժեշտ՝ հաստատություն տեղափոխվելուց խուսափելու համար:

Whole Child Model ծրագրեր և CCS ունեցող վարչաշրջաններ

Ներքոնշյալ աղյուսակը ցույց է տալիս, թե որ վարչաշրջաններն են մասնակցում Whole Child Model ծրագրին և որ վարչաշրջաններն են մասնակցում California Children’s Services-ին:

Վարչաշրջան	Whole Child Model – մենք վճարում ենք ծառայությունների համար CCS իրավասու վիճակների համար	CCS – CCS ծրագիրն է վճարում ենք CCS իրավասու վիճակներին առնչվող ծառայությունների համար
Alameda		X
Amador		X
Contra Costa		X
El Dorado		X
Fresno		X
Imperial		X
Kern		X



4 | Նպաստներ և ծառայություններ

Վարչաշրջան	Whole Child Model – մենք վճարում ենք ծառայությունների համար CCS իրավասու վիճակների համար	CCS –CCS ծրագիրն է վճարում ենք CCS իրավասու վիճակներին առնչվող ծառայությունների համար
Kings		X
Los Angeles		X
Madera		X
Marin	X	
Mariposa		X
Napa	X	
Orange	X	
Placer		X
Riverside		X
Sacramento		X
San Bernardino		X
San Diego		X
San Francisco		X



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

4 | Նպաստներ և ծառայություններ

Վարչաշրջան	Whole Child Model – մենք վճարում ենք ծառայությունների համար CCS իրավասու վիճակների համար	CCS –CCS ծրագիրն է վճարում ենք CCS իրավասու վիճակներին առնչվող ծառայությունների համար
San Mateo	X	
Santa Cruz	X	
Solano	X	
Sonoma	X	
Stanislaus		X
Sutter		X
Tulare		X
Ventura		X
Yolo	X	
Yuba		X



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Այլ Medi-Cal ծրագրեր և ծառայություններ, որոնք ապահովագրված չեն Kaiser Permanente-ի կողմից

Kaiser Permanente-ն չի ապահովագրում որոշ ծառայություններ, սակայն Դուք դեռևս կարող եք դրանք ստանալ Վճարում ծառայության դիմաց (FFS) Medi-Cal-ի կամ Medi-Cal այլ ծրագրի միջոցով: Մենք կհամակարգենք այլ ծրագրերի հետ, որպեսզի Դուք ստանաք բոլոր Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները, ներառյալ նրանք, որոնք ապահովագրվում են այլ ծրագրի, և ոչ թե մեր կողմից: Այս բաժինը թվարկում է որոշ ծառայությունները: Մանրամասների համար զանգահարեք Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**:

Ատաճաբուժական կառավարվող խնամք Sacramento և Los Angeles վարչաշրջաններում

Medi-Cal Ատաճաբուժական կառավարվող խնամքի ծրագիրն օգտագործում է կառավարվող խնամքի ծրագրեր՝ Ձեզ ատաճաբուժական ծառայություններ տրամադրելու համար: Դուք պետք է անդամագրվեք Ատաճաբուժական կառավարվող խնամքի համար: Որոշ դեպքերում կարող եք որակավորվել Ատաճաբուժական կառավարվող խնամքին անդամագրվելու բացառության համար: Մանրամասների համար այցելեք Health Care Options-ի կայքը՝ <http://dhcs.ca.gov/mymedi-cal> (անգլերեն): Կարող եք նաև զանգահարել Health Care Options՝ **1-800-430-4263**:

Նշում. որոշ ատաճաբուժական գործողությունների համար անզգայացման ծառայություններն ապահովագրված են՝ այս Անդամի ձեռնարկի պայմանների համաձայն: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Անեսթեզիոլոգիական ծառայություններ» վերնագիրը «Ամբուլատոր խնամք» բաժնում՝ Գլուխ 4-ում («Նպաստներ և ծառայություններ»):

Ատաճաբուժական ծառայություններ այլ վարչաշրջաններում

Medi-Cal Dental ծրագիրը նույն է, ինչ Վճարում ծառայության դիմաց Medi-Cal Ձեր ատաճաբուժական ծառայությունների համար: Նախքան ատաճաբուժական ծառայություններ ստանալը ցույց տվեք Ձեր BIC Ձեր ատաճաբուժական մատակարարին և հավաստիացեք, որ Ձեր ատաճաբուժական մատակարարը ընդունում է FFS Dental:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ kp.org (անգլերեն)

Medi-Cal-ն ապահովագրում է որոշ ատամնաբուժական ծառայություններ, ներառյալ՝

- Ախտորոշիչ և կանխարգելիչ ատամնաբուժական հիգիենա (օրինակ՝ ստուգումներ, ռենտգեն և ատամների մաքրումներ)
- Շտապ օգնության ծառայություններ ցավի վերահսկման համար
- Ատամի հեռացումներ
- Պլոմբաներ
- Ատամնաբուժական խոռոչի բուժումներ (դիմացի/հետևի)
- Ատամնապսակներ (նախապատրաստված/լաբորատորիա)
- Մաքրում և արմատի շտկում
- Ամբողջական և մասնակի ատամնաշարեր
- Օրթոդոնտիա որակավորվող երեխաների համար
- Ֆտորիդ տեղային օգտագործում

Եթե հարցեր ունեք կամ ցանկանում եք ավելին իմանալ ատամնաբուժական ծառայությունների մասին, զանգահարեք Medi-Cal Dental ծրագիր՝ **1-800-322-6384** (TTY **1-800-735-2922**) կամ **711** հեռախոսահամարով: Կարող եք նաև այցելել Medi-Cal Dental ծրագրի կայքը՝ <https://www.dental.dhcs.ca.gov> (անգլերեն) կամ <https://smilecalifornia.org/> (անգլերեն):

Նշում. որոշ ատամնաբուժական գործողությունների համար անզրկայացման ծառայություններն ապահովագրված են՝ այս Անդամի ձեռնարկի պայմանների համաձայն: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Անեսթեզիոլոգիական ծառայություններ» վերնագիրը «Ամբուլատոր խնամք» բաժնում՝ Գլուխ 4-ում («Նպաստներ և ծառայություններ»):

Medi-Cal Rx-ի կողմից ապահովագրվող ամբուլատոր դեղատոմսային դեղեր

Ցանցից դուրս դեղատոմսային կողմից տրվող դեղատոմսային դեղերն ապահովագրված են Medi-Cal Rx-ի կողմից, որը Medi-Cal FFS ծրագիր է: Եթե Ձեր մատակարարը դեղեր է նշանակում, որոնք տրվում են բժշկի գրասենյակում, ներարկման կենտրոնում կամ տանը՝ ներարկման մատակարարի կողմից, դրանք համարվում են բժշկի կողմից տրվող դեղեր: Կարդացեք «Բուժման թերապիաներ» Գլուխ 4-ում մեր կողմից ապահովագրվող, բժշկի կողմից տրվող դեղերի մասին: Մեր կողմից ապահովագրված դեղատոմսային դեղերի մասին



մանրամասների համար կարդացեք այլ գլխի «Kaiser Permanente-ի կողմից ապահովագրվող ամբուլատոր դեղատոմսային դեղեր» հատվածը:

Medi-Cal Rx Պայմանագրային դեղերի ցանկ («CDL»)

Medi-Cal Պայմանագրային դեղերի ցանկը դեղերի մի ցուցակ է, որոնք չեն պահանջում նախնական հաստատում Medi-Cal Rx-ի կողմից: Ձեր մատակարարը կարող է ասել Ձեզ, եթե դեղը Medi-Cal Rx Պայմանագրային դեղերի ցանկում է: Medi-Cal Rx-ով փոխհատուցվելու համար ապրանքը պետք է լինի Medi-Cal-ի Պայմանագրային դեղերի ցանկում (Contract Drugs List, «CDL») կամ պետք է նախապես հաստատված լինի ձեզ համար Medi-Cal Rx-ի կողմից: Ձեր մատակարարը կարող է ասել Ձեզ, եթե դեղը Medi-Cal Rx CDL-ում է:

Երբեմն Ձեզ կարող է պահանջվել մի պարագա, որը Պայմանագրային դեղերի ցանկում չէ: Այս դեղերի համար հաստատում է հարկավոր, նախքան կարող եք ստանալ դրանք դեղատոմսով դեղատանը: Medi-Cal Rx-ը կվերանայի այս խնդրանքները և որոշումներ կկայացնի 24 ժամվա ընթացքում:

- Ձեր ամբուլատոր դեղատան դեղագործը կարող է տրամադրել 14 օրվա հրատապ պաշար, եթե կարծի, որ Դուք դրա կարիքն ունեք: Medi-Cal Rx-ը կվճարի դեղորայքի հրատապ պաշարի համար, որը տրվում է ամբուլատոր դեղատան կողմից:
- Medi-Cal Rx-ը կարող է մերժել ոչ հրատապ խնդրանքին: Եթե նրանք դա անեն, նրանք Ձեզ բացատրական նամակ կուղարկեն: Նրանք Ձեզ կասեն Ձեր տարբերակների մասին: Մանրամասների համար տեսեք «Բողոքներ» հատվածը Գլուխ 6-ում:

Պարզելու համար, եթե դեղը Պայմանագրային դեղերի ցանկում է կամ Պայմանագրային դեղերի ցանկի պատճենը ստանալու համար զանգահարեք Medi-Cal Rx Հաճախորդների սպասարկում՝ **1-800-977-2273 (TTY 711)** հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Այցելեք Medi-Cal Rx-ի կայքէջը՝ <https://www.Medi-CalRx.dhcs.ca.gov/home/> (անգլերեն):

Medi-Cal Rx դեղատներ

Եթե դեղատոմս եք ստանում կամ կրկնում, Դուք պետք է ստանաք Ձեր դեղատոմսային դեղերը դեղատնից, որն աշխատում է Medi-Cal Rx-ի հետ: Բոլոր Kaiser Permanente ամբուլատոր դեղատները Կալիֆոռնիայում աշխատում են Medi-Cal Rx-ի հետ: Կարող եք գտնել Medi-Cal Rx-ի հետ աշխատող դեղատների ցանկը Medi-Cal Rx Դեղատների հասցեագրքում՝



<https://www.Medi-CalRx.dhcs.ca.gov/home/> (անգլերեն): Կարող եք նաև զանգահարել Medi-Cal Rx Հաճախորդների սպասարկում՝ **1-800-977-2273 (TTY 711)** հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Երբ Դուք դեղատուն ընտրեք, Ձեր դեղատոմսը Ձեզ հետ տարեք դեղատուն: Ձեր մատակարարը կարող է այն դեղատուն ուղարկել Ձեզ համար: Դեղատանը ներկայացրեք Ձեր դեղատոմսը՝ Ձեր Medi-Cal Նպաստների նույնականացման քարտի («BIC») և Kaiser Permanente ID քարտի հետ միասին: Անպայման տեղեկացրեք դեղատանը Ձեր կողմից ընդունվող բոլոր դեղերի և Ձեր ունեցած ավերգիաների մասին: Եթե որևէ հարց ունեք դեղատոմսի վերաբերյալ, հարցրեք դեղագործին:

Կարող եք մեզանից փոխադրման օգնություն ստանալ դեղատուն գնալու համար, որպեսզի ստանաք Ձեր դեղատոմսը: Մանրամասների համար կարդացեք «Փոխադրման նպաստներ արտակարգ իրավիճակ չհանդիսացող դեպքերում» հատվածը վերևում՝ այս Գլուխ 4-ում:

Հատուկ հոգեկան առողջություն Sacramento և Solano վարչաշրջաններից դուրս

Որոշ հոգեկան առողջության ծառայություններն ապահովագրված են վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրերի կողմից և ոչ մեր կողմից: Մա ներառում է հատուկ հոգեկան առողջության ծառայություններ («SMHS») Medi-Cal Անդամների համար, ովքեր համապատասխանում են SMHS-ի կանոններին: Հոգեկան առողջության մասնագիտացված ծառայությունները ներառում են հետևյալը՝

Ամբուլատոր ծառայություններ՝

- Հոգեկան առողջության ծառայություններ
- Դեղամիջոցների աջակցության ծառայություններ
- Ցերեկային բուժման ինտենսիվ ծառայություններ
- Ցերեկային վերականգնողական ծառայություններ
- Ճգնաժամային միջամտության ծառայություններ
- Ճգնաժամի կայունացման ծառայություններ
- Բժշկական գործի նպատակային կառավարում
- Վարվեցողական թերապևտիկ ծառայություններ (21 տարեկանից ցածր տարիքի Անդամների համար)



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

4 | Նպաստներ և ծառայություններ

- Ինտենսիվ խնամքի համակարգում («ICC») (21 տարեկանից ցածր տարիքի Անդամների համար)
- Տանը մատուցվող ինտենսիվ ծառայություններ («IHBS») (21 տարեկանից ցածր տարիքի Անդամների համար)
- Թերապևտիկ խնամակալական խնամք («TFC») (21 տարեկանից ցածր տարիքի Անդամների համար)
- Հասակակիցների աջակցության ծառայություններ (Peer Support Services, «PSS»)

Հաստատությունում տրամադրվող ծառայություններ՝

- Չափահասների և մանկաբուժական հաստատությունում տրամադրվող բուժման ծառայություններ
- Հաստատությունում տրամադրվող ճգնաժամային բուժման ծառայություններ

Ստացիոնար ծառայություններ՝

- Հոգեբուժական ստացիոնար հիվանդանոցային ծառայություններ
- Հոգեբուժական հաստատության ծառայություններ

Ձեր վարչաշրջանում մասնագիտացված հոգեկան առողջության ծառայությունների մասին ավելին իմանալու համար կարող եք զանգահարել վարչաշրջան: Բոլոր վարչաշրջանների անվճար հեռախոսահամարներն առցանց գտնելու համար այցելեք

<http://www.dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContaktList.aspx> կայքը (անգլերեն):

Թմրամիջոցների օգտագործման խանգարման բուժման ծառայություններ

Մենք քաջալերում ենք Անդամներին, որոնց օգնություն է հարկավոր ակոհոլի կամ այլ թմրանյութերի օգտագործման համար, խնամք ստանալ: Թմրանյութերի օգտագործման ծառայությունները մատչելի են խնամքի սովորական մատակարարներից, օրինակ՝ առաջնային խնամքի, ստացիոնար հիվանդանոցների, շտապ օգնության բաժանմունքների և թմրանյութերի օգտագործման ծառայությունների մասնագիտացված մատակարարներից: Վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրերը հաճախ տրամադրում են մասնագիտացված ծառայություններ:

Kaiser Permanente Անդամները կարող են գնահատում անցնել, որպեսզի ստանան իրենց առողջական կարիքներին և նախապատվություններին համապատասխան: Երբ Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, մատչելի ծառայությունները ներառում են ամբուստոր բուժում, հաստատությունում բուժում և դեղորայք թմրանյութերի օգտագործման խանգարումների համար (նաև կոչվում է Բուժում դեղորայքի օգնությամբ [Medication Assisted Treatment,



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

«MAT»], օրինակ՝ բուպրենորֆին, մեթադոն և նալտրեքսոն: Մենք կտրամադրենք կամ կկազմակերպենք MAT, որը կտրվի առաջնային խնամքի, ստացիոնար հիվանդանոցի, շտապ օգնության բաժանմունքի և այլ բժշկական միջավայրում:

Վարչաշրջանը տրամադրում է թմրանյութերի օգտագործման խանգարման ծառայություններ Medi-Cal անդամներին, որոնք որակավորվում են այս ծառայությունների համար: Անդամները, որոնք որակավորվում են թմրամիջոցների օգտագործման խանգարման բուժման ծառայությունների համար, ուղարկվում են իրենց վարչաշրջանի բաժին բուժման համար: Վարչաշրջանների հեռախոսահամարների ամբողջական ցուցակի համար այցելեք <http://www.dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContaktList.aspx> կայքը (անգլերեն):

1915(c) հրաժարում Տնային և համայնքային ծառայություններ

Կալիֆորնիայի վեց Medi-Cal 1915(c) հրաժարումները թույլ են տալիս նահանգին ծառայություններ տրամադրել այն անձանց, ովքեր համայնքային միջավայրի փոխարեն խնամքի կարիք կունենային բուժքույրական հաստատության կամ հիվանդանոցային խնամքի: Medi-Cal-ը պայմանգիր ունի Դաշնային կառավարության հետ, որը թույլ է տալիս, որ հրաժարման ծառայություններն առաջարկվեն անհատական տան կամ տան նման համայնքային միջավայրում: Հրաժարումների ներքո առաջարկվող ծառայությունները պետք է արժենան ոչ ավել, քան այլընտրանքային հաստատության մակարդակի խնամքը: Տան և համայնքի վրա հիմնված ծառայություններ (Home and Community-based Services, HCBS) Հրաժարման ստացողները պետք է ունենան ամբողջական Medi-Cal: Medi-Cal 1915(c) վեց հրաժարումներն են՝

- Կալիֆորնիայի Աջակից ապրելակերպի հրաժարում (Assisted Living Waiver, ALW)
- Կալիֆորնիայի Ինքնատրոշման ծրագիր (Self-Determination Program, SDP) հրաժարում Ջարգացման հաշմանդամություններ ունեցող անձանց համար
- Ջարգացման հաշմանդամություններ ունեցող Կալիֆորնիայի բնակիչների HCBS հրաժարում (HCBS Waiver for Californians with Developmental Disabilities, HCBS-DD)
- Տան և համայնքի հիմունքով այլընտրանքների (Home and Community-Based Alternatives, HCBA) հրաժարում
- Medi-Cal Waiver Program (MCWP), նախկինում կոչվում էր Մարդու իմունային անբավարարության վիրուսի/Չեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի (ՄԻԱՎ/ՉԻԱՀ) հրաժարում
- Տարեցների բազմանպատակ ծառայությունների ծրագիր (Multipurpose Senior Services Program, MSSP)



Medi-Cal հրաժարումների մասին մանրամասների համար այցելեք DHCS կայքը՝ <https://www.dhcs.ca.gov/services/Pages/HCBSWaiver.aspx> (անգլերեն) կամ զանգահարեք Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**) հեռախոսահամարով:

Տնային աջակցության ծառայություններ («IHSS»)

Տնային աջակցության ծառայությունների (In-Home Supportive Services, «IHSS») ծրագիրը տրամադրում է տանն անհատական խնամք որակավորվող տարեց, կույր և հաշմանդամ անձանց, որպես տնից դուրս խնամքի այլընտրանք, և թույլ է տալիս ստացողներին ապահով կերպով փախ իրենց սեփական տանը:

Ձեր վարչաշրջանում մատչելի IHSS-ի մասին մանրամասների համար այցելեք <https://www.cdss.ca.gov/inforesources/ihss> կայքը (անգլերեն): Կամ զանգահարեք Ձեր տեղական վարչաշրջանի սոցիալական ծառայությունների գործակալություն:

Տեղական կրթական գործակալության («LEA») կողմից տրամադրվող գնահատման ծառայություններ

Health Plan-ը պատասխանատու չէ Տեղական կրթական գործակալության (Local Education Agency, LEA) կողմից տրամադրվող գնահատման ծառայությունների ապահովագրման համար, ինչպես նկարագրված է Կալիֆորնիայի կանոնակարգի օրենսգիրք (California Code of Regulations, CCR) Բաժին 51360(b)-ի Գլուխ 22-ում, երբ դրանք տրամադրվում են Անդամին, ով որակավորվում է LEA ծառայությունների համար՝ համաձայն CCR Բաժին 51190.1-ի Գլուխ 22-ի:

LEA ծառայություններ, որոնք առնչվում են IEP-ներին և IFSP-ներին

Health Plan-ը պատասխանատու չէ LEA ծառայությունների համար, որոնք տրամադրվում են համաձայն Անհատականացված կրթական ծրագրի (Individualized Education Plan, «IEP»), ինչպես սահմանված է Կրթական օրենսգրքի Բաժում 56340 et seq.-ում, կամ համաձայն Անհատականացված ընտանեկան սպասարկման ծրագրի (Individualized Family Service Plan, «IFSP»), ինչպես սահմանված է Կառավարության օրենսգրքի Բաժին 95020-ում, կամ LEA ծառայությունների համար, որոնք տրամադրվում են Անհատականացված առողջապահության և աջակցության ծրագրի (Individualized Health and Support Plan, «IHSP») ներքո, ինչպես նկարագրված է CCR Բաժին 51360-ի Գլուխ 22-ում:



Լաբորատոր ծառայություններ ալֆա-ֆետո պրոտեինի նահանգային ստուգման ծրագրի համար

Ալֆա-ֆետո պրոտեինի շիճուկի նահանգային ստուգման ծրագրի ապահովագրությունն իրականացվում է FFS Medi-Cal միջոցով:

Մանկական ցերեկային առողջապահական խնամք

Մանկական ցերեկային առողջապահական խնամքի ծառայությունների ապահովագրությունն իրականացվում է FFS Medi-Cal-ի միջոցով: Խնդրում եք դիմել Ձեր վարչաշրջան այս ծառայությունները ստանալու մասին մանրամասների համար:

Աղոթք կամ հոգևոր ամոքում

Աղոթքի կամ հոգևոր ամոքման ծառայությունները, որոնք նշված են CCR Բաժին 51312-ի Գլուխ 22-ում, մատչելի են FFS Medi-Cal-ի միջոցով: Խնդրում եք դիմել Ձեր վարչաշրջան այս ծառայությունները ստանալու մասին մանրամասների համար:

Բժշկական գործի կառավարման նպատակային ծառայություններ

Գործի թիրախային կառավարման ծառայությունները, ինչպես նկարագրված է CCR Բաժիններ 51185-ի և 51351-ի Գլուխ 22-ում, մատուցվում են FFS Medi-Cal-ի միջոցով: Խնդրում եք դիմել Ձեր վարչաշրջան այս ծառայությունները ստանալու մասին մանրամասների համար:

Kaiser Permanente-ի և Medi-Cal-ի կողմից չապահովագրվող ծառայություններ

Medi-Cal-ը չի ապահովագրում որոշ ծառայություններ: Այս դեպքերում մենք չենք կարող ապահովագրել դրանք: Այս հատվածը նկարագրում է այն ծառայությունները, որոնք չեն ապահովագրվում ո՛չ մեր, ո՛չ էլ Medi-Cal-ի կողմից: Ավելին իմանալու համար կարդացեք ստորև նշված բոլոր բաժինները կամ զանգահարեք **1-855-839-7613** (TTY **711**) հեռախոսահամարով:

Որոշ քննություններ և ծառայություններ

Medi-Cal-ի ապահովագրումը չի ներառում քննություններն ու ծառայությունները, որոնք անհրաժեշտ են՝



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

4 | Նպաստներ և ծառայություններ

- Աշխատանքի ընդունվելու կամ այն պահպանելու համար
- Ապահովագրություն ստանալու համար
- Որևէ լիցենզիա ստանալու համար
- Դատարանի որոշմամբ, ինչպես նաև պայմանականորեն դատապարտվելու կամ ազատ արձակվելու համար

Այս բացառությունը չի գործում, եթե ցանցի բժիշկը համարում է, որ ծառայությունները Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են:

Հարմարավետության կամ հանգստի պարագաներ

Medi-Cal-ի ապահովագրումը չի ներառում հարմարավետության, հանգստի կամ շքեղության սարքավորում կամ հատկանիշներ: Մա ներառում է առարկաներ, որոնք նախատեսված են միայն որևէ Անդամի, Անդամի ընտանիքի կամ Անդամի առողջապահական խնամքի մատակարարի հանգիստը կամ հարմարավետությունն ապահովելու համար: Այս բացառությունը կիրառելի չէ սպառողական մակարդակի կրծքի պոմպերի նկատմամբ, որոնք տրամադրվում են կանանց հղիությունից հետո: Այս բացառությունը չի վերաբերում նաև այն պարագաներին, որոնք հաստատվել են Համայնքային աջակցությաններով: Համայնքային օժանդակության մասին մանրամասների համար կարդացեք այդ վերնագիրը վերևում՝ այս Գլուխ 4-ում:

Կոսմետիկական ծառայություններ

Medi-Cal-ի ապահովագրումը չի ներառում Ձեր արտաքին տեսքը փոխելու նպատակով տրամադրվող ծառայություններ (այդ թվում՝ արտաքին տեսքը փոխելու նպատակով՝ մարմնի բնականոն մասերի վրա կատարվող վիրահատություն): Այս բացառությունը չի տարածվում ապահովագրված պրոթեզային սարքերի վրա՝

- Որպես ապահովագրված վերականգնողական վիրահատության մաս՝ ամորձիների իմպլանտներ
- Կրծքի պրոթեզներ, որոնք անհրաժեշտ են կրծքագեղձի կամ դրա ուռուցքի հեռացումից հետո
- Դեմքի արտաքին հատվածն ամբողջությամբ կամ մասամբ փոխարինելու նպատակով օգտագործվող պրոթեզներ

Մեկանգամյա օգտագործման պարագաներ

Medi-Cal-ի ապահովագրումը չի ներառում տանն օգտագործվող հետևյալ մեկանգամյա պարագաները՝ վիրակապեր, թանգիֆ, ժապավեն, հականեխումային նյութեր, փաթաթաններ



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY 711): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

և առաձգական վիրակապեր: Այս բացառությունը չի վերաբերում մեկանգամյա օգտագործման պարագաներին, որոնք տրամադրվում են որպես հետևյալ նպաստների մի մաս, որը նկարագրված է այս Անդամի ձեռնարկի Գլուխ 4-ում («Նպաստներ և ծառայություններ»)

- Դիալիզի/հիմնոդիալիզի բուժում
- Երկարատև օգտագործման բժշկական սարքավորումներ
- Տանը մատուցվող առողջապահական խնամք
- Հոսպիս և պալիատիվ խնամք
- Բժշկական պարագաներ, սարքավորումներ և մեծ սարքեր
- Դեղատոմսով դեղեր

Փորձնական ծառայություններ

Փորձնական ծառայությունները դեղեր, սարքավորումներ, բուժգործողություններ կամ ծառայություններ են, որոնք ստուգվել են լաբորատոր պայմաններում կամ կենդանիների վրա, սակայն դեռ պատրաստ չեն ստուգվելու մարդկանց վրա: Medi-Cal-ի ապահովագրումը չի ներառում փորձնական ծառայություններ:

Անպտղության ծառայություններ

Medi-Cal-ի ապահովագրումը չի ներառում ծառայություններ, որոնք օգնում են որևէ մեկին հղիանալ, այս թվում՝ անպտղության ծառայություններ, արհեստական սերմավորում և վերարտադրողական տեխնոլոգիաների օժանդակ ծառայություններ: Անպտղության պահպանման ծառայությունները չեն ապահովագրվում Medi-Cal-ի կողմից:

Մազերի կորստի դեպքում կամ դրանց աճի համար տրամադրվող բուժում

Medi-Cal-ի ապահովագրումը չի ներառում պարագաներ և ծառայություններ, որոնք քաջալերում են, կանխում են կամ այլ բուժումներ մազերի աճի համար կամ մազաթափության դեմ:

Պարագաներ և ծառայություններ, որոնք առողջապահական խնամքի պարագաներ և ծառայություններ չեն

Medi-Cal ապահովագրումը չի ներառում պարագաներ, որոնք առողջապահական խնամքի պարագաներ կամ ծառայություններ չեն, եթե իհարկե դրանք հաստատված չեն Ձեր



4 | Նպաստներ և ծառայություններ

Համայնքային աջակցությունների կամ երկարատև օգտագործման բժշկական սարքավորման նպաստի ներքո: Օրինակ, մենք չենք ապահովագրում՝

- Շարժուն և վարվելակերպի ուսուցանում
- Պլանավորման հմտությունների, օրինակ՝ օրվա պլանավորում և նախագծերի կամ պարտականությունների պլանավորում, ուսուցանման և դրանց ձևավորմանն աջակցող ծառայություններ
- Գիտելիքները կամ հմտությունները հարստացնելու նպատակով օգտագործվող պարագաներ և ծառայություններ
- Մտավոր ունակությունները բարձրացնելու նպատակով անցկացվող ուսուցանման և աջակցության ծառայություններ
- Այնպիսի հմտությունների ձևավորման նպատակով իրականացվող դասընթացներ կամ պարապմունքներ, ինչպիսիք են՝ քերականությունը, մաթեմատիկան և ժամանակի կառավարումը
- Ընթերցանության ուսուցանում՝ անկախ այն բանից՝ Դուք դիսլեքսիա ունեք, թե ոչ
- Ուսումնական թեստերի անցկացում
- Կերպարվեստ, պար, ձիավարություն, երաժշտություն, դերասանական արվեստ կամ լող սովորեցնելը, բացի այն դեպքերից, երբ «դերասանական արվեստ սովորեցնելը» բացառությունը չի վերաբերում վարվեցողական առողջության թերապիայի բուժման ծրագրի մաս կազմող և Գլուխ 4-ի («Նպաստներ և ծառայություններ») ներքո «Վարվեցողական առողջության բուժում» վերնագրի տակ նկարագրված կարգով վճարվող ծառայություններին
- Աշխատանքի ընդունվելու կամ մասնագիտական մակարդակի բարձրացման հմտությունների ուսուցանում
- Մասնագիտական պատրաստում կամ մասնագիտական հմտությունների ուսուցանում
- Մասնագիտական աճի դասընթացներ
- Որևէ կոնկրետ աշխատանքի համար պատրաստելու կամ աշխատանքի ընդունման հարցերով խորհրդատվություն
- Ձեր տան կամ մեքենայի փոփոխություններ, եթե իհարկե դրանք ժամանակվոր փոփոխություններ չեն՝ ըստ Բժշկական անհրաժեշտության, կամ հաստատված չեն Համայնքային օժանդակության շրջանակներում
- Ջրաբուժություն և այլ ջրային թերապիաներ: Ջրաբուժության և այլ ջրային թերապիաների այս բացառությունը չի վերաբերում թերապևտիկ ծառայություններին, որոնք ֆիզիկական թերապիայի ծրագրի մաս են կազմում և



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

ապահովագրվում են որպես Գլուխ 4-ում («Նպաստներ և ծառայություններ») նկարագրված հետևյալ նպաստների մի մաս՝

- Տանը մատուցվող առողջապահական խնամք
- Հոսպիս և պալիատիվ խնամք
- Վերականգնողական և առօրյա կյանքի հմտությունների պահպանման ծառայություններ
- Հմուտ բուժքույրական խնամքի հաստատության ծառայություններ

Բուժական մերսում

Medi-Cal-ի ապահովագրությունը չի ներառում բուժական մերսում: Այս բացառությունը չի վերաբերում թերապևտիկ ծառայություններին, որոնք ֆիզիկական թերապիայի ծրագրի մաս են կազմում և ապահովագրվում են որպես այս Անդամի ձեռնարկի Գլուխ 4-ում («Նպաստներ և ծառայություններ») նկարագրված հետևյալ նպաստների մի մաս՝

- Տանը մատուցվող առողջապահական խնամք
- Հոսպիս և պալիատիվ խնամք
- Վերականգնողական և առօրյա կյանքի հմտությունների պահպանման ծառայություններ
- Հմուտ բուժքույրական խնամքի հաստատության ծառայություններ

Անձնական խնամքի ծառայություններ

Medi-Cal-ի ապահովագրումը չի ներառում ծառայություններ, որոնք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ չեն, ինչպես՝ օգնություն առօրյա կենսագործունեության ապահովման հարցում (օրինակ՝ քայլել, անկողին մտնել կամ անկողնուց վեր կենալ, լոզանք ընդունել, հագնվել, սնվել, գուգարանից օգտվել և դեղեր ընդունել): Այս բացառությունը չի տարածվում առօրյա կյանքի համար անհրաժեշտ գործողությունների հարցում տրամադրվող այն օգնության վրա, որը տրամադրվում է որպես ապահովագրության մաս հետևյալի ներքո՝

- Հոսպիս և պալիատիվ խնամք
- Երկարաժամկետ խնամքի ծառայություններ և աջակցություններ
- Խնամք հմուտ բուժքույրական/միջանկյալ/ենթասուր հաստատությունում
- Համայնքային աջակցություններ



Անլացման դարձման ընթացակարգ

Medi-Cal-ի ապահովագրումը չի ներառում կամավոր վիրահատական հակաբեղմնավորումը հետ դարձնելու ծառայություններ:

Ոտքերի ընթացիկ խնամքի պարագաներ և ծառայություններ

Medi-Cal-ի ապահովագրումը չի ներառում ոտքերի խնամքի պարագաներ և ծառայություններ, որոնք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ չեն:

Դաշնային Սննդի և դեղորայքի վարչության կողմից չհաստատված ծառայություններ

Medi-Cal-ի ապահովագրումը չի ներառում դեղեր, պատրաստուկներ, ստուգումներ, պատվաստանյութեր, սարքեր, ռադիոակտիվ նյութեր և այլ ծառայություններ, որոնք ԱՄՆ-ում վաճառքի համար պետք է օրենքով արտոնվեն Սննդի և դեղամիջոցների վարչության («FDA») կողմից, բայց արտոնված չեն FDA-ի կողմից: Այս բացառությունը չի տարածվում հետևյալների վրա՝

- Շտապ օգնության ապահովագրված խնամք Կանադայում կամ Մեքսիկայում
- Այս Անդամի ձեռնարկի Գլուխ 4-ի «Կլինիկական փորձարկումներ» հատվածի ներքո ապահովագրված ծառայություններ
- Այս Անդամի ձեռնարկի Գլուխ 4-ում նկարագրված փորձնական ծառայությունների մաս հանդիսացող ապահովագրված ծառայություններ

Վկայագիր չունեցող անձանց կողմից տրամադրվող ծառայություններ

Medi-Cal-ի ապահովագրումն ընդհանուր առմամբ չի ներառում ծառայություններ, որոնք ապահով և արդյունավետ կերպով մատուցվում են այն անձանց կողմից, որոնցից նահանգը թույլատրագիր կամ հավաստագիր չի պահանջում առողջապահական ծառայություններ տրամադրելու համար, և երբ Անդամի առողջական խնդիրը չի պահանջում, որ ծառայությունները տրամադրվեն թույլատրագրված բուժաշխատողի կողմից:

Այս բացառությունը չի տարածվում հետևյալի վրա՝

- Անդամի ձեռնարկի Գլուխ 4-ի «Վերականգնողական և առօրյա կյանքի հմտությունների պահպանման ծառայություններ» հատվածի «Վարվեցողական առողջության բուժումներ» վերնագրի տակ ապահովագրված ծառայություններ:
- Համայնքային աջակցություններն ապահովագրվում են Ձեզ համար:



- Դոուլայի ապահովագրված ծառայություններ
- Համայնքային բուժաշխատողների ապահովագրված ծառայություններ

Չապահովագրված ծառայությանը վերաբերող ծառայություններ

Երբ որևէ ծառայություն ապահովագրված չէ, այդ չապահովագրված ծառայության հետ առնչվող մյուս բոլոր ծառայությունները բացառված են: Այս բացառությունը կիրառելի չէ բարդությունների բուժման նկատմամբ, որոնք առաջացել են չապահովագրված ծառայությունների պատճառով, եթե այդ բարդություններն ապահովագրված լինեին Medi-Cal-ի կողմից: Օրինակ, եթե չապահովագրված կոսմետիկ վիրահատություն էք անում, մենք չենք ապահովագրում վիրահատության համար պատրաստվելու ծառայությունները կամ հետագա խնամքը: Եթե հետագայում Ձեզ մոտ առաջանա կյանքին սպառնացող բարդություն, օրինակ՝ լուրջ վարակ, այս բացառությունը չի գործի, և մենք կվճարենք այդ բարդությունը բուժելու ծառայությունների համար, եթե այդ ծառայություններն ապահովագրվում են Medi-Cal-ի կողմից:

Կապարի թունավորման գործի կառավարում, որը տրամադրվում է վարչաշրջանի առողջապահության բաժինների կողմից

Խնդրում ենք դիմել Ձեր վարչաշրջան կապարի թունավորման գործի կառավարման ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար:

Նոր և գոյություն ունեցող տեխնոլոգիաների գնահատում

Kaiser Permanente-ն ունի բուժուժներ ու թեստեր ներկայացնող նոր բժշկական տեխնոլոգիաների դիտարկման և գնահատման խստապահանջ գործընթաց: Ցանցի բժիշկները որոշում են, թե արդյոք իրենց հիվանդներին համապատասխանում են այն նոր բժշկական տեխնոլոգիաները, որոնք անվտանգ և արդյունավետ են ներկայացվում տպագրված, գործընկերների կողմից վերահսկվող կլինիկական հետազոտությունների ժամանակ:



5. Երեխաների և երիտասարդների բարեկեցության խնամք

21 տարեկանից ցածր տարիքի երեխաները և երիտասարդները կարող են ստանալ հատուկ առողջապահական ծառայություններ, հենց որ անդամագրվեն: Սա երաշխավորում է, որ նրանք ստանան ճիշտ կանխարգելիչ, ատամնաբուժական, հոգեկան առողջության խնամքի, ներառյալ՝ զարգացման ու մասնագիտական ծառայություններ: Այս գլուխը բացատրում է այս ծառայությունները:

Մանկաբուժական ծառայություններ (21 տարեկանից ցածր տարիքի երեխաներ)

21 տարեկանից ցածր տարիքի անդամներին անհրաժեշտ խնամքն ապահովագրվում է: Ներքոնշյալ ցուցակը ներառում է Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները՝ բուժելու կամ խնամելու արատները և ֆիզիկական կամ հոգեկան ախտանիշները: Ապահովագրված ծառայությունները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

- Բարեկեցության այցեր և դեռահասների սուուգումներ (երեխաներին անհրաժեշտ կարևոր այցեր)
- Պատվաստումներ (սրսկումներ)
- Վարվեցողական առողջության գնահատում և բուժում



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

- Հոգեկան առողջության գնահատում և բուժում, ներառյալ՝ անհատական, խմբային և ընտանեկան հոգեբուժում (մասնագիտացված հոգեկան առողջության ծառայություններ Sacramento և Solano վարչաշրջաններից դուրս ապահովագրված են վարչաշրջանի կողմից)
- Անբարենպաստ մանկության փորձառությունների (Adverse childhood experience, ACE) գնում
- Լաբորատոր անալիզներ, ներառյալ՝ կապարի թունավորման արյան զննում
- Առողջապահական և կանխարգելիչ կրթություն
- Ակնաբուժական ծառայություններ
- Ատամբարուժական ծառայություններ (ապահովագրված Վճար ծառայության դիմաց (Fee-for-Service, FFS) Medi-Cal Dental-ի կամ Ատամբարուժական կառավարվող խնամքի կողմից)
- Լսողության ծառայություններ (ապահովագրվում են Whole Child Model կամ California Children’s Services (CCS)-ի կողմից որակավորվող երեխաների համար: Մենք կապահովագրենք Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ լսողության ծառայությունները, որոնք Whole Child Model-ը կամ CCS-ը չի ապահովագրում)

Այս ծառայությունները կոչվում են Վաղ և պարբերական զննումների, ախտորոշման և բուժման (Early and periodic screening, diagnostic and treatment, EPSDT) ծառայություններ: EPSDT ծառայությունները, որոնք խորհուրդ են տրվում մանկաբույժների Bright Futures ուղեցույցներում՝ օգնելու Ձեզ և Ձեր երեխային առողջ մնալ, Ձեզ կտրամադրվեն անվճար: Այս ուղեցույցները կարդալու համար այցելեք

https://downloads.aap.org/AAP/PDF/periodicity_schedule.pdf կայքը (անգլերեն):

Երեխայի բարեկեցության առողջական ստուգումներ և կանխարգելիչ խնամք

Կանխարգելիչ խնամքը ներառում է կանոնավոր առողջական ստուգումներ և զննումներ, որոնք օգնում են Ձեր բժշկին շուտ հայտնաբերել խնդիրները, ինչպես նաև խորհրդատվական ծառայություններ՝ հայտնաբերելու հիվանդությունները կամ բժշկական վիճակները, նախքան դրանք լուրջ խնդիրների կվերածվեն: Կանոնավոր ստուգումներն օգնում են Ձեզ կամ Ձեր երեխայի բժշկին գտնել խնդիրները: Խնդիրները կարող են լինել բժշկական, ատամբարուժական, տեսողության, լսողության, հոգեկան առողջության և որևէ թմրամիջոցների (ակոհոլ կամ թմրադեղեր) օգտագործման խանգարումների հետ կապված:



Չանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Չանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

5 | Երեխաների և երիտասարդների բարեկեցության խնամք

Մենք ապահովագրում ենք ստուգումներ՝ զննելու խնդիրները (ներառյալ՝ արյան կապարի մակարդակի գնահատում) ցանկացած անհրաժեշտ պահի, անգամ եթե դրանք Ձեր կամ Ձեր երեխայի պարբերական ստուգման ժամանակ չեն իրականացվում:

Կանխարգելիչ խնամքը կարող է նաև ներառել Ձեզ կամ Ձեր երեխային անհրաժեշտ պատվաստումներ: Մենք պետք է ապահովենք, որ բոլոր անդամագրված երեխաները ստանում են բոլոր սրկուսները, որոնք անհրաժեշտ են, երբ նրանք այցելում են իրենց առաջնային խնամքի մատակարարին (primary care provider, PCP): Կանխարգելիչ խնամքի ծառայությունները և զննումներն անվճար են և նախնական հաստատում (նախօրոք լիազորում) չեն պահանջում:

Ձեր երեխան պետք է ստուգումներ անցնի հետևյալ տարիքում՝

- Ծնվելուց 2-4 օր անց
- 1 ամսական
- 2 ամսական
- 4 ամսական
- 6 ամսական
- 9 ամսական
- 12 ամսական
- 15 ամսական
- 18 ամսական
- 24 ամսական
- 30 ամսական
- Տարեկան մեկ անգամ 3-ից մինչև 20 տարեկանը

Բարեկեցության առողջական ստուգումները ներառում են՝

- Ամբողջական պատմություն և ոտից գլուխ ֆիզիկական ստուգում
- Տարիքին համապատասխան սրկուսներ: Կալիֆորնիան հետևում է Մանկաբուժության ամերիկյան ակադեմիայի Bright Futures խորհուրդներին՝ https://downloads.aap.org/AAP/PDF/periodicity_schedule.pdf (անգլերեն)
- Լաբորատոր անալիզներ, ներառյալ՝ կապարի թունավորման արյան զննում
- Առողջապահական կրթություն
- Տեսողության և լսողության զննում
- Բերանի խոռոչի զննում
- Վարվեցողական առողջության գնահատում



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY 711): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Եթե առողջական խնամքի մատակարարը խնդիր է գտնում Ձեր կամ Ձեր երեխայի ֆիզիկական կամ հոգեկան առողջության հետ ստուգման կամ գնման ընթացքում, Դուք կամ Ձեր երեխան պետք է բժշկական խնամք ստանաք: Մենք Ձեզ համար անվճար կապահովագրենք այդ խնամքը, ներառյալ՝

- Բժշկի, բժշկական պրակտիկայով զբաղվող բուժքրոջ և հիվանդանոցային խնամք
- Ձեզ առողջ պահելու համար անհրաժեշտ պատվաստումներ
- Ֆիզիկական, խոսքի/լեզվի և աշխատանքային թերապիաներ
- Տնային առողջության ծառայություններ, ներառյալ՝ բժշկական սարքեր, պարագաներ և հարմարանքներ
- Տեսողության խնդիրների բուժում, ներառյալ՝ ակնոցներ
- Լսողության խնդիրների բուժում, ներառյալ լսողության սարքեր, երբ դրանք ապահովագրված չեն CCS-ի կամ Whole Child Model-ի կողմից
- Վարքագծային առողջության բուժում առողջական վիճակների համար, ինչպիսիք են՝ աուտիզմի սպեկտրի խանգարումները և զարգացման հաշմանդամությունները
- Գործի կառավարում և առողջապահական կրթություն
- Վերականգնողական վիրահատություն, որը վիրահատություն է՝ բնածին արատների, զարգացման խանգարումների, վսասվածքի, վարակի, ուռուցքների կամ հիվանդության արդյունքում առաջացած մարմնի աննորմալ կառուցվածքները շտկելու կամ վերականգնելու համար՝ ֆունկցիայի բարելավման կամ նորմալ տեսք ստեղծելու նպատակով:

Կապարի թունավորման արյան զննում

Kaiser Permanente-ին անդամագրված բոլոր երեխաները պետք է անցնեն կապարի թունավորման արյան զննում 12 և 24 ամսական տարիքում կամ 36-ից 72 ամսական տարիքում, եթե ավելի վաղ չեին ստուգվել: Երեխաները նույնպես պետք է զննվեն, երբ բժիշկը կարծում է, որ կյանքի փոփոխությունը երեխային վտանգի տակ է դրել:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Երեխաների և երիտասարդներին բարեկեցության խնամքի ծառայությունների ստացման օգնություն

Մենք կօգնենք 21 տարեկանից ցածր տարիքի անդամներին և նրանց ընտանիքներին ստանալ անհրաժեշտ ծառայությունները: Kaiser Permanente-ի խնամքի համակարգողը կարող է՝

- Պատմել Ձեզ մատչելի ծառայությունների մասին
- Օգնել գտնել Medi-Cal Ցանցի մատակարարների կամ Ցանցից դուրս գործող Medi-Cal մատակարարների, եթե հարկավոր է
- Օգնել ժամադրություններ նշանակել
- Կազմակերպել Բժշկական փոխադրում և Ոչ բժշկական փոխադրում, որպեսզի երեխաները գնան իրենց ժամադրություններին
- Օգնել համակարգել խնամքը (Fee-for-Service, «FFS») Medi-Cal ծառայությունների համար, ինչպիսիք են, բայց չսահմանափակվելով՝
 - Բուժման և վերականգնողական ծառայություններ հոգեկան առողջության և թմրամիջոցների օգտագործման խանգարումների համար
 - Ատամբարուժական խնդիրների բուժում, ներառյալ՝ օրթոդոնտիա

Այլ ծառայություններ, որոնք կարող են ստանալ երեխաները Վճարում ծառայության դիմաց («FFS») Medi-Cal-ի կամ այլ ծրագրերի միջոցով

Ատամբարուժական ստուգումներ

Ձեր մանկան լնդերը մաքուր պահեք՝ զգուշորեն մաքրելով դրանք փափուկ կտորով ամեն օր: Չորսից վեց ամսականում սկսում է «ատամների ծակումը», երբ մանկան ատամները սկսում են դուրս գալ: Դուք պետք է Ձեր մանկան համար իր առաջին ատամբարուժական ժամադրությունը նշանակեք հենց որ դուրս գա առաջին ատամը կամ մինչև նրա մեկ տարեկանը, ինչը որ ավելի շուտ տեղի ունենա:

Այս Medi-Cal ատամբարուժական ծառայություններն անվճար են կամ էժան հետևյալի համար՝



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

1-ից 4 տարեկան մանուկներ

- Մանկան առաջին ատամնաբուժական այց
- Մանկան առաջին ատամնաբուժական ստուգում
- Ատամնաբուժական ստուգումներ (ամեն 6 ամիսը մեկ և երբեմն ավել)
- Ռենտգեններ
- Ատամների մաքրում (ամեն 6 ամիսը մեկ և երբեմն ավել)
- Ֆտորիդ (ամեն 6 ամիսը մեկ և երբեմն ավել)
- Պլումբաներ
- Հեռացումներ (ատամի հանում)
- Շտապ օգնության ատամնաբուժական ծառայություններ
- Անզգայացում (եթե Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է)*

5-12 տարեկան երեխաներ

- Ատամնաբուժական ստուգումներ (ամեն 6 ամիսը մեկ և երբեմն ավել)
- Ռենտգեններ
- Ֆտորիդ (ամեն 6 ամիսը մեկ և երբեմն ավել)
- Ատամների մաքրում (ամեն 6 ամիսը մեկ և երբեմն ավել)
- Սեղանատամների զմռսում
- Պլումբաներ
- Ատամի արմատի խողովակներ
- Հեռացումներ (ատամի հանում)
- Շտապ օգնության ատամնաբուժական ծառայություններ
- Անզգայացում (եթե Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է)*

13-20 տարեկան երիտասարդներ

- Ատամնաբուժական ստուգումներ (ամեն 6 ամիսը մեկ և երբեմն ավել)
- Ռենտգեններ
- Ֆտորիդ (ամեն 6 ամիսը մեկ և երբեմն ավել)
- Ատամների մաքրում (ամեն 6 ամիսը մեկ և երբեմն ավել)



5 | Երեխաների և երիտասարդների բարեկեցության խնամք

- Օրթոդոնտիա (բրեկետներ), եթե որակավորվում են
- Պլոմբաներ
- Ատամնապսակներ
- Ատամի արմատի խողովակներ
- Հեռացումներ (ատամի հանում)
- Շտապ օգնության ատամնաբուժական ծառայություններ
- Անզգայացում (եթե Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է)*

*Մատակարարները պետք է հաշվի առնեն հանգստացնող միջոցը և ընդհանուր անզգայացումը, երբ որոշում են և փաստագրում են, թե ինչու տեղային անզգայացումը բժշկական տեսակետից հարմար չէ, և ատամնաբուժական բուժումը նախապես հաստատված է կամ նախնական հաստատման (նախօրոք լիազորում) կարիք չունի:

Ահա որոշ օրինակներ՝ ինչու տեղային անզգայացումը չի կարող օգտագործվել, և դրա փոխարեն պետք է օգտագործվի հանգստացնող միջոց և ընդհանուր անզգայացում՝

- Ֆիզիկական, վարքային, զարգացման կամ հուզական վիճակ, որն արգելում է հիվանդին արձագանքել մատակարարի կողմից բուժում իրականացնելու փորձերին
- Մեծ վերականգնողական կամ վիրաբուժական միջամտություններ
- Չհամագործակցող երեխա
- Սուր վարակ ներարկման տեղում
- Ցավը վերահսկելու տեղային անզգայացնող միջոցի ձախողում

Եթե հարցեր ունեք կամ ցանկանում եք ավելին իմանալ ատամնաբուժական ծառայությունների մասին, զանգահարեք Medi-Cal Dental ծրագիր՝ **1-800-322-6384** (TTY **1-800-735-2922**) կամ **711**) հեռախոսահամարով: Կամ այցելեք

<https://smilecalifornia.org/> կայքը:

Լրացուցիչ կանխարգելիչ կրթության ուղեգրման ծառայություններ

Եթե անհանգստանում եք, որ Ձեր երեխան չի մասնակցում կամ դժվարանում է դպրոցում սովորելիս, խոսեք Ձեր երեխայի բժշկի, ուսուցիչների կամ դպրոցի տնօրինության հետ: Ի



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

5 | Երեխաների և երիտասարդների բարեկեցության խնամք

լրումն մեր կողմից ապահովագրված Ձեր բժշկական նպաստների՝ կան ծառայություններ, որոնք պետք է տրամադրի դպրոցն՝ օգնելու Ձեր երեխային սովորել և հետ չմնալ:

Ձեր երեխային սովորելու հարցում օգնությունը ներառում է հետևյալ ծառայությունները՝

- Խոսքի և լեզվի ծառայություններ
- Հոգեբանական ծառայություններ
- Ֆիզիոթերապիա
- Աշխատանքային թերապիա
- Օժանդակող տեխնոլոգիա
- Սոցիալական աշխատանքի ծառայություններ
- Խորհրդատվական ծառայություններ
- Դպրոցի բուժքրոջ ծառայություններ
- Փոխադրամիջոց դպրոց և հետ

Կալիֆորնիայի Կրթության բաժինը տրամադրում և վճարում է այս ծառայությունները: Ձեր երեխայի բժիշկների և ուսուցիչների հետ միասին՝ Դուք կարող եք հատուկ ծրագիր կազմել Ձեր երեխային օգնելու համար:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613**
(TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ,
շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

6. Խնդիրների մասին տեղեկացնելն ու դրանք լուծելը

Խնդիրները զեկուցելու և լուծելու երկու տարբերակներ կան՝

- Օգտագործեք **բողոք** (կամ **գանգատը**), երբ Դուք խնդիր ունեք կամ դժգոհ եք Kaiser Permanente-ից կամ մատակարարից, կամ մատակարարից ստացված առողջապահական խնամքի կամ բուժման հետ
- Օգտագործեք **բողոքարկում**, երբ Դուք համաձայն չեք ծառայությունները փոխելու կամ չապահովագրելու վերաբերյալ մեր որոշման հետ

Դուք իրավունք ունեք գանգատներ և բողոքարկումներ ներկայացնել Kaiser Permanente-ին Ձեր խնդրի մասին մեզ տեղեկացնելու համար: Մա չի վերացնում որևէ օրինական իրավունք կամ միջոց: Մենք Ձեր դեմ խտրականություն կամ վրեժխնդրություն չենք դրսևորի մեր դեմ բողոք ներկայացնելու կամ խնդիրներ զեկուցելու համար: Մեզ տեղեկացնելով Ձեր խնդրի մասին՝ Դուք կօգնեք մեզ բարելավել բոլոր Անդամների խնամքը:

Կարող եք դիմել Kaiser Permanente, որպեսզի տեղեկացնեք մեզ Ձեր խնդրի մասին: Զանգահարեք մեզ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի փակ տոն օրերից) **1-855-839-7613** (TTY **711**) հեռախոսահամարով, որպեսզի տեղեկացնեք մեզ Ձեր խնդրի մասին: Կարող եք նաև տեղեկացնել մեզ առցանց՝ **kp.org** կայքում (անգլերեն) կամ անձամբ Անդամների ծառայությունների գրասենյակում Ձեր տեղական Ծրագրի հաստատությունում:

Եթե Ձեր գանգատը կամ բողոքարկումը դեռևս լուծում չի ստացել 30 օր անց, կամ Դուք բավարարված չեք արդյունքով, Դուք կարող եք գանգահարել Կալիֆորնիայի Կառավարվող առողջապահական խնամքի բաժին (Department of Managed Health Care, «DMHC»): Խնդրեք նրանց վերանայել Ձեր բողոքը կամ Անկախ բժշկական վերանայում (Independent Medical Review, «IMR») անցկացնել: Եթե Ձեր խնդիրը հրատապ է, օրինակ՝ ներառում է լուրջ վտանգ Ձեր առողջությանը, կարող եք անմիջապես գանգահարել DMHC՝ առանց սկզբից գանգատ



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

և/կամ բողոքարկում մեզ ներկայացնելու: Կարող եք զանգահարել DMHC՝ **1-888-466-2219** (TTY **1-877-688-9891** կամ **711**) անվճար հեռախոսահամարով: Կամ այցելեք <https://www.dmhc.ca.gov> կայքը (անգլերեն):

Կալիֆորնիայի Առողջապահական խնամքի ծառայությունների բաժնի (Department of Health Care Services, «DHCS») Medi-Cal Կառավարվող խնամքի Օմբուդսմենը նույնպես կարող է օգնել: Նրանք կարող են օգնել, եթե Դուք խնդիրներ ունեք առողջապահական ծրագրի անդամագրվելու, այն փոխելու կամ լքելու հետ կապված: Նրանք կարող են օգնել նաև, եթե Դուք տեղափոխվել եք և դժվարություններ ունեք Ձեր Medi-Cal-ը Ձեր նոր վարչաշրջան տեղափոխելու հարցում: Կարող եք զանգահարել Օմբուդսմենին **1-888-452-8609** հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8 a.m.-ից 5 p.m.-ը: Այս զանգն անվճար է:

Դուք կարող եք նաև զանգատ ներկայացնել վարչաշրջանի իրավունակության գրասենյակ Ձեր Medi-Cal իրավունակության վերաբերյալ: Եթե վստահ չեք, թե ում պետք է ուղարկել Ձեր զանգատը, զանգահարեք մեր Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**) հեռախոսահամարով:

Ձեր առողջական ապահովագրությունում առկա սխալ տվյալներ զեկուցելու համար խնդրում ենք զանգահարել Health Care Options՝ **1-800-541-5555** հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8 a.m.-ից 5 p.m.-ը:

Բողոքներ

Բողոքն (զանգատը) այն է, երբ Դուք խնդիր ունեք կամ դժգոհ եք Kaiser Permanente-ից կամ մատակարարից ստացված ծառայություններից: Բողոք ներկայացնելու համար ժամանակային սահմանափակում չկա:

Եթե բողոք ունեք ամբուլատոր դեղատոմսային դեղի կամ դեղատան ծառայությունների վերաբերյալ, որը ստացել եք Medi-Cal Rx-ի միջոցով, բողոք ներկայացրեք Medi-Cal Rx-ին: Կարող եք բողոք ներկայացնել գրավոր կամ հեռախոսով՝ այցելելով www.Medi-CalRx.dhcs.ca.gov կայքը (անգլերեն) կամ զանգահարելով Medi-Cal Rx Հաճախորդների սպասարկում՝ **1-800-977-2273** հեռախոսահամարով օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY օգտագործողները կարող են զանգահարել **711**՝ երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8 a.m.-ից 5 p.m.-ը:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ kp.org (անգլերեն)

Մնացած բոլոր խնդիրների համար կարող եք ցանկացած պահի մեզ բողոք ներկայացնել հեռախոսով, գրավոր, անձամբ կամ առցանց: Ձեր լիազորված ներկայացուցիչը կամ մատակարարը կարող է նույնպես բողոք ներկայացնել Ձեզ համար Ձեր թույլտվությամբ:

Ստանդարտ ընթացակարգ

- **Հեռախոսով.** գանգահարեք Անդամների ծառայություններ՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Տրամադրեք մեզ Ձեր բժշկական արձանագրությունների համարը, Ձեր անունը և Ձեր բողոքի պատճառը:
- **Փոստով.** գրավոր գանգատ ներկայացնելու համար խնդրում ենք օգտվել մեր գանգատի ձևաթղթից, որը մատչելի է **kp.org** կայքում (անգլերեն)՝ «Forms & Publications» (Ձևաթղթեր և հրատարակություններ) տակ: Կարող եք նաև ստանալ ձևաթուղթը Անդամների ծառայությունների գրասենյակից Ծրագրի հաստատությունում կամ Medi-Cal Ցանցի մատակարարներից: Անպայման ներառեք Ձեր անունը, բժշկական գրառումների համարը և Ձեր բողոքի պատճառը: Տեղեկացրեք մեզ, թե ինչ է պատահել և ինչպես կարող ենք օգնել: Ձևաթուղթը փոստով ուղարկեք հետևյալ հասցեով՝
Member Case Resolution Center (ստանդարտ բողոքների համար)
P.O. Box 939001
San Diego, CA 92193-90011
- **Առցանց.** լրացրեք գանգատի ձևաթուղթն առցանց՝ **kp.org** կայքում (անգլերեն)

Եթե Ձեզ օգնություն է հարկավոր բողոք ներկայացնելու հարցում, մենք կարող ենք օգնել: Մենք կարող ենք Ձեզ անվճար լեզվական ծառայություններ տրամադրել: Զանգահարեք Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով:

Ձեր բողոքը ստանալուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում մենք Ձեզ նամակ կուղարկենք՝ տեղեկացնելով, որ մենք այն ստացել ենք: 30 օրվա ընթացքում մենք մեկ այլ նամակ կուղարկենք, որը կտեղեկացնի, թե ինչպիսի լուծում ենք մենք տվել Ձեր խնդրին: Եթե գանգահարում եք մեզ գանգատի հետ կապված, որն առողջապահական խնամքի ապահովագրության, բժշկական տեսանկյունից անհրաժեշտության, փորձական կամ հետազոտական բուժման մասին չէ, և Ձեր գանգատը լուծվել է մինչև հաջորդ աշխատանքային օրը, Դուք, հնարավոր է, նամակ չստանաք:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Հրատապ ընթացակարգ

Եթե հրատապ խնդիր ունեք, որը վերաբերում է լուրջ առողջական մտահոգությանը, մենք կսկսենք արագացված (արագ) վերանյում և որոշում տրամադրել Ձեզ 72 ժամվա ընթացքում: Եթե Դուք ցանկանում եք, որ մենք Ձեր գանգատը շտապ ուսումնասիրենք, խնդրում ենք մեզ տեղեկացնել, թե երբ եք այն ներկայացրել: Ակնարկ. հրատապը երբեմն կոչվում է «անհետաձգելի»: Եթե կան անհետաձգելի հանգամանքներ, Ձեր գանգատը կարող է վերանայվել՝ օգտագործելով հրատապ գործընթացը:

Դուք պետք է Ձեր շտապ գանգատը ներկայացնեք հետևյալ եղանակներից մեկով՝

- **Հեռախոսով.** գանգահարեք Արագացված վերանայման միավոր՝ **1 888 987 7247 (TTY 711)**
- **Փոստով.** Ձեր գրավոր հայցն ուղարկեք՝
Kaiser Foundation Health Plan, Inc.
Expedited Review Unit
P.O. Box 1809
Pleasanton, CA 94566
- **Ֆաքս.** ֆաքսով ուղարկեք Ձեր գրավոր խնդրանքը Արագացված վերանայման միավոր՝ **1-888-987-2252:**
- **Անձամբ.** այցելեք Անդամի ծառայությունների գրասենյակ Ծրագրի հաստատությունում (հասցեների համար տեսեք Ձեր Medi-Cal Մատակարարների հասցեագիրքը կամ գանգահարեք Անդամների ծառայություններ)
- **Առցանց.** լրացրեք գանգատի ձևաթուղթն առցանց՝ **kp.org** կայքում (անգլերեն)

Եթե Ձեզ օգնություն է հարկավոր հրատապ գանգատ ներկայացնելու հարցում, մենք կարող ենք օգնել: Մենք կարող ենք Ձեզ անվճար լեզվական ծառայություններ տրամադրել: Զանգահարեք մեր Անդամների ծառայությունների բաժին՝ **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով:

Ձեր բողոքը ստանալուց 72 ժամվա ընթացքում մենք կորոշենք՝ ինչպես մշակել Ձեր բողոքը, և եթե պետք է արագացնել այն: Եթե մենք որոշենք, որ չենք արագացնելու Ձեր բողոքը, մենք կտեղեկացնենք Ձեզ, որ կլուծենք Ձեր բողոքը 30 օրվա ընթացքում: Կարող եք դիմել ուղղակիորեն DMHC որևէ հարցով, ներառյալ եթե կարծում եք, որ Ձեր մտահոգությունը որակավորվում է արագացված վերանայման համար, կամ չենք պատասխանում Ձեզ 72 ժամվա ընթացքում:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Medi-Cal Rx դեղատան նպաստներին վերաբերող բողոքները ենթակա չեն մեր գանգատների գործընթացին կամ իրավասու չեն Անկախ բժշկական վերանայման համար: Medi-Cal Rx-ի դեղերի նպաստների հետ կապված բողոքներն ու բողոքարկումներն Անդամները կարող են ներկայացնել՝ գանգահարելով **1-800-977-2273 (TTY 1-800-977-2273 և հավաքեք 5** կամ 711): Կամ այցելեք <https://medi-calrx.dhcs.ca.gov/home/> կայքը (անգլերեն):

Medi-Cal Rx-ին ոչ ենթակա դեղերի նպաստների հետ կապված բողոքները կարող են ներկայացվել անկախ բժշկական վերանայման համար: DMHC-ի անվճար հեռախոսահամարն է՝ **1-888-466-2219 (TTY 1-877-688-9891)**: Դուք կարող եք գտնել Անկախ բժշկական վերանայման/բողոքի ձևը և հրահանգները առցանց՝ DMHC-ի կայքում՝ <https://www.dmhc.ca.gov/> (անգլերեն):

Բողոքարկումներ

Բողոքարկումը տարբերվում է բողոքից: Բողոքարկումը խնդրանք է Kaiser Permanente-ին՝ վերանայել և փոխել մեր կատարած որոշումը Ձեր ծառայությունների վերաբերյալ: Եթե մենք Ձեզ Գործողության ծանուցում (Notice of Action, «NOA») կոչվող նամակ ենք ուղարկել՝ տեղեկացնելով, որ մենք մերժում, հետաձգում, փոփոխում կամ ավարտում ենք ծառայությունը, և Դուք համաձայն չեք մեր որոշման հետ, Դուք կարող եք բողոքարկում ներկայացնել: Ձեր լիազորված ներկայացուցիչը կամ մատակարարը կարող է նույնպես բողոքարկում ներկայացնել Ձեզ համար Ձեր գրավոր թույլտվությամբ:

Դուք կարող եք բողոքարկում ներկայացնել Ձեր կողմից NOA ստանալուց հետո 60 օրացուցային օրվա ընթացքում: Եթե մենք որոշենք նվազեցնել, կանգնեցնել կամ դադարեցնել ծառայությունը, որոնք Դուք այժմ ստանում եք, Դուք կարող եք շարունակել ստանալ այդ ծառայությունը, քանի դեռ սպասում եք բողոքարկման որոշմանը: Մա կոչվում է Օգնության վճարումն առկա է: Վճարվող առկա օգնություն ստանալու համար Դուք պետք է բողոքարկում խնդրեք NOA-ն ստանալու ամսաթվից 10 օրվա ընթացքում կամ նախքան այն ամսաթիվը, երբ մենք ասել ենք, որ դադարեցնելու ենք Ձեր ծառայությունները, ինչը որ ավելի ուշ է տեղի ունենում: Երբ այս հանգամանքներում բողոքարկում եք խնդրում, ծառայությունները կշարունակվեն: Հնարավոր է, մենք խնդրենք Ձեզ վճարել ծառայությունների համար, եթե վերջնական որոշումը մերժի կամ փոփոխի ծառայությունը:

Եթե ցանկանում եք բողոքարկել Medi-Cal Rx-ի որոշումը, կարող եք Նահանգային լսում խնդրել: Եթե ցանկանում եք բողոքարկել Medi-Cal Rx որոշում, Կալիֆոռնիայի Սոցիալական



Չանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Չանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ kp.org (անգլերեն)

ծառայությունների բաժանմունքն ունի Նահանգային լսման գործընթաց: Այս գործընթացը տարբերվում է Ձեր այլ նպաստների համար օգտագործվող բողոքարկումների գործընթացից: Նահանգային լսման ժամանակ դատավորն ուսումնասիրում է Ձեր խնդրանքը՝ DHCS-ի դեղագործների կլինիկական կարծիքի հետ միասին՝ վստահ լինելու համար, որ որոշումը համապատասխանում է Medi-Cal-ի դեղատան քաղաքականությանը:

Մնացած բոլոր խնդիրների համար կարող եք բողոքարկում ներկայացնել հեռախոսով, գրավոր, անձամբ կամ առցանց:

Ստանդարտ բողոքարկում

- **Հեռախոսով.** գանգահարեք Անդամների ծառայություններ՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Տրամադրեք մեզ Ձեր բժշկական արձանագրությունների համարը, Ձեր անունը և Ձեր բողոքի պատճառը
- **Փոստով.** գրավոր բողոքարկում ներկայացնելու համար խնդրում ենք օգտվել մեր գանգատի ձևաթղթից, որը մատչելի է **kp.org** կայքում (անգլերեն)՝ «Forms & Publications» (Ձևաթղթեր և հրատարակություններ) տակ: Կարող եք նաև ստանալ ձևաթուղթը Անդամների ծառայությունների գրասենյակից Ծրագրի հաստատությունում կամ Medi-Cal Ցանցի մատակարարներից: Անպայման ներառեք Ձեր անունը, բժշկական գրառումների համարը և Ձեր բողոքարկման պատճառը: Տեղեկացրեք մեզ, թե ինչ է պատահել և ինչպես կարող ենք օգնել: Ձևաթուղթը փոստով ուղարկեք հետևյալ հասցեով՝
Member Case Resolution Center (ստանդարտ բողոքների համար)
P.O. Box 939001
San Diego, CA 92193-90011
- **Առցանց.** լրացրեք գանգատի ձևաթուղթն առցանց՝ **kp.org** (անգլերեն) կայքում

Եթե Ձեզ օգնություն է հարկավոր բողոքարկում ներկայացնելու կան Վճարումն առկախ օգնության հարցում, մենք կարող ենք օգնել: Մենք կարող ենք Ձեզ անվճար լեզվական ծառայություններ տրամադրել: Զանգահարեք **1-855-839-7613** (TTY **711**):

Ձեր բողոքարկումը ստանալուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում մենք Ձեզ նամակ կուղարկենք՝ տեղեկացնելով, որ մենք այն ստացել ենք: 30 օրվա ընթացքում մենք կտեղեկացնենք Ձեզ մեր բողոքարկման որոշման մասին և կուղարկենք Ձեզ Բողոքարկման վճռի ծանուցման (Notice of Appeal Resolution, «NAR») նամակը: Եթե մենք Ձեզ որոշում չտանք Ձեր բողոքարկումը ստանալու հետո 30 օրվա ընթացքում, կարող եք Նահանգային լսում խնդրել Կալիֆոռնիայի Սոցիալական ծառայությունների բաժնից կամ Անկախ բժշկական



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

վերանայում («IMR») DMHC-ից: Սակայն, եթե Դուք սկզբից Նահանգային լսում եք խնդրում, և լսումն արդեն տեղի է ունեցել, Դուք չեք կարող IMR խնդրել DMHC-ից: Այս դեպքում, Նահանգային լսման որոշումը վերջնական է:

Հրատապ բողոքարկման ընթացակարգ

Եթե Դուք կամ Ձեր բժիշկը ցանկանում եք, որ մենք արագ որոշում կայացնենք, քանզի Ձեր բողոքարկմանը լուծում տալու համար նախատեսված ժամանակը կվտանգի Ձեր կյանքն, առողջությունը կամ գործելու կարողությունը, Դուք կարող եք արագացված (արագ) վերանայում խնդրել: Մենք որոշում կկայացնենք Ձեր բողոքարկումը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում:

Կարող եք արագացված վերանայում խնդրել հետևյալ միջոցներից մեկով՝

- **Հեռախոսով.** զանգահարեք Արագացված վերանայման միավոր՝ **1 888 987 7247 (TTY 711)**
- **Փոստով.** Ձեր գրավոր հայցն ուղարկեք՝
Kaiser Foundation Health Plan, Inc.
Expedited Review Unit
P.O. Box 1809
Pleasanton, CA 94566
- **Ֆաքս.** ֆաքսով ուղարկեք Ձեր գրավոր խնդրանքը Արագացված վերանայման միավոր՝ **1-888-987-2252:**
- **Անձամբ.** այցելեք Անդամի ծառայությունների գրասենյակ Ծրագրի հաստատությունում (հասցեների համար տեսեք Ձեր Medi-Cal Մատակարարների հասցեագիրքը կամ զանգահարեք Անդամների ծառայություններ)
- **Առցանց.** լրացրեք գանգատի ձևաթուղթն առցանց՝ **kp.org** (անգլերեն) կայքում

Ինչ անել, եթե համաձայն չեք բողոքարկման որոշման հետ

Եթե Դուք բողոքարկման հայց եք ներկայացրել և մեզանից Բողոքարկման վճռի ծանուցման «NAR» նամակ եք ստացել, որում ասվում է, որ մենք չենք փոխել մեր որոշումը, կամ Դուք NAR նամակ ընդհանրապես չեք ստացել, և արդեն 30 օր է անցել, Դուք կարող եք՝



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

- Կալիֆոռնիայի Սոցիալական ծառայությունների բաժնից (California Department of Social Services, «CDSS») **Նահանգային լսում** խնդրեք, և դատավորը կուսուժասարի Ձեր գործը: CDSS-ի անվճար հեռախոսահամարն է՝ **1-800-743-8525** (TTY **1-800-952-8349**): Կարող եք նաև Նահանգային լսում խնդրել առցանց՝ <https://www.cdss.ca.gov> կայքում (անգլերեն):
- Դուք կարող եք Անկախ բժշկական վերանայման/Բողոքի ձևաթուղթ ներկայացնել Կառավարվող առողջապահական ինստիտուտի բաժին («DMHC»), որպեսզի վերանայեն մեր որոշումը: Կամ խնդրել **Անկախ բժշկական վերանայում** («IMR») DMHC-ից: DMHC-ի IMR-ի գործընթացի ընթացքում արտաքին բժիշկը, որը Kaiser Permanente-ի մաս չէ, կվերանայի ձեր գործը և որոշում կկայացնի, որը մենք պետք է կատարենք: DMHC-ի անվճար հեռախոսահամարն է՝ **1-888-466-2219** (TTY **1-877-688-9891**): Դուք կարող եք գտնել Անկախ բժշկական վերանայման/բողոքի ձևը և հրահանգները առցանց՝ DMHC-ի կայքում՝ <https://www.dmhc.ca.gov/> (անգլերեն):

Դուք ստիպված չեք վճարել Նահանգային լսման և IMR-ի համար:

Դուք իրավասու եք թե՛ Նահանգային լսման, թե՛ IMR-ի համար: Սակայն, եթե Դուք սկզբից Նահանգային լսում եք խնդրում, և լուսն արդեն տեղի է ունեցել, Դուք չեք կարող IMR խնդրել: Այդ դեպքում վերջին խոսքը Նահանգային լսմանը կլինի:

Ստորև բաժինները լրացուցիչ տեղեկություն են պարունակում, թե ինչպես Նահանգային լսում կամ IMR խնդրել:

Medi-Cal Rx դեղատան նմաստի վերաբերյալ բողոքները և բողոքարկումները չեն լուծվում Kaiser Permanente-ի կողմից: Medi-Cal Rx-ի դեղերի նպաստների հետ կապված բողոքներն ու բողոքարկումները կարող եք ներկայացնել՝ զանգահարելով **1-800-977-2273** (TTY **1-800-977-2273** և **հավաքեք 5** կամ **711**): Medi-Cal Rx-ին ոչ ենթակա դեղերի նպաստների հետ կապված բողոքները և բողոքարկումները կարող են որակավորվել Անկախ բժշկական վերանայման («IMR») համար: Եթե համաձայն չեք Ձեր Medi-Cal Rx-ի դեղատան նպաստի հետ կապված որոշմանը, Դուք կարող եք Նահանգային լսում խնդրել: Medi-Cal Rx դեղատան նպաստի որոշումները ենթակա չեն IMR գործընթացին DMHC-ի միջոցով:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ kp.org (անգլերեն)

Բողոքներ և Անկախ բժշկական վերանայումներ («IMR») Կառավարվող առողջապահական խնամքի բաժնի միջոցով

IMR-ն այն է, երբ դրսից մի բժիշկ, ով առնչություն չունի առողջապահական ծրագրի հետ, ուսումնասիրում է Ձեր գործը: Եթե Դուք IMR եք ցանկանում, պետք է նախ բողոքարկման հայց ներկայացնեք մեզ: Եթե մեզանից 30 օրվա ընթացքում պատասխան չստանաք կամ մեր ընդունած որոշումը Ձեզ չբավարարի, կարող եք դիմել IMR-ի համար: Դուք պետք է IMR-ի համար դիմեք բողոքարկման որոշման ծանուցման ամսաթվից հետո 6 ամսվա ընթացքում: Դուք ունեք միայն 120 օր Նահանգային լսում խնդրելու համար, հետևաբար, եթե ցանկանում եք ն՝ IMR, ն՝ Նահանգային լսում, ապա ուղարկեք Ձեր բողոքը որքան հնարավոր է շուտ: Հիշեք, եթե Դուք սկզբից Նահանգային լսում եք խնդրում, և լսումն արդեն տեղի է ունեցել, Դուք չեք կարող IMR խնդրել: Այդ դեպքում վերջին խոսքը Նահանգային լսմանը կլինի:

Հնարավոր է, որ Դուք IMR-ի իրավունք ունենաք անմիջապես՝ առանց նախ Kaiser Permanente-ին բողոքարկում ներկայացնելու: Սա այն դեպքերում է, երբ Ձեր առողջական մտահոգությունը հրատապ է, օրինակ այն դեպքերում, երբ Ձեր առողջությանը լուրջ վտանգ է սպառնում, կամ եթե Ձեզ ծառայություն է մերժվել, քանի որ այն փորձառական կամ հետազոտական բնույթի է:

Եթե Ձեր բողոքը DMHC-ին չի որակավորվում IMR-ի համար, DMHC միևնույն է կվերանայի Ձեր բողոքը՝ համոզվելու համար, որ մենք ճիշտ որոշում ենք կայացրել, երբ Դուք բողոքարկել էիք ծառայությունների մերժումը: Մենք պետք է ենթարկվենք DMHC-ի IMR և վերանայման որոշումներին:

Ահա, թե ինչպես IMR խնդրել:

Կալիֆորնիայի Կառավարվող առողջապահական խնամքի բաժանմունքը պատասխանատու է առողջապահական խնամքի ծառայության ծրագրերի կարգավորման համար: Եթե Դուք Ձեր առողջապահական ծրագրի դեմ զանգատ ունեք, Դուք առաջին հերթին պետք է զանգահարեք Ձեր առողջապահական ծրագրին՝ **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով և օգտագործեք Ձեր առողջապահական ծրագրի բողոքարկման ընթացակարգը՝ մինչ բաժնի հետ կապվելը: Բողոքարկման այս ընթացակարգից օգտվելը չի գրկի ձեզ հնարավոր որևէ այլ օրինական իրավունքներից կամ միջոցներից: Եթե բողոք ներկայացնելու օգնության կարիք ունեք, որը կապված է արտակարգ դեպքի հետ, բողոք, որը բավարար կերպով չի լուծվել ձեր



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

առողջապահական ծրագրի կողմից, կամ բողոք, որը չի լուծվել ավելի քան 30 օրվա ընթացքում, կարող եք զանգահարել բաժանմունք օգնության համար: Դուք կարող եք նաև իրավասու լինել Անկախ բժշկական վերանայման («IMR») համար: Եթե որակավորվում եք IMR-ի համար, IMR գործընթացը կապահովի անկողնակալ վերանայում այն բժշկական որոշումների, որոնք ընդունվել են առողջապահական ծրագրի կողմից՝ կապված առաջարկված ծառայության կամ բուժման բժշկական անհրաժեշտության հետ, ապահովագրության որոշումների այն բուժումների վերաբերյալ, որոնք փորձնական են կամ հետազոտական բնույթի, ինչպես նաև վճարման հետ կապված վեճերի շտապ օգնության կամ հրատապ բժշկական ծառայությունների համար: Բաժանմունքն ունի նաև անվճար հեռախոսահամար (1-888-466-2219) և TDD գիծ (1-877-688-9891) լսողության կամ խոսքի խնդիրներ ունեցողների համար: Բաժնի կայքում՝ <https://www.dmhc.ca.gov> (անգլերեն), կարելի է գտնել բողոքի ձևաթղթերը, IMR-ի դիմումի ձևաթղթերը և առցանց հրահանգները:

Նահանգային լսումներ

Նահանգային լսումը հանդիպում է Կալիֆորնիայի Սոցիալական ծառայությունների բաժնի («CDSS») դատավորի և մեր միջև: Դատավորը կօգնի լուծել Ձեր խնդիրը կամ կասի Ձեզ, որ մենք ճիշտ որոշում ենք կայացրել: Դուք իրավունք ունեք Նահանգային լսում խնդրել, եթե արդեն բողոքարկում եք ներկայացրել Kaiser Permanente-ին, սակայն դեռ բավարարված չեք մեր որոշմամբ կամ, եթե Դուք չեք ստացել Ձեր բողոքարկման վերաբերյալ որոշում 30 օրվա ընթացքում:

Դուք պետք է Նահանգային լսում խնդրեք NAR նամակը ստանալու ամսաթվից 120 օրացուցային օրվա ընթացքում: Եթե մենք Ձեզ Վճարումն առկախ օգնություն տանք Ձեր բողոքարկման ընթացքում, և Դուք ցանկանում եք շարունակել այն մինչև Նահանգային լսման որոշումը ստանալը, Դուք պետք է Նահանգային լսում խնդրեք մեր Բողոքարկման իրավունքների ծանուցման («NAR») նամակից 10 օրվա ընթացքում, կամ նախքան այն ամսաթիվը, երբ մենք ասացինք, որ դադարեցվելու է Ձեր ծառայություն(ներ)ը, ինչը որ ավելի ուշ տեղի ունենա:

Եթե օգնության կարիք ունեք՝ համոզվելու, որ Վճարումն առկախ օգնությունը շարունակել է մինչև Նահանգային լսման վերջնական որոշումը ստանալը, զանգահարեք մեր Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**) հեռախոսահամարով: Ձեր լիազորված ներկայացուցիչը կամ մատակարարը կարող է նաև Նահանգային լսում ներկայացնել Ձեզ համար Ձեր գրավոր թույլտվությամբ:



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ kp.org (անգլերեն)

Երբեմն կարող եք Նահանգային լսում խնդրել առանց մեր բողոքարկման գործընթացը կատարելու: Օրինակ, կարող եք Նահանգանգային լսում խնդրել առանց մեր բողոքարկման գործընթացը կատարելու, եթե մենք ճիշտ կամ ժամանակին չենք տեղեկացրել Ձեզ Ձեր ծառայությունների մասին: Սա կոչվում է Համարված սպառում: Ահա Համարված սպառման մի քանի օրինակներ.

- Մենք չենք տրամադրել NOA կամ NAR նամակը Ձեր նախընտրած լեզվով:
- Մենք սխալ ենք թույլ տվել, որն ազդում է Ձեր իրավունքներից որևէ մեկի վրա:
- Մենք Ձեզ NOA նամակ չենք ուղարկել:
- Մենք Ձեզ NAR նամակ չենք ուղարկել:
- Մենք սխալ ենք թույլ տվել NAR նամակում:
- Մենք որոշում չենք կայացրել Ձեր բողոքարկման վերաբերյալ 30 օրվա ընթացքում:
- Մենք որոշել էինք, որ Ձեր գործը հրատապ էր, սակայն չէինք պատասխանել Ձեր բողոքարկմանը 72 ժամվա ընթացքում:

Դուք կարող եք Նահանգային լսում խնդրել հետևյալ կերպ.

- **Հեռախոսով.** գանգահարեք Նահանգային լսումների բաժին՝ **1-800-743-8525** (TTY **1-800-952-8349** կամ **711**):
- **Ֆաքսով.** լրացրեք Ձեր բողոքարկման վճռի ծանուցման հետ ուղարկված ձևաթուղթը և ֆաքսով ուղարկեք այն Նահանգային լսումների բաժին՝ **1-833-281-0905** հեռախոսահամարով:
- **Փոստով.** լրացրեք Ձեր բողոքարկման լուծման ծանուցման հետ ուղարկված ձևաթուղթը: Ուղարկեք այն հետևյալ հասցեով՝
California Department of Social Services
State Hearings Division
P.O. Box 944243, MS 09-17-3
Sacramento, CA 94244-2430
- **Առցանց.** առցանց լսում խնդրեք **www.cdss.ca.gov** կայքում (անգլերեն)

Եթե Ձեզ օգնություն է հարկավոր Նահանգային լսման համար դիմելու հարցում, մենք կարող ենք օգնել: Մենք կարող ենք Ձեզ անվճար լեզվական ծառայություններ տրամադրել:



Զանգահարեք մեր Անդամների ծառայությունների բաժին՝ **1-855-839-7613** (TTY **711**) հեռախոսահամարով:

Լսման ժամանակ Դուք կներկայացնեք հարցի Ձեր կողմը: Մենք՝ մեր կողմը: Դատավորին կարող է պահանջվել մինչև 90 օր գործի վերաբերյալ որոշում կայացնելու համար: Մենք պետք է ենթարկվենք դատավորի որոշմանը:

Եթե ցանկանում եք, որպեսզի CDSS-ն արագ որոշում կայացնի, քանզի Նահանգային լսման համար անհրաժեշտ ժամանակը կվտանգի Ձեր կյանքն, առողջությունը և լիովին գործելու կարողությունը, Դուք, Ձեր լիազորված ներկայացուցիչը կամ Ձեր մատակարարը կարող եք դիմել CDSS-ին և արագացված (արագ) Նահանգային լսում խնդրել: CDSS-ը պետք է որոշում կայացնի Ձեր ամբողջական գործի ֆայլը ստանալուց հետո 3 աշխատանքային օրից ոչ ուշ:

Խարդախություն, վատնում և չարաշահում

Եթե կասկածում եք, որ մատակարարը կամ որևէ այլ անձ, ով ստանում է Medi-Cal, կատարել է խարդախություն, սպառում կամ չարաշահում, ապա Դուք ունեք այն զեկուցելու իրավունք՝ զանգահարելով գաղտնի անվճար հեռախոսահամարով՝ **1-800-822-6222**, կամ բողոք ներկայացնելով առցանց՝ <https://www.dhcs.ca.gov> կայքում (անգլերեն):

Մատակարարի խարդախությունը, վատնումը և չարաշահումը ներառում է՝

- Բժշկական գրառումների կեղծում
- Ավելի շատ դեղամիջոցի նշանակում, քան դա Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է
- Ավելի շատ առողջապահական խնամքի ծառայությունների տրամադրում, քան դա Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է
- Հաշվի ներկայացում չմատուցված ծառայությունների համար
- Հաշվի ներկայացում մասնագետի ծառայությունների համար, երբ մասնագետը ծառայություններ չի մատուցել
- Անդամներին անվճար կամ զեղչով պարագաների կամ ծառայությունների առաջարկում՝ անդամի կողմից մատակարարի ընտրության վրա ազդելու նպատակով



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ kp.org (անգլերեն)

- Անդամի առաջնային խնամքի մատակարարի փոփոխություն՝ առանց անդամի գիտելիքի

Խարդախություն, վատնում և չարաշահում նպաստներ ստացող անձի կողմից ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալով՝

- Առողջապահական ծրագրի նույնականացման (Identification, ID) քարտը կամ Medi-Cal Նպաստների նույնականացման քարտը (Benefits Identification Card, BIC) մեկ այլ անձին ժամանակավորապես տրամադրելը, վաճառելը կամ տալը
- Նմանատիպ կամ միանման բուժուժների կամ դեղամիջոցների ստացում մեկից ավելի մատակարարներից
- Շտապ օգնության բաժանմունք այցելելը, երբ վիճակը շտապ օգնություն չի պահանջում
- Մեկ ուրիշի Սոցիալական ապահովության համարը կամ առողջապահական ծրագրի ID համարն օգտագործելը
- Օգտվել Բժշկական փոխադրումից և Ոչ բժշկական փոխադրումից առողջապահական խնամքին չվերաբերող ծառայությունների համար կամ Medi-Cal-ի կողմից չապահովագրվող ծառայությունների համար, կամ եթե չունեք բժշկական ժամադրություն կամ դեղատոմս, որը պետք է վերցնեք դեղատոմսից

Խարդախության, վատնման և չարաշահման մասին հայտնելու համար գրի առեք խարդախություն, վատնում և չարաշահում կատարած անձի անունը, հասցեն և ID համարը: Հնարավորինս շատ տեղեկություններ տրամադրեք անձի վերաբերյալ, օրինակ՝ հեռախոսահամար կամ մասնագիտացում, եթե նա մատակարար է: Ներկայացրեք դեպքերի ամսաթվերը և ամփոփ նկարագրեք, թե իրականում ինչ է կատարվել:

Եթե Դուք հնարավոր վատ վարքագծի նշաններ եք տեսնում, զանգահարեք Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (փակ է տոն օրերին): Կարող եք նաև գրավոր զեկույց ներկայացնել Անդամների ծառայությունների գրասենյակ: Մեր Անդամների ծառայությունների գրասենյակների վայրերը կարող եք գտնել Ձեր Medi-Cal Մատակարարների հասցեագրքում:

Պարտադրող իրավարարություն

Երբ որոշում եք անդամագրվել Kaiser Foundation Health Plan, Inc.-ին՝ որպես Medi-Cal առողջապահական ծրագիր, Դուք համաձայնվում եք պարտադրող իրավարարության վեճերը



Չանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Չանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

լուծելու համար: Սա պարտադիր քայլ է, նախքան կկարողանա անդամագրվել մեր Medi-Cal ծրագրին:

Պարտադրող իրավարարության ժամանակ երկու կողմն էլ հրաժարվում են դատարան դիմելու իրենց իրավունքից: Պարտադրող իրավարարությունը չեզոք երրորդ կողմի օգնությամբ խնդիրներ լուծելու եղանակ է: Այդ երրորդ կողմը լսում է երկու կողմերին և որոշում կայացնում, որը երկու կողմն էլ պարտավոր են ենթարկվել:

Որո՞նք են պարտադրող իրավարարության կանոնները:

Դատավարության կանոնները մշակվել են Իրավարարության խորհրդատու հանձնաժողովի կողմից՝ համագործակցելով Անկախ ադմինիստրատորի գրասենյակի («OIA») հետ՝ Kaiser Permanente-ի և այլ հետաքրքրված կողմերի մասնակցությամբ, և դրանք նկարագրում են, թե ինչպես են մշակվում իրավարարության գործերը: Այս կանոնները Կանոններն են Kaiser Permanente Անդամ Իրավարարության համար՝ վերահսկվելով Անկախ ադմինիստրատորի գրասենյակի կողմից: Այս կանոնները նաև կոչվում են Դատավարության կանոններ: OIA-ն անկողմնակալ, անկախ գրասենյակ է, որը տրամադրում է իրավարարություն Kaiser Foundation Health Plan, Inc.-ի և իր Կալիֆորնիայի առողջապահանա ծրագրի անդամների միջև: OIA-ն Kaiser Permanente-ի մաս չի կազմում: Կարող եք զանգահարել Անդամների ծառայություններ և խնդրել Դատավարության կանոնների պատճենը:

Իրավարարության շրջանակներ

Պարտադրող իրավարարությունը կիրառելի է ցանկացած վեճին, եթե բավարարված են հետևյալ բոլոր պահանջները՝

- Պահանջագիրը վերաբերում է՝
 - Բժշկի սխալին կամ անփույթ վերաբերմունքին (պահանջագիր առ այն, որ բժշկական ծառայությունները կամ պարագաներն անհրաժեշտ կամ արտոնված չեն եղել, կամ ոչ պատշաճ կերպով, անփութորեն կամ մասնակի են տրամադրվել), կամ
 - Ծառայությունների կամ պարագաների տրամադրմանը, կամ
 - Հիմնարկության պատասխանատվությանը
- Պահանջագիրը ներկայացվել է՝
 - Ձեր կողմից՝ մեր դեմ, կամ
 - Մեր կողմից՝ Ձեր դեմ



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

- Գործող օրենքը չի արգելում պարտադրող իրավարարության միջոցով լուծել պահանջագիրը

Հիշեք.

- Հայցերը, որոնք կարող են լուծվել Փոքր հայցերի դատարանի միջոցով, չեն մշակվում Պարտադրող իրավարարության կողմից:
- Դուք պարտավոր չեք պարտադրող իրավարարությունից օգտվել այն հայցերի համար, որոնք կարող են լուծում ստանալ Նահանգային լսման միջոցով
- Դուք չեք կարող օգտվել պարտադրող իրավարարությունից, եթե Դուք հայցի վերաբերյալ որոշումն ստացել եք Նահանգային լսման միջոցով:

Միայն այս «Պարտադրող իրավարարություն» բաժնում, «Դուք» նշանակում է՝

- Դուք (Անդամ)
- Ձեր իրավահաջորդը, ազգականը կամ որևէ այլ անձ, որին Դուք նշանակում եք Ձեր անունից հանդես գալու համար
- Որևէ մեկը, ով պնդում է, թե իր նկատմամբ պարտականություն կա, որի պատճառը մեզ հետ Ձեր հարաբերությունն է

Միայն այս «Պարտադրող իրավարարություն» բաժնում, «մեզ» կամ «մենք» նշանակում է՝

- Kaiser Foundation Health Plan, Inc. («KFHP»)
- Kaiser Foundation Hospitals («KFH»)
- Southern California Permanente Medical Group («SCPMG»)
- The Permanente Medical Group, Inc. («TPMG»)
- The Permanente Federation, LLC
- The Permanente Company, LLC
- SCPMG-ի կամ TPMG-ի բժիշկ
- Վերը նշված կողմերից որևէ մեկի հետ այնպիսի պայմանագիր կնքած անձ կամ կազմակերպություն, որը պահանջում է պարտադրող իրավարարության կիրառում
- Վերը նշված կողմերից որևէ մեկի աշխատակից կամ գործակալ



Դատավարության կանոններ

Պարտադրող իրավարարությունը վարվում է Դատավարության կանոնների համաձայն:

- Դատավարության կանոնները մշակվել են Իրավարարության խորհրդատու հանձնաժողովի կողմից՝ համագործակցելով Անկախ ադմինիստրատորի գրասենյակի («OIA») հետ՝ Kaiser Permanente-ի և այլ հետաքրքրված կողմերի մասնակցությամբ:
- Դուք կարող եք Դատավարության կանոնների կրկնօրինակը ստանալ Անդամների ծառայություններից՝ **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով:

Ինչպես իրավարարություն խնդրել

Պարտադրող իրավարարությունը խնդրելու համար, Դուք պետք է պաշտոնական խնդրանք ներկայացնեք: Սա կոչվում է Իրավարարության պահանջ և ներառում է՝

- Մեր դեմ Ձեր բողոքի նկարագրությունը
- Գումարը, որը Դուք պահանջում եք փաստի կամ վճռի համար
- Հայտ ներկայացնող բոլոր կողմերի անունները, հասցեները և հեռախոսի համարները: Եթե կողմերից որևէ մեկը փաստաբան ունի, նշեք նաև փաստաբանի անունը, հասցեն և հեռախոսի համարը
- Այն կողմերի անունները, ում դեմ Դուք ներկայացնում եք պահանջագիրը

Միննույն միջադեպին վերաբերող բոլոր պահանջագրերը պետք է նույն դիմումի մեջ ընդգրկվեն:

Եթե մենք Ձեր դեմ հայց ենք ներկայացնում, մենք պետք է հետևենք նույն քայլերին, որոնք նկարագրված են պաշտոնական խնդրանք ներկայացնելու գործընթացում:

Որտեղ ուղարկել Իրավարարության պահանջը

Եթե Դուք բողոք եք ներկայացնում KFHP-ի, KFH-ի, SCPMG-ի, TPMG-ի, The Permanente Federation, LLC-ի կամ The Permanente Company, LLC-ի դեմ, իրավարարության դիմումը փոստով ուղարկեք հետևյալ հասցեով՝

Kaiser Permanente
Legal Department
1950 Franklin St., 17th Floor
Oakland, CA 94612



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայությունների՝ **1-855-839-7613 (TTY 711)**: Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Եթե Դուք պահանջագիր եք ներկայացնում որևէ այլ կողմի դեմ, ապա հարկավոր է վերջինիս տեղյակ պահել այդ մասին՝ Կալիֆորնիայի Քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջների համաձայն:

Հայցը ներկայացված է համարվում այն ժամանակ, երբ մենք ստանում ենք Իրավարարության դիմումը:

Եթե մենք Ձեզ դեմ հայց ենք ներկայացնում, մենք փոստով կուղարկենք Իրավարարության պահանջը Ձեր հասցեին:

Պարտադրող իրավարարության ծախսերը

Հայց ներկայացնելու վարձ

Յուրաքանչյուր Իրավարարության պահանջն արժի \$150, որը պետք է վճարվի «Arbitration Account» անունով, և գումարը չի փոփոխվում՝ անկախ Ձեր խնդրանքում հայցերի կամ կողմերի քանակից: Դիմումի ներկայացման վարձը չի փոխհատուցվում:

Եթե Դուք չեք կարող վճարել պարտադրող իրավարարության վարձի Ձեր բաժինը, կարող եք Անկախ ադմինիստրատորի գրասենյակից խնդրել, որ Ձեզ ազատի վճարումից: Դա անելու համար հարկավոր է Վճարումից ազատման ձևաթուղթ լրացնել և ուղարկել՝

- Անկախ ադմինիստրատորի գրասենյակ և
- Այն կողմերին, ում դեմ Դուք ներկայացնում եք պահանջագիրը

Վճարումից ազատման ձևաթուղթը՝

- Տեղեկացնում է Ձեզ՝ ինչպես է Անկախ ադմինիստրատորը որոշում, թե արդյոք կարելի է ազատել վճարումից
- Տեղեկացնում է, թե ինչ վճարներից կարելի է ազատվել

Դուք կարող եք Վճարումից ազատման ձևաթղթի կրկնօրինակը ստանլ Անդամների ծառայություններից՝ **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով:

Իրավարարների վարձեր և ծախսեր

Որոշ դեպքերում մենք կվճարենք չեզոք իրավարարի վարձը: Պարզելու համար, թե երբ ենք մենք վճարելու, կարդացեք Դատավարության կանոնները: Դուք կարող եք Դատավարության



կանոնների կրկնօրինակը ստանալ Անդամների ծառայություններից՝ **1-855-839-7613** (TTY **711**) հեռախոսահամարով: Մնացած բոլոր դեպքերում այս ծախսը բաժանվում է երկու կողմերի միջև: Եթե կողմերը իրավարարներ են ընտրվում, ապա յուրաքանչյուր կողմ վճարում է իր կողմի իրավարարի վարձը:

Արժեքներ

Սովորաբար յուրաքանչյուր կողմ պետք է վճարի պարտադրող իրավարարության իր ծախսերը, օրինակ՝ իրավաբանի վարձը, վկաների վարձը և այլ ծախսեր:

Իրավարարների քանակ

Որոշ գործեր լսվում են մեկ իրավարարի կողմից, որին համաձայնում են երկու կողմերը (անկողմնակալ իրավարար): Այլ դեպքերում կարող է լինել մեկ անկողմնակալ իրավարար և ամեն կողմի կողմից ընտրված իրավարար, որը կոչվում է կողմի իրավարար:

Գործերը, որոնք պահանջում են մինչև \$200,000 փաստի հատուցում, լսվում են մեկ անկողմնակալ իրավարարի կողմից, որը անկողմնակալ է փուլ: Այդ դեպքերում երկու կողմերը կարող են համաձայնվել ավելացնեն երկու կողմի իրավարարներ՝ ընդհանուր երեք իրավարար: Մեկից ավելի իրավարարների վերաբերյալ համաձայնությունը պետք է կայացվի Իրավարարության պահանջը ներկայացնելուց հետո: Երբ կան երեք իրավարարներ, մեկական իրավարար ներկայացնում է յուրաքանչյուր կողմը, իսկ երրորդն՝ անկողմնակալ է: Իրավարար(ներ)ը չի/չեն կարող շնորհել ավելի քան \$200,000:

\$200,000-ից ավելի պահանջող դեպքերը պետք է վերանայվեն երեք իրավարարների կողմից՝ մեկ անկողմնակալ և երկու կողմի իրավարարներ՝ ընտրված յուրաքանչյուր կողմի կողմից: Յուրաքանչյուր կողմ կարող է հրաժարվել իրավարարի կողմից ներկայացված լինելու իրավունքից: Վեճի երկու կողմերն էլ պետք է համաձայնեն, որպեսզի գործը լսի մեկ անկողմնակալ իրավարար: Մեկ անկողմնակալ իրավարարի վերաբերյալ համաձայնությունը պետք է կայացվի Իրավարարության պահանջը ներկայացնելուց հետո:

Ընդհանուր դրույթներ

Դուք չեք կարող պարտադրող իրավարարություն պահանջել, եթե քաղաքացիական վարույթում տվյալ պահանջագրի կապակցությամբ հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետներն անցել են:

Ձեր պահանջագիրը փակված կհամարվի, եթե տեղի ունենա հետրյալից որևէ մեկը՝



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

6 | Խնդիրների մասին տեղեկացնելն ու դրանք լուծելը

- Դուք չեք հետևել Դատավարության կանոններին
- Գործի լսումը տեղի չի ունեցել, և ավելի քան հինգ տարի է անցել ստորև նշվածներից այն պայմանից, որն առաջինն է տեղի ունեցել`
 - Այն օրվանից, երբ Դուք Իրավարարության դիմում եք ներկայացրել, կամ
 - Այն օրվանից, երբ Դուք քաղաքացիական հայց եք ներկայացրել նույն միջադեպի կապակցությամբ

Չեզոք իրավարարը կարող է նաև այլ պատճառներով փակել Ձեր պահանջագիրը: Դա անելու համար բավարար հիմք է հարկավոր ունենալ:

Եթե կողմերից մեկը չներկայանա գործի լսմանը, չեզոք իրավարարը կարող է գործի կապակցությամբ որոշում ընդունել տվյալ կողմի բացակայությամբ:

Օրենքով թույլատրված կարգով` Կալիֆորնիայի Բժշկական ժառանգությունների փոխհատուցման ռեֆորմի մասին օրենքի (իր լրացումներով) դրույթները տարածվում են պահանջագրերի վրա, օրինակ`

- Ձեզ կատարված ապահովագրական կամ հաշմանդամության նպաստների վճարումների ապացույց ներկայացնելու իրավունքը
- Առավելագույն գումարի սահմանաչափերը, որոնք Դուք կարող եք ստանալ ոչ տնտեսական բնույթի կորուստների համար
- Ապագա ժառանգների համար պարբերաբար վճարումների տեսքով փոխհատուցում ստանալու իրավունքը

Իրավարարությունն իրականացվում է «Պարտադրող իրավարարություն» բաժնի պայմանների համաձայն: Իրավարարության վրա տարածվում են նաև հետևյալ չափորոշիչները, եթե դրանք չեն հակասում այս բաժնի պահանջներին`

- Իրավարարության մասին դաշնային օրենքի 2-րդ հատվածը
- Կալիֆորնիայի Քաղաքացիական դատավարության օրենքը
- Դատավարության կանոնները



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ` **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց` **kp.org** (անգլերեն)

7. Իրավունքներ և պարտականություններ

Դուք՝ որպես Kaiser Permanente-ի Անդամ, ունեք որոշակի իրավունքներ և պարտականություններ: Այս գլխում բացատրվում են այդ իրավունքներն ու պարտականությունները: Այս գլուխը ներառում է նաև իրավական ծանուցումներ, որոնց իրավունքը Դուք ունեք որպես Kaiser Permanente-ի Անդամ:

Ձեր իրավունքները

Սրանք Ձեր՝ որպես Kaiser Permanente անդամի, իրավունքներն են.

- Հարգալից և արժանապատիվ վերաբերմունք՝ հաշվի առնելով գաղտնիության և Ձեր բժշկական գրառումները գաղտնի պահելու անհրաժեշտության իրավունքի պատշաճ պահպանումը
- Առողջական ծրագրի, նրա ծառայությունների, ներառյալ՝ Ապահովագրված ծառայությունների, Medi-Cal Ցանցի մատակարարների և անդամի իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում
- Ստանալ թարգմանված գրավոր անդամի տեղեկատվություն Ձեր նախընտրած լեզվով, ներառյալ բոլոր գանգատների և բողոքարկումների ծանուցումները
- Անդամի իրավունքների ու պարտականությունների քաղաքականության վերաբերյալ առաջարկություններ անելը
- Մեր Medi-Cal մատակարարների ցանցի ներսում առաջնային խնամքի մատակարարների ընտրության հնարավորություն
- Medi-Cal Ցանցի մատակարարների ժամանակին մատչելիություն
- Ձեր սեփական առողջապահական խնամքի վերաբերյալ որոշումների կայացման մասնակցություն մատակարարների հետ, ներառյալ՝ հրաժարում բուժումից



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

- Կազմակերպության կամ Ձեր կողմից ստացված խնամքի վերաբերյալ բանավոր կամ գրավոր բողոքի հայտնում
- Բժշկական խնամքի հայցը մերժելու, հետաձգելու դադարեցնելու կամ փոխելու մեր որոշման բժշկական պատճառներն իմանալը
- Խնամքի համակարգում ստացում
- Ծառայությունների և նպաստների մերժման, դադարեցման կամ սահմանափակման վերաբերյալ բողոքարկման հայցում
- Ձեր լեզվով անվճար բանավոր և գրավոր թարգմանչական ծառայությունների ստացում
- Իրավաբանական գրասենյակում կամ այլ խմբերի կողմից տրամադրվող անվճար իրավաբանական օգնության ստացում
- Նախնական կարգադրումների ձևակերպում
- Խնդրելու Նահանգային լսում, եթե ծառայությունը կամ նպաստը մերժված է, և Դուք արդեն բողոքարկում եք ներակայացրել մեզ, սակայն դժգոհ եք որոշումից, կամ եթե Ձեր բողոքարկման մասին որոշում չեք ստանել 30 օրվա ընթացքում, ներառյալ արագացված լսում խնդրում մասին տեղեկատվություն
- Ձեր բժշկական գրառումները տեսնել և, իրավական համապատասխանության դեպքում, դրանց կրկնօրինակը ստանալ, դրանք փոփոխել կամ ուղղել
- Ապանդամագրվել Kaiser Permanente-ից և փոխվել մեկ այլ կառավարվող խնամքի ծրագիր Ձեր բնակության վարչաշրջանում
- Անչափահասի համաձայնության ծառայությունների հասանելիություն
- Ցանկության դեպքում ստանալ անվճար գրավոր անդամների տեղեկատվություն այլ ձևաչափերով, օրինակ՝ բրայլ, մեծ տառատեսակով տպված և ձայնագրություն և մատչելի էլեկտրոնային ձևաչափեր, և ողջամիտ ժամանակահատվածում, երբ կարելի է ակնկալել ձևաչափի տրամադրում՝ համաձայն Բարեկեցության և հաստատությունների (Welfare and Institutions, «W&I») մասին օրենքի մաս 14182 (b)(12)-ի
- Ձերձ ֆսալ ցանկացած զսպումից կամ մեկուսացումից, որն օգտագործվում է որպես պարտադրման, կարգապահության, հարմարավետության կամ վրեժխնդրության միջոց
- Ազնվորեն տեղեկություններ քննարկել բուժման մատչելի տարբերակների և այլընտրանքների մասին, որոնք ներկայացվում են Ձեր վիճակին և հասկանալու կարողությանը համապատասխան՝ անկախ ապահովագրման արժեքից
- Ունենալ հասանելիություն և ստանալ Ձեր բժշկական գրառումների պատճեն և խնդրել, որպեսզի դրանց մեջ փոփոխություններ կատարվեն կամ ուղղվեն, ինչպես



սահմանված է 45 Դաշնային կարգավորումների մասին օրենքի (Code of Federal Regulations, «CFR») §164.524 և 164.526 բաժիններով

- Ազատություն այդ իրավունքների կիրառման մեջ, առանց բացասական կերպով ազդելու Kaiser Permanente-ի, մատակարարների կամ նահանգի կողմից Ձեր հանդեպ վերաբերմունքի վրա
- Հասանելիություն ունենալ ընտանիքի պլանավորման ծառայություններին, Անկախ ծծնդական կենտրոններին, Դաշնային որակավորված առողջապահական կենտրոններին, Հնդկացիների առողջապահական խնամքի մատակարարներին, մանկաբարձական ծառայություններին, Գյուղական առողջապահական կենտրոններին, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների ծառայություններին և Շտապ օգնության ծառայություններին մեր ցանցից դուրս՝ համաձայն դաշնային օրենքի
- Իմանալ Ձեզ խնամք տրամադրող անձանց անունները, և թե ինչ տիպի մասնագիտական պատրաստություն են նրանք ստացել
- Խնամքի ստացում այնպիսի վայրում, որն ապահով է, անվտանգ, մաքուր և մատչելի
- Որևէ պահի Medi-Cal ցանցի մատակարարից երկրորդ կարծիքի ստացում

Ձեր պարտականությունները

Kaiser Permanente-ի Անդամներն ունեն հետևյալ պարտականությունները՝

- Կարդալ այս Անդամի ձեռնարկը՝ իմանալու համար, թե ինչ ապահովագրություն ունեք և ինչպես ծառայություններ ստանալ
- Համապատասխան կերպով օգտագործել Ձեր նույնականացման (Identification, ID) քարտը: Խնամք ստանալու համար այցելություն կատարելիս Ձեզ հետ բերեք Kaiser Permanente-ի Ձեր ID քարտը, լուսանկար պարունակող որևէ ID և Medi-Cal-ի ID քարտը
- Ներկայանալ նշանակված ժամադրություններին
- Ձեր առաջնային խնամքի մատակարարին (Primary Care Provider, PCP) տեղյակ պահել Ձեր առողջական վիճակի և առողջության պատմության մասին
- Հետևել այն խնամքի ծրագրին, որը Դուք և Ձեր PCP-ն համաձայնեցրել եք իրար հետ
- Ընդունել, որ Ձեր ապրելակերպն ազդում է Ձեր առողջության վրա



Զանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY **711**): Զանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

- Հարգալից լինել ցանցի բժիշկների, առողջապահական խնամք տրամադրող այլ անձնակազմի և Անդամների նկատմամբ
- Վճարել Medi-Cal-ի կողմից չվճարվող ծառայությունների համար
- Խնդիրները լուծել այն եղանակներով, որոնք նկարագրված են այս Անդամի ձեռնարկում
- Տեղեկացնել մեզ, եթե Ձեզ ընդունում են ցանցից դուրս գործող հիվանդանոց

Խտրականության բացառման ծանուցում

Խտրականությունը հակաօրինական է: Kaiser Permanente-ն հետևում է նահանգային և դաշնային քաղաքացիական իրավունքների օրենքներին:

Kaiser Permanente-ն անօրինականորեն խտրականություն չի դրսևորում, մարդկանց չի բացառում կամ այլ կերպ նրանց չի վերաբերվում՝ հիմնվելով նրանց տարիքի, ռասայի, էթնիկ խմբի ինքնության, մաշկի գույնի, ազգային պատկանելիության, մշակութային ծագման, նախահայրերի, կրոնի, սեռի, գենդերի, գենդերային ինքնության, գենդերային արտահայտման, սեռական կողմնորոշման, ընտանեկան կարգավիճակի, ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամության, բժշկական վիճակի, վճարման աղբյուրի, գենետիկ տեղեկատվության, քաղաքացիության, առաջնային լեզվի կամ գաղթականի կարգավիճակի վրա:

Kaiser Permanente-ը տրամադրում է հետևյալ ծառայությունները.

- Անվճար օգնություն և ծառայություններ հաշմանդամ անձանց՝ մեզ հետ արդյունավետ հաղորդակցվելու նպատակով, ինչպես օրինակ՝
 - Որակավորված նշանների լեզվի թարգմանիչներ
 - Գրավոր տեղեկություններ այլ ձևաչափերով (բրայլ, մեծ տառատեսակ, աուդիո, հասանելի էլեկտրոնային ձևաչափեր և այլ ձևաչափեր)
- Անվճար լեզվական ծառայություններ այն անձանց, ում համար անգլերենն առաջին լեզուն չէ, ինչպես օրինակ՝
 - Որակավորված բանավոր թարգմանիչներ
 - Այլ լեզուներով գրված տեղեկություններ



Եթե ձեզ անհրաժեշտ են այս ծառայությունները, զանգահարեք Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)**, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի փակ տոներից): Եթե լավ չեք լսում կամ խոսում, խնդրում ենք զանգահարել **711**:

Խնդրանքի դեպքում այս փաստաթուղթը մատչելի կլինի բրայլով, մեծ տառատեսակով, ձայնագրությամբ կամ էլեկտրոնային տարբերակով: Այս ձևաչափերից մեկով կամ այլ ձևաչափով պատճենը ստանալու համար խնդրում ենք զանգահարել Անդամների ծառայություններ և խնդրել ցանկալի ձևաչափը:

Ինչպես զանգատ ներկայացնել Kaiser Permanente-ին

Եթե կարծում եք, որ մենք չենք տրամադրել այս ծառայությունները կամ որևէ այլ ձևով ապօրինի խտրականություն ենք դրսևորել՝ հիմնվելով սեռի, ռասայի, մաշկի գույնի, կրոնի, նախահայրերի, ազգային ծագման, էթնիկ խմբի պատկանելիության, տարիքի, մտավոր հաշմանդամության, ֆիզիկական հաշմանդամության, բժշկական վիճակի, գենետիկ տեղեկատվության, ընտանեկան կարգավիճակի, գենդերի, գենդերային ինքնության կամ սեռական կողմնորոշման վրա, կարող եք զանգատ ներկայացնել Kaiser Permanente-ին: Խնդրում ենք զանգահարել Անդամների ծառայություններ, եթե զանգատ ներկայացնելու համար օգնության կարիք ունեք:

Դուք կարող եք խտրականության զանգատ ներկայացնել հետևյալ կերպ.

- **Հեռախոսով.** զանգահարեք Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացառությամբ՝ փակ է տոն օրերին)
- **Փոստով.** զանգահարեք մեզ **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով և խնդրեք Ձեզ ձևաթուղթ ուղարկել
- **Անձամբ.** լրացրեք Բողոքի կամ Նպաստի հայցի/խնդրանքի ձևաթուղթն անդամների սպասարկման գրասենյակում, որը գտնվում է Ծրագրի հաստատությունում (հասցեների համար տեսեք Ձեր Medi-Cal Մատակարարների հասցեագիրքը):
- **Առցանց.** լրացրեք առցանց ձևաթուղթը մեր **kp.org** կայքում (անգլերեն):



Կարող եք նաև ուղղակիորեն դիմել Kaiser Permanente-ի Քաղաքացիական իրավունքների համակարգողներին ներքոնշյալ հասցեներով՝

Attn: Kaiser Permanente Civil Rights Coordinator
Member Relations Grievance Operations
P.O. Box 939001
San Diego CA 92193

Ինչպես գանգատ ներկայացնել Կալիֆորնիայի Առողջական խնամքի ծառայությունների բաժնի Քաղաքացիական իրավունքների գրասենյակ (միայն Medi-Cal նպաստառուների համար)

Կարող եք Կալիֆորնիայի Առողջապահական խնամքի ծառայությունների բաժնի Քաղաքացիական իրավունքների գրասենյակ քաղաքացիական իրավունքների բողոք ներկայացնել գրավոր, հեռախոսով կամ էլ. փոստով.

- **Հեռախոսով.** գանգահարեք Առողջական խնամքի ծառայությունների բաժնի (Department of Health Care Services, DHCS) Քաղաքացիական իրավունքների գրասենյակ՝ **916-440-7370 (TTY 711) հեռախոսահամարով**
- **Փոստով.** լրացրեք բողոքի ձևաթուղթը կամ նամակ ուղարկեք այստեղ՝
Deputy Director, Office of Civil Rights
Department of Health Care Services
Office of Civil Rights
P.O. Box 997413, MS 0009
Sacramento, CA 95899-7413
Բողոքի ձևաթղթերը մատչելի են
http://www.dhcs.ca.gov/Pages/Language_Access.aspx (անգլերեն)
- **Առցանց.** էլ. նամակ ուղարկեք **CivilRights@dhcs.ca.gov** հասցեով

Ինչպես գանգատ ներկայացնել ԱՄՆ Առողջապահության և հանրային ծառայությունների բաժնի Քաղաքացիական իրավունքների գրասենյակ

Դուք կարող եք խտրականության վերաբերյալ գանգատ ներկայացնել ԱՄՆ Առողջապահության և մարդու ծառայությունների նախարարության Քաղաքացիական իրավունքների գրասենյակ: Կարող եք բողոք ներկայացնել հեռախոսով, գրավոր կամ առցանց.

- **Հեռախոսով.** գանգահարեք **1-800-368-1019 (TTY 711 կամ 1-800-537-7697) հեռախոսահամարով:**



- **Փոստով.** լրացրեք բողոքի ձևաթուղթը կամ նամակ ուղարկեք այստեղ՝
U.S. Department of Health and Human Services
200 Independence Avenue, SW
Room 509F, HHH Building
Washington, D.C. 20201
Բողոքի ձևաթղթերը մատչելի են՝
<http://www.hhs.gov/ocr/office/file/index.html> հասցեով (անգլերեն)
- **Առցանց.** այցելեք Քաղաքացիական իրավունքների գրասենյակի Բողոքների պորտալը՝ **<https://ocrportal.hhs.gov/ocr/cp>** հասցեով (անգլերեն)

Ինչպես ներգրավվել որպես Անդամ

Մենք ցանկանում ենք լսել Ձեր կարծիքը: Ամեն քարոզի մենք կազմակերպում ենք հանդիպումներ՝ խոսելու համար, թե ինչ դրական բաներ կան և ինչը պետք է բարելավել: Անդամներին հրավիրում ենք մասնակցել: Մասնակցեք հանդիպմանը:

Medi-Cal Սպառողի խորհրդատվական կոմիտե

Մենք մի խումբ ունենք Կալիֆորնիայի յուրաքանչյուր տարածքում, որը կոչվում է Սպառողի խորհրդատվական կոմիտե (Consumer Advisory Committee, «CAC»): Այս խումբը կազմված է Անդամներից, մատակարարներից և համայնքային կազմակերպություններից: Ցանկության դեպքում կարող եք միանալ այս խմբին: CAC-ը կարծիք և խորհրդատվություն է տրամադրում Kaiser Foundation Health Plan, Inc.-ի Տնօրեններին խորհրդին այն մասին, թե ինչպես է կարելի բարելավել Medi-Cal Անդամների սպասարկումը: Կալիֆորնիայի յուրաքանչյուր տարածքում կա մեկ կոմիտե:

Կալիֆորնիայի տարածքներից որևէ մեկում Medi-Cal Սպառողի խորհրդատվական կոմիտեի մասին մանրամասների համար խնդրում ենք դիմել Medi-Cal Խնամքի առաքման և աշխատանքային թիմին՝

- **Էլ.փոստով. MediCalCommunity@kp.org**
- **Փոստով.**
Kaiser Permanente
393 E. Walnut St.
Pasadena, CA 91188
ATTN: Medi-Cal Care Delivery and Operations Team 5th floor/CAC



Չանգահարեք Kaiser Permanente Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613** (TTY 711): Չանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն)

Գաղտնիության պահպանման գործելակերպի ծանուցագիր

Բժշկական գրառումների գաղտնիությունը պահպանելու Kaiser Permanente-ի քաղաքականությունները և ընթացակարգերը նկարագրող հայտարարությունը մատչելի է և կարող է տրամադրվել Ձեզ խնդրանքի դեպքում:

Եթե Դուք զգայուն ծառայություններին համաձայնություն տալու տարիքի և ունակության եք, Ձեզանից չի պահանջվում ստանալ որևէ այլ անդամի լիազորում զգայուն ծառայություններ ստանալու համար կամ դրանց համար ներկայացնելու նպատակով: Մանրամասների համար կարողացեք այս ձեռնարկի «Զգայուն խնամք» հատվածը:

Կարող եք մեզանից խնդրել զգայուն ծառայությունների մասին հաղորդագրությունն ուղարկել մեկ այլ փոստային հասցեով, էլ. փոստի հասցեով կամ հեռախոսահամարով: Սա կոչվում է «գաղտնի հաղորդակցության խնդրանք»: Եթե խնդրում եք գաղտնի հաղորդակցություն, մենք որևէ մեկին չենք տա Ձեր զգայուն ծառայությունների մասին տեղեկություններ՝ առանց Ձեր գրավոր թույլտվության: Եթե Դուք մեզ փոստային հասցե, էլ. փոստի հասցե կամ հեռախոսահամար չտրամադրեք, մենք կուղարկենք Ձեզ հաղորդակցությունը Ձեր անունով այն հասցեին կամ հեռախոսով, որը Ձեր ֆայլում է:

Մենք Ձեզ կշնորհենք Ձեր խնդրած գաղտնի հաղորդակցության ֆորմատը և ձևը: Կամ մենք կապահովենք, որ Ձեր հաղորդակցությունը կարող է հեշտությամբ վերարտադրվել Ձեր խնդրած ֆորմատով և ձևով: Մենք կուղարկենք դրանք Ձեր ուզած տեղը: Գաղտնի հաղորդակցության Ձեր խնդրանքը տևում է այնքան ժամանակ, քանի Դուք չեք չեղարկում այն կամ ներկայացնում նոր խնդրանք:

Դուք կարող եք խնդրել գաղտնի հաղորդակցության առաքում Ձեր սովորական հասցեից բացի մեկ այլ վայր կամ սովորական միջոցից բացի մեկ այլ միջոցով: Դուք կարող եք խնդրել գաղտնի հաղորդակցություն՝ լրացնելով Գաղտնի հաղորդակցության խնդրանքի ձևը: Ձևը մատչելի է **kp.org** կայքում (անգլերեն)՝ Request for confidential communications forms" («Գաղտնի հաղորդակցության ձևերի խնդրանք») ներքո: Գաղտնի հաղորդակցության Ձեր խնդրանքը վավեր կլինի այնքան ժամանակ, քանի դեռ չեք ասել մեզ, որ դադարեցնենք այդ ձևի օգտագործումը կամ գաղտնի հաղորդակցության նոր խնդրանք չուղարկեք: Եթե ունեք հարցեր, խնդրում ենք զանգահարել Անդամների ծառայություններ:



Kaiser Permanente-ն կպաշտպանի Ձեր առողջությանը վերաբերող պաշտպանված առողջական տեղեկությունների (protected health information, «PHI») գաղտնիությունը: Բացի այդ, մենք պահանջում ենք, որ մեզ հետ պայմանագիր կնքած բոլոր մատակարարները նույնպես պահպանեն Ձեր PHI-ի գաղտնիությունը: Ձեր PHI-ը Ձեր ինքնությունը բացահայտող տեղեկություններն են (բանավոր, գրավոր կամ էլեկտրոնային տեսքով) Ձեր առողջության, Ձեր ստացած առողջապահական խնամքի ծառայությունների կամ Ձեր առողջապահական խնամքի համար կատարված վճարումների մասին:

Որպես կանոն՝ Դուք կարող եք ծանոթանալ Ձեր PHI-ին ու ստանալ դրա կրկօրինակը, ուղղումներ կատարել ու նոր տվյալներ ավելացնել Ձեր PHI-ին և խնդրել մեզ, որ Ձեզ հաշվետվություն տրվի Ձեր PHI-ի որոշ տիպի բացահայտումների վերաբերյալ: Դուք կարող եք խնդրել գաղտնի հաղորդակցության առաքում Ձեր սովորական հասցեից բացի մեկ այլ վայր կամ սովորական միջոցից բացի մեկ այլ միջոցով:

Մենք կարող ենք Ձեր PHI-ն օգտագործել կամ այլ անձանց ցույց տալ խնամքի, առողջապահական հետազոտությունների, վճարման կամ առողջապահական խնամքի միջոցառումների, օրինակ՝ խնամքի և ծառայությունների մակարդակն ուսումնասիրելու կամ գնահատելու նպատակով: Բացի այդ, ըստ օրենքի՝ մենք կարող ենք ստիպված լինել Ձեր PHI-ը տրամադրել իշխանություններին կամ դատական հետաքննությունների նպատակով:

Բացի այն դեպքերից, որոնք նկարագրված են մեր Գաղտնիության պահպանման գործելակերպի ծանուցման մեջ (տե՛ս ստորև) և Medi Cal-ի գաղտնիության պահպանման կանոններում, մենք որևէ այլ նպատակով չենք օգտագործի կամ բացահայտի Ձեր PHI-ն՝ առանց գրավոր թույլտվություն ստանալու Ձեզանից (կամ այն անձից, որին Դուք կնշանակեք Ձեր անունից հանդես գալու համար): Դուք պարտավոր չեք թույլ տալ Ձեր PHI-ի այդ մյուս օգտագործումը:

Եթե Դուք նկատեք, որ որևէ մեկը ոչ պատշաճ կերպով է օգտագործում Ձեր տեղեկությունները, զանգահարեք Անդամների ծառայություններ՝ **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով կամ Կալիֆորնիայի Առողջապահական խնամքի ծառայությունների բաժնի Գաղտնիության պահպանման պաշտոնյային՝ **1-866-866-0602** հեռախոսահամարով, տարբերակ 1(TTY **1-877-735-2929**): Կարող եք նաև էլեկտրոնային ուղերձ ուղարկել Կալիֆորնիայի Առողջապահական խնամքի ծառայությունների բաժնի՝ **privacyofficer@dhcs.ca.gov** հասցեով:



Սա մեր հիմնական գաղտնիության պահպանման գործելակերպի միայն հակիրճ նկարագրությունն է: ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ՄԵՐ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ, ՈՐԸ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ Է ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ՄԵՐ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ԵՎ ՁԵՐ PHI-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՄԱՏՉԵԼԻ Է ԵՎ ԿԱՐՈՂ Է ՏՐԱՄԱԴՐՎԵԼ ՁԵՁ ՊԱՀԱՆՁԻ ԴԵՊՔՈՒՄ: Զանգահարեք մեր Անդամների ծառայություններ **1-855-839-7613 (TTY 711)** հեռախոսահամարով՝ պատճենը ստանալու համար: Ծանուցումը կարող էք գտնել Kaiser Permanente-ի հաստատությունում կամ առցանց՝ **kp.org** հասցեով (անգլերեն):

Ծանուցում օրենքների մասին

Շատ օրենքներ են կիրառվում այս Անդամի ձեռնարկին: Այս օրենքները կարող են ազդել Ձեր իրավունքների և պարտականությունների վրա, անգամ եթե օրենքները ներառված կամ բացատրված չեն այս Անդամի ձեռնարկում: Այս Անդամի ձեռնարկին կիրառելի հիմնական օրենքները Medi-Cal ծրագրի մասին նահանգային և դաշնային օրենքներն են: Կարող են կիրառվել նաև այլ դաշնային և նահանգային օրենքներ:

